ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

# Վերլուծական տեղեկագիր

№ 16

Երևան – 2023

CENTER FOR CULTURE AND CIVILIZATION STUDIES

# Analytical Bulletin

№ 16

Yerevan 2023

ISSN 1829-4502

*Հրատարակվում է Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ:*

**<u>Խմբագրական խորհուրդ՝</u>**

***Գլխավոր խմբագիր՝***

*Դավիթ Հովհաննիսյան, բ.գ.դ., պրոֆեսոր | Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն, Հայաստան*

***Համախմբագիրներ՝***

*Հայկ Քոչարյան, պ.գ.թ., դոցենտ | ԵՊՀ, Հայաստան*
*Նաիրա Սահակյան, պ.գ.դ. | ԵՊՀ, Հայաստանի ամերիկյան համալսարան, Հայաստան (համարի պատասխանատու)*

***Գրքի գրախոսությունների խմբագիր՝***

*Նարեկ Սուքիասյան, բ.գ.թ. | ԵՊՀ, Հայաստան*

***Խորհուրդ՝***

*Ալեքսանդր Աղաջանյան, պ.գ.դ., պրոֆեսոր | Ռուսաստանի պետական հումանիտար համալսարան, Մոսկվա, Ռուսաստան*
*Այա Դարբինյան, պ.գ.դ. | Քլարկի համալսարան, ԱՄՆ*
*Գեորգի Դերլուգյան , ս.գ.դ., պրոֆեսոր| Աբու Դաբիում Նյու Յորքի համալսարան, Աբու Դաբի, ԱՄԷ*
*Սոնա Գրիգորյան, պ.գ.դ. | Կենտրոնական Եվրոպական Համալսարան, Վիեննա, Ավստրիա*
*Հովհաննես Հովհաննիսյան, պ.գ. դ. | ԵՊՀ, Հայաստան*
*Վասիլի Կուզնեցով, պ.գ.թ. | Արաբական եւ իսլամական հետազոտությունների կենտրոնի տնօրեն, ՌԴ ԳԱ*
*Աննա Օհանյան , բ.գ.դ., պրոֆեսոր| Սթոնհիլ Քոլեջ, ԱՄՆ*
*Սոնա Թաչիրյան, պ.գ.փ. | Ամերիկյայի գենոլոգիական ինստիտուտ, Կառլսբադ, Կալիֆորնիա, ԱՄՆ*
*Հրաչ Չիլինգիրիան, պ.գ.դ., պրոֆեսոր | Օքսֆորդի համալսարան, Օքսֆորդ, Մեծ Բրիտանիա*
*Սուրեն Զոլյան, բ.գ.դ., պրոֆեսոր| ՀՀ ԳԱԱ, Երևան, Հայաստան*

© Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն, 2023

ISSN 1829-4502

*Published by Scientific Council of Center for Culture and Civilization Studies*

**Editorial Board**

***Editors-in-Chief***

*Prof Dr Davit Hovhannisyan | Center for Culture and Civilization Studies, Yerevan, Armenia*

***Co-Editors***

*Dr Hayk Kocharyan | YSU, Yerevan, Armenia*

*Dr Naira E. Sahakyan | YSU, American University of Armenia, Armenia (volume coordinator)*

***Book Review Editor***

*Dr Narek Sukiasyan | YSU, Yerevan, Armenia*

***Board:***

*Prof Dr Alexander Agadjanian | Russian State University of Humanities, Moscow, Russia*

*Dr. Asya Darbinyan | Clark University, Massachusetts, USA*

*Prof Dr Georgi Derlugian | NYU Abu Dhabi, Abu Dhabi, UAE*

*Dr Sona Grigoryan | Central European University, Vienna, Austria*

*Dr. Hovhannes Hovhannisyan | YSU, Yerevan, Armenia*

*Dr. Vasily Kuznetsov | Center for Arab and Islamic Studies, Institute of Oriental Studies at the Russian Academy of Sciences, Moscow, Russia*

*Prof Dr Anna Ohanyan | Stonehill College, USA*

*Dr Sona Tajiryan | Gemological Institute of America, Carlsbad, California, USA*

*Prof Dr Hratch Tchilingirian| University of Oxford, Oxford, UK*

*Prof Dr Suren Zolyan | National Academy of Sciences of Armenia, Yerevan, Armenia*

© Center for Culture and Civilization Studies, 2023

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

*Աննա Գևորգյան*
ԿԱՐՄԻՐ ԳԾԵՐ ԵՎ ԿԱՆԱՉ ԼՈՒՅՍԵՐ. ԻՐԱՆԻ ԲԱԼԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ........ 7-32

*Տիգրան Չանդոյան*
ԻՍԼԱՄԻ ԴԵՐԸ ՔՐԴԱԿԱՆ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՄԵՋ ........ 33-54

*Հովհաննես Ջիջյան*
ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏԱՐԱԾՎՈՂ ԴԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԵՏԵՎՈՐԴՆԵՐԻ ՎՐԱ. ԱՌԱՋՆՈՐԴԻ ՍԵՌԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՆՐԱ ՎՐԱ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԵՆ ՀԵՏԵՎՈՐԴՆԵՐԸ ԸՆԿԱԼՈՒՄ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՋԵՐՄՈՒԹՅՈՒՆԸ ........ 55-78

*Մարինա Գալստյան*
ՀՀ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ. ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐ ........ 79-111

*Թագուհի Գրիգորյան*
ԿԱՏԱՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ (1995-2021) ........ 112-141

## ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

*Սևակ Քարամյան*
Սահակյան, Նաիրա. Խաղաղության հայկական զինը. 1917-ի հեղափոխություններն ու Հայաստանի ապագան հայ մտավորականների ընկալմամբ, Newmag, Երևան, 2023.- 304 էջ. - («Մինասյան» մատենաշար) ........ 142-152

**CONTENTS**


*Anna Gevorgyan*
RED LINES AND GREEN LIGHTS: IRAN'S BALANCING POLICY IN THE SOUTH CAUCASUS ........ 7-32

*Tigran Chandoyan*
THE ROLE OF ISLAM IN THE EMERGENCE OF KURDISH NATIONALISM ........ 33-54

*Hovhannes Jijyan*
THE EFFECTS OF CONSPIRACY THEORY SPREAD BY LEADERS DURING TIMES OF WAR: THE ROLE OF GENDER ON FOLLOWER PERCEPTIONS OF LEADER EFFECTIVENESS AND WARMTH ........ 55-78

*Marina Galstyan*
CIVIC AND POLITICAL PARTICIPATION OF ARMENIAN YOUTH IN THE POST-WAR REALITY: PERCEPTIONS AND PRACTICES ........ 79-111

*Taguhi Grigoryan*
*TRANSFORMATION OF QATAR'S FOREIGN POLICY (1995-2021)* ........ 112-141

**REVIEW**

*Sevak Karamyan*
Sahakyan, Naira. The Armenian Price of Peace: The Revolutions of 1917 and the Future of Armenia in the Perception of the Armenian Intelligentsia, Newmag, Yerevan, 2023. 304pp. ........ 142-152

DOI 10.56673/18294502-23.16-7

# ԿԱՐՄԻՐ ԳԾԵՐ ԵՎ ԿԱՆԱՉ ԼՈՒՅՍԵՐ. ԻՐԱՆԻ ԲԱԼԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ[1]

*Աննա Գևորգյան*[2]
*Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն*

**ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ**

Լեռնային Ղարաբաղի 2020 թվականի պատերազմից հետո Իրանի՝ Հայաստանի անվտանգության շահերի հետ համընկնող որոշ հայտարարությունների ու Ադրբեջանի հետ պարբերաբար բռնկվող «խոսքային պատերազմների» արդյունքում միջազգային ու հայաստանյան գիտավերլուծական դաշտում ի հայտ է եկել մոտեցում այն մասին, որ Իրանը կտրուկ փոխել է իր վերաբերմունքը Հարավային Կովկասի երկրների նկատմամբ:

Այս հոդվածը քննարկում է տարածաշրջանում Իրանի ընդհանուր աշխարհառազմավարական և անվտանգության շահերը՝ Իրան-Ադրբեջան հարաբերությունները վերլուծելով զգուշավոր ռեալիզմի տեսության միջոցով: Հոդվածը, պատերազմին հաջորդող ժամանակահատվածում Իրան-Ադրբեջան հարաբերությունները Իրանի անվտանգության շահերի դիտանկյունից քննարկելով, ցույց է տալիս, որ բալանսավորման քաղաքականությունը ինչպես կար, այնպես էլ մնում է Իրանի առանցքային հատկանիշը տարածաշրջանային քաղաքականության մեջ: Այդ քաղաքականության պահպանման համար Ադրբեջանի հետ հարաբերություններում Թեհրանը օգտագործում է և՛ հակընդդեմ սպառնալիքներ ստեղծելու, և՛ էլ ավելի մերձեցման քաղաքատնտեսական գործիքակազմ:

**ՀՈԴՎԱԾԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ**
Ներկայացվել է՝
20 մայիս 2023
Ընդունվել է՝
10 օգոստոս 2023

**ԲԱՆԱԼԻ ԲԱՌԵՐ**
Իրան, Հայաստան, Հարավային Կովկաս, անվտանգություն, վարձկաններ, Թուրքիա, Ադրբեջան, ԵՄ, գազ, նավթ, զգուշավոր ռեալիզմի տեսություն
***DOI: 10.56673/18294502-23.16-7***

## *Ներածություն*

Մինչև Ղարաբաղյան 2020 թվականի պատերազմը Իրան-Ադրբեջան հարաբերությունների մասին գիտական հոդվածները

---

[1] Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-5F251 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:
[2] Ավագ գիտաշխատող, Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն, էլ. փոստ anna.gevorgyan@ysu.am

մեծամասամբ երկրների միջև հարաբերությունների դրական դինամիկայի մասին էին[3]: Ղարաբաղյան պատերազմի ու նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունից հետո Իրանի քաղաքական խոսույթի վերլուծության մասին մի շարք հոդվածներ ու գրքեր մատնանշում են Իրանի տարածաշրջանային քաղաքականության փոփոխության մասին: Այդ փոփոխությունը, մասնավորապես, պայմանավորում են Իրան-Ադրբեջան հարաբերությունների սրմամբ ու Իրան-Հայաստան հարաբերությունների էլ ավելի կարևորմամբ[4]: Կան նաև այնպիսիք, որ փոփոխությունը նկարագրում են, ընդհակառակը, Իրան-Ադրբեջան ավելի սերտ հարաբերություններով[5]: Վերջիններիս թվում են այն հեղինակները, որոնք Իրանի տարածաշրջանային քաղաքականությունը վերլուծում են ոչ թե առանձին աշխարհաքաղաքական կամ տնտեսական դիտանկյուններից, այլ՝ միջազգային հարաբերությունների մեկ այլ ուղղության՝ աշխարհաքաղաքատնտեսության (geopolinomics) դիտանկյունից[6]: Որոշ հեղինակներ էլ պնդում են, որ «նոր իրողությունները» ստիպում են Թեհրանին տարածաշրջայնացման տարրեր մտցնել իր հարավկովկասյան քաղաքականության մեջ[7]:

Լեռնային Ղարաբաղի 2020 թվականի պատերազմից հետո Իրանի՝ Հայաստանի անվտանգության շահերի հետ համընկնող որոշ հայտարարությունների ու Ադրբեջանի հետ պարբերաբար բռնկվող «խոսքային պատերազմների» արդյունքում, զիտա-

[3] Taghi Davoodi, “Friendly Relations between Iran and Azerbaijan: A Review”, *Mediterranean Journal of Social Sciences* 7, no. 5 (2016): 259.
[4] Stefan Meister, “Shifting Geopolitical Realities in the South Caucasus”. *Reports, SCEEUS,* November (2021): 1–14.
[5] Emil Avdaliani, *New World Order and Small Regions: The Case of South Caucasus*, 2022. Springer Nature, 14.
[6] Mehdi Amiri and Ehsan Fallahi, “Geopolynomics of Iran’s Bilateral Relations with Armenia and the Republic of Azerbaijan from 2013 to 2021”. *Central Eurasia Studies* 15 (2023): 73–101.
[7] Vali Golmohammadi and Hamidreza Azizi, “The South Caucasus in the Regionalism of Iran’s Foreign Policy”. *Central Eurasia Studies* 15 (2022): 305–281.

վերլուծական դաշտում ի հայտ է եկել մոտեցում այն մասին, որ Իրանը կտրուկ փոխել է իր վերաբերմունքը Հարավային Կովկասի երկրների նկատմամբ:

Այդ նույն քաղաքական հայտարարությունների արդյունքում հայաստանյան վերլուծական, հանրային ու քաղաքական շրջանակներում Իրանի տարածաշրջանային շահերի մասին հաճախ աղճատված ու ուռճացված պատկերացումներ են տարածում ստացել՝ զգալի փոփոխություններ բերելով Հայաստանում Իրանի նկատմամբ քաղաքական և հասարակական վերաբերմունքի մեջ: Միջազգային հանրապետական ինստիտուտի կողմից 2023 թվականին անցկացված հարցումը, օրինակ, ցույց է տալիս, որ հարցված հայաստանցիների 54%-ը նշում է Իրանը որպես Հայաստանի անվտանգության կարևորագույն գործընկեր (այս ցուցանիշով Իրանը դառնում է առաջինը սանդղակում)[8]:

Այս իրավիճակը էլ ավելի է շեշտադրում տարածաշրջանում Իրանի անվտանգության շահերի լիարժեք ըմբռնման ու վերլուծության կարևորությունը, Իրան-Ադրբեջան հարաբերությունների որակն ու դինամիկան օբյեկտիվորեն քննելու անհրաժեշտությունը:

Լեռնային Ղարաբաղի 2020 թվականի պատերազմի ընթացքում և դրանից հետո Հարավային Կովկասում տեղի ունեցող զարգացումները սերտորեն կապված են տարածաշրջանի բոլոր երկրների անվտանգության շահերի հետ: Այս պնդումն առավել քան տեղին է հատկապես Իրանի պարագայում: Իրանի սահմաններին մոտ ռազմական գործողությունները, Թուրքիայի կողմից աջակցվող վարձկանների օգտագործումը, Թուրքիայի ներգրավվածությունը տարածաշրջանում և Ադրբեջանի

[8] “Public Opinion Survey: Residents of Armenia | January-March 2023”, *International Republican Institute,* May 1, 2023, Public Opinion Survey: Residents of Armenia | January-March 2023 | International Republican Institute (iri.org).

ծավալապաշտական հռետորաբանությունը ոչ միայն Հայաստանի, այլև Իրանի նկատմամբ, և Ադրբեջան-Իսրայել խորացող հարաբերությունները[9] մեծ մտահոգություն են առաջացնում Իրանի անվտանգության տեսանկյունից: Այս հանգամանքը ստիպել է Իրանին տարածաշրջանի հետագա զարգացումներում ավելի մեծ դեր խաղալու փորձեր անել:

Այս նպատակին հասնելու համար հատկապես Իրան-Հայաստան հարաբերությունների համատեքստում իրանցի պաշտոնյաները օգտագործում են հիմնականում քաղաքական հայտարարություններ, որոնց մեջ հաճախ են հնչում Իրանի՝ «կարմիր գծերի մասին» պնդումները[10]: Միաժամանակ, Իրան-Ադրբեջան հարաբերություններում մի կողմից մերթընդմերթ բռնկվող «խոսքային պատերազմների» [11] չավարտվող շղթա է, մյուս կողմից, ի հեճուկս դրանց, գերակշռում են տնտեսական համատեղ տարբեր ծրագրերին տրված «կանաչ լույսերը»: Այս հանգամանքը, սակայն, հաճախ ստվերվում է և՛ միջազգային, և՛ հայաստանյան իրանագիտական վերլուծությունների շրջանակներում, որոնք մեծամասամբ կենտրոնանում են միայն պրոհայկական դրսևորումների շեշտադրման վրա՝ այդպիսով ուռճացնելով մի կողմից՝ Իրանի ավելի սերտ հարաբերությունները Հայաստանի հետ, մյուս կողմից՝ հնարավոր դերակատարումը Հայաստանի անվտանգության սպառնալիքների չեզոքացման տեսանկյունից:

Իրանի հնարավոր քաղաքական քայլերն ու միջամտությունները տարածաշրջանային զարգացումներին

---

[9] Ronen A. Cohen and Tzvi Lev, “A Triangle of Interests: Azerbaijan, Iran and Israel”. *Iran and the Caucasus* 25, no.1 (2021): 74–89.

[10] “Iranian Lawmakers Describe Geopolitical Change as Iran’s Red-Line”, *Farsnews Agency*, October 3, 2021, https://www.farsnews.ir/en/news/14000711000775/Iranian-Lawmakers-Describe-Gepliical-Change-as-Iran%27s-Red-Line.

[11] Mariam Sinaee,“War of Words Heats up between Iran, Azerbaijan, and Israel.”, *Iran International*, January 10, 2023, https://www.iranintl.com/en/20211001032752.

հնարավորինս օբյեկտիվ գնահատելու համար այս հոդվածի շրջանակներում կանդրադառնանք տարածաշրջանում Իրանի ռազմավարական հետաքրքրություններին, և Իրան-Ադրբեջան հարաբերությունները կքննարկենք «զգուշավոր ռեալիզմ» տեսության միջոցով, որն, ի տարբերություն ռեալիստական մյուս տեսությունների, հաշվի է առնում երկրների ոչ միայն անվտանգության, այլև՝ այլ ոլորտների շահերը երկրների ռեալիստական ու ռացիոնալ քաղաքական քայլերը վերլուծելիս[12]:

Հոդվածը ցույց է տալիս Իրանի տարածաշրջանային անվտանգության, էթնիկ, կրոնամշակութային, միջազգային հեղինակության շահերը, դրանց հանդեպ Ադրբեջանի սպառնալիքները՝ պնդելով, որ Իրանը հարավկովկասյան տարածաշրջանում օգտագործում է բալանսավորման քաղաքականություն և՛ այդ սպառնալիքները չեզոքացնելու (նաև Իրան-Հայաստան հարաբերություններով), և՛ Ադրբեջանի հետ ավելի մերձենալու (հատկապես տնտեսական իմաստով) մարտավարությամբ:

**Ռեալիստական տեսության զգուշավորության բաղադրիչը կամ զգուշավոր ռեալիզմի տեսություն**

«Զգուշավոր ռեալիզմը» (prudential realism) միջազգային հարաբերությունների տեսությունների ոլորտում համեմատաբար նոր ուղղություն է: Այն առաջարկում է մոտեցումներ այն մասին, թե ինչպես են պետությունները արտաքին քաղաքական որոշումներ

[12] Guzzini, Stefano. “Saving Realist Prudence.” In *The Social Construction of State Power: Applying Realist Constructivism*, edited by J. Samuel Barkin, 1st ed., (Bristol University Press, 2020), 217–32.
Charles A. Kupchan, “After Pax Americana: Benign Power, Regional Integration and the Sources of a Stable Multipolarity”. In *The New World Order* (London: Palgrave Macmillan UK, 2000), 134–66.

կայացնում՝ հիմնվելով գործնական նկատառումների և սկզբունքների հավասարակշռության վրա[13]:

Զգուշավոր ռեալիզմն ընդգծում է այնպիսի քաղաքականություն վարելու կարևորությունը, որը ոչ միայն բարոյապես արդարացված է, այլև ծառայում է պետության ազգային շահերին և անվտանգությանը: Այն ընդունում է, որ պետությունները գործում են բարդ միջազգային միջավայրում, որտեղ էթիկական նկատառումները և ռեալ մտահոգությունները հաճախ հատվում են: Այս շրջանակներում պետությունները հաշվարկում են իրենց գործողությունների պոտենցիալ օգուտներն ու ռիսկերը՝ նկատի ունենալով թե՛ իրենց որդեգրած սկզբունքները, թե՛ իրենց բարօրության համար դրանց ունեցած հետևանքները[14]:

Շահերի հավասարակշռությունը զգուշավոր ռեալիզմի առանցքային ասպեկտներից մեկն է ու հիմնվում է այն մոտեցման վրա, որ պետությունները արտաքին քաղաքական որոշումներ կայացնում են՝ մանրակրկիտ հաշվարկելով իրենց ազգային շահերը, ներառյալ տնտեսական, անվտանգության և ռազմավարական գործոնները: Այս շահերն են ձևավորում արտաքին քաղաքականության ուղղությունը և ուղղորդում պետական գործողությունները:

Ըստ այս տեսության՝ պրագմատիզմի ու աղապատացիայի բարձր մակարդակը նույնպես պետության շարժառիթների կարևոր բաղադրիչներն են[15]: Տեսությունն ընդգծում է արտաքին քաղաքականության պրագմատիկ մոտեցումը՝ զիտակցելով, որ պետությունները կարող են կարիք ունենալ զիջումների գնալ իրենց

[13] Thazha Paul, *Power versus Prudence: Why Nations Forgo Nuclear Weapons* (McGill-Queen's Press-MQUP, 2000), 28-33.
[14] Greta Favara, "Taking Politics Seriously: A Prudential Justification of Political Realism". *Philosophy & Social Criticism* 49, no. 7, (2023).
[15] Liu Wei, "Aristotle, Machiavelli, and Prudential Political Realism", In *Machiavelli in Northeast Asia*, ed. Jun-Hyeuk Kwak, (London: Routledge, 2022), 26-42.

սկզբունքների դաշտում իրենց նպատակներին հասնելու համար կամ, որպես այլընտրանք, շեշտադրել իրենց սկզբունքները, երբ դրանք համապատասխանում են իրենց շահերին: Զգուշավոր ռեալիզմի տեսաբանները պնդում են, որ պետությունները ճկուն են և հարմարեցնում են իրենց քաղաքականությունը՝ հիմնվելով միջազգային միջավայրի տեղաշարժերի վրա[16]: Այսպիսով, պետությունները զարգացնում են իրենց կարողությունը՝ հարմարեցնելու իրենց արտաքին քաղաքական ռազմավարությունները փոփոխվող հանգամանքներին:

Այս տեսությունը լավագույնս է բացատրում Իրանի արտաքին քաղաքական որոշումները Հարավային Կովկասում: Ի տարբերություն միջինարևելյան քաղաքականության, որտեղ նրա վարքը մեծամասամբ կարելի է բացատրել գաղափարական ու պրագմատիկ մղումների համադրմամբ[17]՝ Հարավային Կովկասում Իրանի սահմանած «կարմիր գծերն» ու դրանք շրջանցող հարաբերությունները տնտեսական ոլորտում ավելի բացատրելի են դառնում զգուշավոր ռեալիզմի դիրքից վերլուծելիս: Իրանի՝ տարածաշրջանում ունեցած կենսական շահերի քննությունն այս տեսության դիտանկյունից վերլուծելիս հնարավորություն է տալիս բացատրել, թե ինչու քաղաքական լարվածությունը Իրանի ու Ադրբեջանի միջև չի տեղափոխվում նաև ռազմական ոլորտ, և թե ինչու, ի հեճուկս կոշտ հռետորաբանության, Իրան-Ադրբեջան տնտեսական ծրագրերը ոչ միայն չեն դադարում, այլև շարունակում են ընդլայնվել ու զարգանալ:

[16] Manali Kumar, “Making Decisions under Uncertainty: The Prudent Judgement Approach”. *European Journal of International Security* 8, no. 1 (February 2023): 109–29.
[17]Shaul Bakhash, “Iran’s Foreign Policy under the Islamic Republic, 1979–2000”. In *Diplomacy in the Middle East*, ed. Leon Carl Broun, (Bloomsbury Academic, 2001), 247-58

**Իրանի արտաքին քաղաքականության տարածաշրջանային համատեքստը**

Խորհրդային միության փլուզումից հետո Իրանի քաղաքականությունը Հարավային Կովկասում մեծապես պայմանավորված է եղել Ռուսաստանի ու Թուրքիայի հետ նրա հարաբերություններով: Համագործակցությունն ու մրցակցությունը տնտեսական ոլորտում, ինչպես նաև էներգետիկ հարցերը եղել են այդ բոլոր երեքի հարաբերությունների հիմնական շարժիչ ուժը վերջին տասնամյակում: Տարածաշրջանային այս մրցակիցները օգտագործում էին երկկողմ երկխոսությունը, տնտեսական համագործակցությունն ու էներգետիկ կապերը կառավարելու համար հակընդդեմ շահերը՝ միաժամանակ պահպանելով կայուն փոխադարձ անվստահությունը միմյանց նկատմամբ[18]:

Իրան-Հայաստան, Իրան-Ադրբեջան հարաբերությունները, ուրեմն, անհնար է տարանջատել տարածաշրջանային այս երեք տերությունների միջև փոխհարաբերություններից ու դիտարկել որպես անջատ հարաբերություններ[19]: Իրանի ազգային անվտանգության շահերը Հարավային Կովկասի տարածաշրջանում մշտապես ներառել են նախևառաջ իր տարածքային ամբողջականության պահպանման, ապա նաև՝ ընդհանուր առմամբ տարածքային ամբողջականության սկզբունքի պահպանման[20], սահմանների անփոփոխության ապահովման, ցանկացած անջատողական գործընթացի կանխման կամ դադարեցման կարևոր նպատակներ: Մինչև 2020 թվականի

[18] Stephen J. Flanagan, “The Turkey–Russia–Iran Nexus: Eurasian Power Dynamics,” *The Washington Quarterly* 36, no 1 (2013): 163-178.

[19] Abdollah Baei Lashaki, Masoumeh Rad Goudarzi, and Davood Amraei, “The Roots of Tension in South Caucasus: The Case of Iran-Azerbaijan Relationship”, *Journal of Politics and Law* 6, no. 4 (2013) 141.

[20] Mahmood Sariolghalam, *Iran in Search of Itself, Current History* 107, no. 713 (2008): 425-431.

պատերազմն էլ Իրանի պաշտոնական մեծամասամբ չեզոք մեկնաբանությունները Ղարաբաղյան խնդրի վերաբերյալ շեշտադրել են տարածքային ամբողջականության պահպանման կարևորությունն ու կոնֆլիկտը խաղաղ ու իրավական ճանապարհով լուծելու անհրաժեշտությունը: Օրինակ՝ 2014 թվականի ապրիլին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի՝ Թեհրան պաշտոնական այցի ընթացքում նախագահ Հասան Ռոհանին անդրադարձել էր այդ հարցին՝ ընդգծելով, որ Իրանի քաղաքականությունը Ղարաբաղյան հակամարտության նկատմամբ այն է, որ հարցը պետք է լուծվի խաղաղ ճանապարհով՝ միջազգային կոնվենցիաների համապատասխան և առանց սահմանների փոփոխության[21]: Այս մեկնաբանությունները ողջունելի էին Ադրբեջանում, որտեղ շատերը սահմանների հիշատակումը համարում էին աջակցություն Ադրբեջանի տարածքային ամբողջականությանը[22]:

Իրանն իր տարածաշրջանային շահերն առաջ մղելու համար ջանում է սահմանափակել արտատարածաշրջանային տերությունների (ինչպիսիք են ԱՄՆ-ը և Իսրայելը) և ՆԱՏՕ-ի ներկայությունը՝ միաժամանակ ընդունելով Ռուսաստանի դերը՝ որպես հավասարակշռող արևմտյան և թուրքական ազդեցության դեմ: Միաժամանակ, տարածաշրջանում կայուն խաղաղությունն ու կայունությունը համընկնում են այս ոլորտում Իրանի անվտանգության նկրտումների հետ, որը նպատակ ունի սահմանափակել վարձկանների և այլ զինյալների ներկայությունը Հարավային Կովկասում: Այս իմաստով Ադրբեջանի

[21] Siranush Ghazanchyan, “Rouhani: Iran Ready to Contribute to Karabakh Settlement.” *Public Radio of Armenia*, April 9, 2014, https://en.armradio.am/2014/04/09/rouhani-iran-ready-to-contribute-to-karabakh-settlement/.

[22] James Barry, “*Brothers or Comrades at Arms? Iran’s Relations with Armenia and Azerbaijan*,” in *Iran in the World*: *President Rouhani’s Foreign Policy*, ed. Shahram Akbarzadeh and Dara Conduit, (Palgrave MacMillan, 2016), 59-75.

հարաբերությունները Իսրայելի, ինչպես նաև՝ խորացող հարաբերությունները Թուրքիայի հետ ու Թուրքիայի աջակցությամբ վարձկանների օգտագործումն իր ռազմաքաղաքական նպատակներին հասնելու համար մարտահրավեր-խնդիր է նաև Իրանի անվտանգության տեսանկյունից[23]: Թեև որոշ հետազոտություններ (հատկապես ադրբեջանցի հետազոտողների հեղինակությամբ) առաջ են քաշում այն տեսակետը, որ Ադրբեջան-Իսրայել հարաբերությունների բուռն զարգացման վրա իր ուրույն ազդեցությունն է ունենում նաև այդ երկրների նկատմամբ Իրանի քաղաքականությունը[24], Իրանի դիտանկյունից հենց այդ հարաբերություններն են մեծապես պայմանավորում իր զգուշավոր, իսկ երբեմն՝ նույնիսկ բացահայտ հակամարտող քաղաքականությունը Ադրբեջանի հանդեպ: 2020 թվականի պատերազմը ի ցույց դրեց էլ ավելի մեծ ընդգրկվածությամբ խորը հարաբերություններ Ադրբեջանի ու Իսրայելի միջև, ինչը, ներառելով նաև տեխնոլոգիական ոլորտում համագործակցությունն ու Ադրբեջանի կողմից իսրայելական անօդաչուների ու այլ ռազմական տեխնիկայի օգտագործումը, անվտանգության աճող մարտահրավեր էր դառնում Իրանի համար[25]:

Իրանը նաև շահեր ունի տարածաշրջանում իր միջազգային հեղինակության և ազդեցության հետ կապված: Նրա կարևոր նպատակներից մեկը, ըստ էության, տարածաշրջանային տերության ինքնահռչակ կարգավիճակ ունենալն է և այդպիսով այլ

[23] Kira Rauschenbakh, “The Nagorno-Karabakh Conflict Challenges Iran.”, *Critical Threats*, October 7, 2020. https://www.criticalthreats.org/analysis/the-nagorno-karabakh-conflict-challenges-iran.

[24] Emil Souleimanov, Maya Ehrmann, and Huseyn Aliyev, “Focused on Iran? Exploring the Rationale behind the Strategic Relationship between Azerbaijan and Israel”, *Southeast European and Black Sea Studies* 14, no. 4 (2014): 471–88.

[25] Arvin Khoshnood and Ardavan Khoshnood, "Iran's quandary on Nagorno-Karabakh." *Middle East Quarterly* 28, no. 2 (2021): 7.

խաղացողների կողմից ճանաչվելը: Այս ճանաչումը կօգնի ամրապնդել Իրանի դիրքը տարածաշրջանում և պարարտ հող կստեղծի նաև նրա ազդեցությունը մեծացնելու համար: Նույն նպատակով Իրանը նույնպես շահագրգռված է ակտիվորեն մասնակցել տարածաշրջանային տարբեր զարգացումներին և նախաձեռնություններին: Տարածաշրջանային զարգացումների ներառականությունը Իրանին թույլ կտա դրսևորել իր ցանկալի առաջնորդությունը և օգնել ձևավորել տարածաշրջանային քաղաքականության ուղղությունը: Արդյունքում Իրանը, բնականաբար, շահագրգռված է լինել դեռևս միայն հայտարարությունների մակարդակում գոյություն ունեցող ու տարածաշրջանային բոլոր վեց երկրներն ընդգրկող (Իրան, Թուրքիա, Ռուսաստան, Հայաստան, Վրաստան, Ադրբեջան) « 3+3» անվտանգության կառույցի, Եվրասիական միության հետ համագործակցության և տարածաշրջանային այլ նախաձեռնությունների մաս: Այս բոլոր ձևաչափերն ու համագործակցությունները Իրանը համարում է կարևոր գործիքներ իր տարածաշրջանային տերության վարկը բարձրացնելու և տարածաշրջանային անվտանգության և տնտեսական հարցերում ավելի ակտիվ դերակատարություն ունենալու իր կարողությունները մեծացնելու համար:

Վերջապես, Հայաստանի հետ հարաբերությունների պահպանումը նույնպես կարևոր շահ է Իրանի համար[26], քանի որ դա կօգնի հակազդել այդ երկրի բացասական ընկալմանը տարածաշրջանում և նախադրյալ կստեղծի ուժեղացնելու նրա փափուկ ուժն ու ազդեցությունը: Հայաստանի հետ հարաբերությունները՝ որպես միակ քրիստոնյա հարևան երկրի, միշտ ներկայացվել են որպես օրինակ՝ զսպելու քաղաքական այն

[26] Zeinab Nourian, "Investigating the Position of Smart Power in Iran's Foreign Policy towards Armenia", *Iranian politics and law* 1&2, no. 3 &4, (2021): 21.

պատումները, որոնք Իրանը ներկայացնում են որպես ծայրահեղական մուսուլմանական երկիր՝ տարածաշրջանային նույնչափ ծայրահեղական նկրտումներով: Միևնույն ժամանակ, իհարկե, Ադրբեջանի հետ հարաբերությունների համար Իրան-Հայաստան փոխգործակցությունը ընկալվում է որպես խոչընդոտ ու սպառնալիք:

**Էթնոկրոնական և մշակութային գործոնները Իրանի արտաքին քաղաքականության համատեքստում**

Իրանը նաև ունի մի շարք շահեր՝ կապված Հարավային Կովկասի տարածաշրջանում իր ազգային արժեքների կամ ինքնության հատկանիշների պաշտպանության հետ: Այդ շահերից մեկը, ըստ էության, պատմական գերակայության պահպանումն է տարածաշրջանում, որն ընկալվում է որպես համաիրանական տարածք: Սա հուշում է, որ Իրանը գնահատում է իր պատմամշակութային կապերը տարածաշրջանի հետ, և նրա քաղաքականությունը նպատակ ունի պահպանել դրանք: Այս համատեքստում կարևոր է շեշտել, որ Իրանի համար կարևոր է ընդգծել Հարավային Կովկասի ժողովուրդների համար իր հատուկ մշակութային, քաղաքակրթական և պատմական դերը: Այս նպատակին հասնելու համար հաճախ օգտագործվում են մշակութային, անհրաժեշտության դեպքում՝ նաև կրոնական կապերն ու ընդհանրությունները: Վերը նշված բոլոր հատկանիշներով Իրանը իրեն ներկայացնում է որպես աշխարհի բոլոր շիա համայնքների պաշտպան, և այդ համայնքների համակրանքն ու ջերմեռանդ վերաբերմունքը նրա համար առաջնային նշանակություն ունեն: Շիա պաշտպանների դրոշակակրի կարգավիճակի պահպանումը, ըստ իրանական դիտանկյան, կնպաստի Իրանի՝ համաշխարհային շիա համայնքի առաջնորդի դիրքի բարձրացմանը, ինչպես նաև կնպաստի նրա

տարածաշրջանային և միջազգային ազդեցության մեծացմանը: Այսպիսով, Իրանը շահագրգռված է նաև, որ շիա Ադրբեջանում հնարավորինս խուսափեն հակաիրանական տրամադրություններից: Այդպիսի տրամադրությունները, սակայն, պարբերաբար գլուխ են բարձրացնում ու դառնում միջպետական հարաբերությունները լուրջ վտանգի ենթարկող գործոններ[27]:

## *Իրան-Ադրբեջան հարաբերությունների քաղաքական գործոնները*

Իրան-Ադրբեջան հարաբերությունները վերջին երեք տասնամյակի ընթացքում առանձնացել են իրենց պարբերաբար ի հայտ եկող լարվածություններով և դրանց հաջորդող հարաբերությունների ջերմացմամբ: 2020 թվականի պատերազմից հետո տարածաշրջանում ստեղծված նոր ստատուս քվոն ու անկայունության պահպանումը ուկրաինական պատերազմի սկսվելուց հետո նոր փուլ բացեցին Իրան-Ադրբեջան լարվածության համար քաղաքական ոլորտում, բայց նաև նոր հնարավորություններ ի հայտ բերեցին տնտեսական ոլորտում համագործակցության համար: Իրան-Ադրբեջան տնտեսական հարաբերությունների ներուժը հաճախ թերօգտագործված ու թերարժևարված է համարվել[28], բայց նոր իրողությունները նոր հնարավորություններ են բացում այս ոլորտում:

Վերլուծելով Իրան-Ադրբեջան հարաբերությունների վերջին սրացման համատեքստում դեէսկալացիայի մեծ հավանականությունը՝ Իրանի տարածաշրջանային հարցերով վերլուծաբան Վալի Քալեջին մի շարք պատճառների շարքում առաջինը նշում է հենց տնտեսական գործոնը: Վերլուծաբանի

[27] Anna Gevorgyan, Hayk Kocharyan, The Islamic factor in Azerbaijan and its influence on the security interests of Armenia, *Journal of Oriental Studies* 14, (2018): 336-356.
[28] Tavakol Lotfi, Vali Golmohammadi, Hamid Sarmadi, Political Consideration and Development of Economic Relations, Economic Cooperation Capacities of Iran and the Republic of Azerbaijan, *Mediterranean Journal of Social Sciences* 7, no. 3 S3, (2016): 72-82.

հիշատակմամբ՝ Հարավային Կովկասի հետ Իրանի առևտրի 50 տոկոսը բաժին է հասնում Ադրբեջանի հետ առևտրին[29], իսկ 2020 թվականից թափ առած լարվածության ֆոնին անգամ կրկնակի աճ է գրանցել[30]։ Ստորև կանդրադառնանք Իրանի՝ Հարավային կովկասում ունեցած շահերին ու դրանց ազդեցությանը Իրան-Ադրբեջան հարաբերությունների վրա։

## *Հակաիրանական տրամադրությունների դրսևորումներն Ադրբեջանում*

Դեռևս տարիներ առաջ՝ «Եվրատեսիլ» մրցույթի անցկացման պայմաններում, հակաիրանական տրամադրությունների պիկ էր նկատվում Բաքվում։ Մրցույթն անցկացվեց Բաքվում 2012 թ., որի առիթով իրանցի հոգևորականներից մեկը՝ այաթոլլահ Սոբհանին, քննադատեց Ադրբեջանին՝ մրցույթն ու դրա անցկացումը անբարոյական քայլ համարելով ու մեղադրելով Բաքվին դրա շրջանակներում նաև միասեռականների շքերթ անցկացնելու մեջ[31]։ Ադրբեջանցիներն արձագանքեցին Բաքվում բողոքի ցույցով, որի ընթացքում ցուցապաստառներ էին պահել Իրանի նախագահին և հոգևոր առաջնորդին միասեռականության մեջ մեղադրելով[32]։ Սա կարմիր գծերի հատում ընկալվեց Իրանում, և ի նշան բողոքի՝ դրդեց Թեհրանին դուրս բերել դիվանագիտական անձնակազմը Բաքվից[33]։

Այս համատեքստում այլ կարևոր իրադարձություններ են Ադրբեջանում Իրանի քաղաքացիների պարբերական

[29] Vali Kaleji, “The Complex Web of Interdependence and Threat Balancing That Prevents War between Iran and Azerbaijan.” *Middle East Institute*, April 24, 2023. https://gx.ax/e7W.
[30] “Trade Turnover between Iran, Azerbaijan Increase”, *Caliber.az*, July 24, 2023. https://caliber.az/en/post/103851/.
[31] “Tehran Protests Eurovision “Gay Parade” in Baku,” *Spiegel International*, May 23, 2012, https://wx.ax/a6G.
[32] “Iran Recalls Azerbaijan Ambassador over Eurovision “Gay Parade”, *The Telegraph*, May 22, 2012, https://jx.ax/Oq7.
[33] “Tehran Protests Eurovision “Gay Parade” in Baku,” *Spiegel International*, May 23, 2012, https://wx.ax/a6G.

ձերբակալությունները՝ հակաամերիկյան կամ հակաիսրայելական ահաբեկչություն նախապատրաստելու[34] կամ Բաքվում հեղաշրջումներ[35] պլանավորելու մեղադրանքներով: Ձերբակալվածների մի զգալի մաս էլ մեղադրվում է իրանական աջակցությամբ Ադրբեջանում շարիաթական «Քարիմա» պետություն ստեղծելու նախապատրաստության մեջ[36]:

Իրանա-ադրբեջանական հարաբերությունների փշոտ դրսևորումների մեկ այլ պատճառ է Բաքվում անջատողական խմբերի կողմից կոնֆերանսների անցկացումը (ինչպես Համաշխարհային Ադրբեջանական կոնգրեսը (Dünya Azerbaijanlıları Konqresi), որը ջատագովում է «Հարավային Ադրբեջանի միացումը» Ադրբեջանի Հանրապետությանը): Երբ 2013 թվականի մարտին տեղի ունեցավ նման կոնֆերանս, դրան ի պատասխան Իրանում փողոց դուրս եկած ցուցարարներն ու նրանց աջակից փաստաբանները հիշատակեցին 1826-1828 թվականների ռուս-պարսկական պատերազմից հետո երկրների միջև կնքված Թուրքմենչայի պայմանագիրը: Բողոքի մասնակիցները պնդում էին, որ, քանի որ 1828 թվականի Թուրքմենչայի պայմանագիրը ստորագրվել է ցարական Ռուսաստանի կառավարության կողմից և անվավեր ճանաչվել 1917 թվականի բոլշևիկյան հեղափոխությամբ, հետևաբար պայմանագրով Իրանից օտարված Ադրբեջանը պետք է վերադարձվի Իրանին: Բանավեճն անգամ հասավ Իրանի Մեջլիս (խորհրդարան), որտեղ ադրբեջանալեզու շրջանների մի քանի ներկայացուցիչների մասնակցությամբ միջնորդություն

[34] “Azerbaijan Arrests 22 Suspects in Alleged Iran Spy Plot,” *BBC*, March 14, 2012, https://www.bbc.com/news/world-europe-17368576.
[35] Yaghoub Fazeli, “Azerbaijan Arrests 39 People Accused of Working for Iran amid Tehran-Baku Tensions.”, *Al Arabiya*, February 1, 2023. https://english.alarabiya.net/News/world/2023/02/01/Azerbaijan-arrests-39-people-accused-of-working-for-Iran-amid-Tehran-Baku-tensions.
[36] Samira Ahmedbeyli, “Hunt for “Iranian Spies” Continues in Azerbaijan.” *Jamnews*, May 17, 2023. https://jam-news.net/iranian-spies-in-azerbaijan/.

ներկայացվեց, որը կոչ էր անում «Հյուսիսային Ադրբեջանի» վերադարձը Իրանին[37]: Իրանի խորհրդարանում Թուրքմենչայի ու Գոլեստանի[38] պայմանագրի հիշատակմամբ Ադրբեջանի հակաիրանական հռետորաբանությանն արձագանքելու պրակտիկան շարունակվում է նաև վերջին տարիներին: 2021 թվականին Ադրբեջան-Թուրքիա-Պակիստան համատեղ զորավարժություններին ի պատասխան՝ Իսլամական Հեղափոխության Պահապանների Կորպուսի հետ փոխկապակցված «Ջավան» օրաթերթի տնօրեն Աբդոլլահ Գյանջին, օրինակ, թվիթերում «հիշեցրել էր» Ադրբեջանին, թե ումից է անջատվել, և որ Իրանը չի հանդուրժի, որ իրենից անջատված միավորը օգտագործվի իր դեմ[39]:

2022 թվականին, օրինակ, ի պատասխան Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի այն պնդման, թե բոլոր ադրբեջանցիները Ադրբեջանից դուրս իրենց մայրենիով կրթություն ստանալու իրավունք պիտի ունենան, Իրանի խորհրդարանի ներկայացուցիչները խորհուրդ էին տալիս չմոռանալ, թե ով ումից է առանձնացել ու հիշել Գոլեստանի պայմանագիրը[40]:

### *Արտատարածաշրջանային ուժերի գործոնը*

Իրանի տարածաշրջանային նպատակներից է նաև նվազեցնել Թուրքիայի դերը տարածաշրջանում, ձերբազատվել վարձկաններից, որոնք աջակցում են Ադրբեջանին և դեռևս չեն լքել Լեռնային Ղարաբաղի հարակից տարածքները, և թույլ չտալ ստեղծել այսպես

[37] Marya Hannun, "News You Might Have Missed: Iran Considers Annexing Azerbaijan (Again)." *Foreign Policy*, April 12, 2013. https://foreignpolicy.com/2013/04 /12/news-you-might-have-missed-iran-considers-annexing-azerbaijan-again/.

[38] "Golestān treaty", *Encyclopædia Iranica,* Vol. XI, Fasc. 1, pp. 86-90, GOLESTĀN TREATY – Encyclopaedia Iranica (iranicaonline.org).

[39] "Https://Twitter.com/Ab_ganji/Status/1443853234079256583?S=20." Twitter. Accessed July 24, 2023. https://twitter.com/ab_ganji/status/1443853234079256583?s=20.

[40] "Iranian Lawmakers Warn Azerbaijan President over 'Compatriots' Comment.", *Tehran Times*, November 14, 2022. https://www.tehrantimes.com/news/478655/Iranian-lawmakers-warn-Azerbaijan-president-over-compatriots.

կոչված «Զանգեզուրի միջանցքը», որի մասին չկա հիշատակում 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության մեջ, բայց որի մասին պարբերաբար բարձրաձայնում են Թուրքիայի նախագահ Էրդողանն ու Ադրբեջանի նախագահ Ալիևը: Վերը նշված նպատակները համահունչ են Հայաստանի անվտանգության շահերին և օգնում են դրանց պահպանմանը: Զուգահեռաբար, սակայն, Հայաստանի շահը՝ նպաստելու Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման հնարավորությանը և բարձրաձայնելու Լեռնային Ղարաբաղի ժողովրդի իրավունքների պաշտպանության կարևորության մասին, չի համընկնում Իրանի տարածաշրջանային շահերի հետ: Սրանով է բացատրվում այն հանգամանքը, որ Լեռնային Ղարաբաղի պատերազմների նկատմամբ քաղաքական ընդհանուր չեզոք արձագանքներին հաջորդեցին Ադրբեջանին ուղղված շնորհավորական հայտարարությունները[41], ինչպես նաև՝ ոչ հասցեական ուղերձները Լաչինի միջանցքի արգելափակման[42] վերաբերյալ կամ լռությունը Ալիևի հակահայկական տրամադրությունների նկատմամբ:

Իրանի և Ադրբեջանի միջև «խոսքային պատերազմը» նոր թափ է հավաքել 2020 թվականի պատերազմին հաջորդած մի քանի համատեղ՝ Ադրբեջան-Թուրքիա, Ադրբեջան-Թուրքիա-Պակիստան զորավարժությունների համատեքստում: 2021 թվականին իրականացած այդպիսի զորավարժություններին ի պատասխան՝ Իրանի հոգևոր առաջնորդի ներկայացուցիչ Սեյեդ Հասան Ամելին կոչ արեց չհապաղել ու ցույց տալ Իրանի հզորությունը[43]:

[41] “Iran Congratulates Azerbaijan on Liberation of Shusha.”, *Tehran Times*, November 9, 2020. https://fd.ax/5Tt.
[42] “Iran Hopes Lachin Corridor Will Be Unblocked through Dialogue between Armenia and Azerbaijan.”, *Armenpress*, December 20, 2022, https://armenpress.am/eng/news/1100116.html.
[43] Daniel Rad, “Azerbaijani, Turkish and Pakistani War Games Appear to Prompt Iran to Move Infantry to Border.” *The Armenian Mirror-Spectator,* September 21, 2021. https://nw.ax/Fx7.

«Խոսքային պատերազմի» ոչ վերբալ դրսևորումները շարունակվել են նաև 2022-2023 թվականներին: 2022 թվականի հոկտեմբերին՝ Ադրբեջանի կողմից Հայաստանի հանդեպ ռազմական ներխուժումից շաբաթներ անց[44], Իրանը երկու խոշոր զորավարժություններ է անցկացրել Ադրբեջանի հետ սահմանի մոտ[45]: Թեհրանը պնդում էր, որ Բաքվին համապատասխան ծանուցում է տվել, սակայն զորավարժությունները, այնուամենայնիվ, անհանգստությամբ են ընդունվել:

Նոյեմբերին ադրբեջանական իշխանությունները ձերբակալել էին 19 մարդու, ովքեր պնդում էին, որ իրենց վերապատրաստել են Իրանում Ադրբեջանում գործողություններ իրականացնելու համար: Կասկածյալները, իբր, տեղափոխվել էին Սիրիա ռազմական ուսուցում անցնելու համար: Նրանց մեղադրանք է առաջադրվել նաև կրոնական նյութերի ապօրինի մաքսանենգության մեջ, երբ նրանք տուն են վերադարձել Ադրբեջան[46]:

2023 թվականի հունվարին զինված անձը ներխուժել էր Թեհրանում Ադրբեջանի դեսպանատուն՝ սպանելով անվտանգության պետին և վիրավորելով երկու պահակների: Թեև Իրանի պաշտոնական վարկածով դեպքը կենցաղային հողի վրա էր տեղի ունեցել, բայց ադրբեջանական կողմը հարձակումը ահաբեկչություն որակեց և դրա մեջ մեղադրեց Իրանի ղեկավարությանը[47]:

Նույն թվականին մահափորձ է իրականացվել ադրբեջանցի պատգամավոր Ֆազիլ Մուստաֆայի դեմ, ով հայտնի է Իրանի դեմ

[44] “Azerbaijan Launches Large-Scale Attack Against Armenia”, *EVN Report,* September 13, 2022, https://hq.ax/s2Y.

[45] Aziza Goyushzadeh, “Iran Holds Military Exercises on Border Amid Tensions With Azerbaijan”, *VOA, October 20, 2022,* https://jx.ax/Fd0.

[46] Anna Borschchevskaya and Andrew J.Tabler, “Iran’s tensions with Azerbaijan point broader shift in the South Caucasus”, *The Washington Institute for Near East Policy,* March 31, 2023, https://fd.ax/Pw1.

[47] Heydar Isayev, “Azerbaijani embassy in Iran comes under deadly attack”, *Eurasianet,* January 27, 2023, Azerbaijani embassy in Iran comes under deadly attack | Eurasianet

իր քննադատական մոտեցումներով: Մահափորձի մեջ ադրբեջանական կողմը մեղադրել է Իրանին[48]:

### *Տնտեսական շահեր և էներգետիկ անվտանգություն*

Ադրբեջանն ու Իրանը, ի հեճուկս ունեցած խնդիրների վերը շարադրված ոլորտներում, երկուսն էլ օգտագործում են Realpolitik-ը՝ Կովկասում ու նրանից դուրս ուժերի հավասարակշռությունը պահպանելու ու սեփական ռազմավարական շահերին հասնելու համար[49]: Այդ ռազմավարական շահերից մեկը վերաբերում է տնտեսական ոլորտում երկու երկրների հնարավորինս մերձեցմանն ու համատեղ էներգետիկ անվտանգության խնդիրների հաղթահարմանը:

Տնտեսական ոլորտում մերձեցումը, ըստ որում, հաճախ ոչ միայն հաջորդում, այլև զուգակցվում է քաղաքական ոլորտում առճակատումների հետ: Այսպես, սեպտեմբերյան խոսքային էսկալացիային հետևեց նոյեմբերին կնքված նոր գազային պայմանագիրը Իրանի, Ադրբեջանի ու Թուրքմենստանի միջև[50]: Ըստ այդ պայմանագրի՝ Իրանը Թուրքմենստանից մինչև 2 միլիոն խորանարդ մետր գազ կներկրի ու նույնքան գազ կարտահանի Ադրբեջան Աստարայի միջոցով: Մեկ տարի անց էլ՝ 2022 թվականի հունիսին, երկրները պայմանավորվեցին կրկնապատկել գազի ներկրման և արտահանման ծավալները[51]: Նույն թվականի սեպտեմբերին Իրանն ու Ադրբեջանը պայմանավորվեցին ռուսական գազի՝ Իրան ներմուծումը Ադրբեջանով իրականացնելու

48 Heydar Isayev, “Azerbaijani MP survives shooting”, *Eurasianet,* March 30, 2023, https://hq.ax/1Cf
49 Ronen A. Cohen and Tzvi, Lev, “A Triangle of Interests: Azerbaijan, Iran and Israel”, *Iran and the Caucasus* 25, no. 1 (2021): 74-89.
50 “Iran, Turkmenistan and Azerbaijan Sign Gas Swap Deal.” *Reuters*, November 28, 2021, https://ft.ax/4Lr.
51Kazem Sarabi, “Iran to Double Volume of Gas Swap with Azerbaijan.”, *Caspian News,* June 4, 2022, https://gx.ax/Ul5.

շուրջ[52]: Նույն՝ քաղաքական լարվածությամբ աչքի ընկած 2021 թվականին Իրանն ու Ադրբեջանը պայմանագիր կնքեցին նաև Կասպից ծովի նավթային պաշարների համատեղ կորզման վերաբերյալ[53]:

Երկու երկրների միջև համագործակցությունը զարգացել է նաև ենթակառուցվածքների ոլորտում. 2023 թվականի մայիսի 17-ին Ռուսաստանի և Իրանի միջև նոր համաձայնագիր կնքվեց Ռեշտ-Աստարա երկաթգծի շինարարության վերաբերյալ: Այս երկաթգիծը, որի նախագծի համար Ռուսաստանն ու Իրանը մի քանի միլիոն դոլար են ներդնելու, Հնդկաստանը, Իրանը, Ռուսաստանը և Ադրբեջանը կապող կարևոր օղակ է լինելու՝ մրցակից դառնալով Սուեզի ջրանցքով իրականացվող բեռնափոխադրումների համար[54]:

Եվ թեև Ռուսաստան-Իրան հարաբերությունների հարցը հատկապես համաշխարհային ներկա առճակատման պայմաններում արևմտյան վերլուծաբանների ուշադրության կենտրոնում է[55], այդ հարաբերությունների միջանկյալ օղակ Ադրբեջանի գործոնը կարծես հաճախ անտեսվում է: Ադրբեջանը, իր հերթին, իր հակաիրանական, երբեմն էլ՝ հակառուսական հռետորաբանությունն օգտագործում է ինքն իրեն որպես հավաքական Արևմուտքի մաս ներկայացնելու համար: Միաժամանակ, սակայն, Ադրբեջանը խորացնում է իր տնտեսական համագործակցությունը Իրանի և Ռուսաստանի հետ,

[52] “Iran Agrees to Import 3.3 Bcm/Year of Russia Gas through Azerbaijan.”, *Enerdata,* September 20, 2022, https://jx.ax/s2K.
[53] “Iran, Azerbaijan to Finalize Deals for Oil, Gas Cooperation.” Financial Tribune. November 22, 2021. https://hq.ax/Xq1.
[54] Olesya Astakhova and Parisa Hafezi, “Russia and Iran Sign Rail Deal for Corridor Intended to Rival Suez Canal.” *Reuters*, May 17, 2023, https://fd.ax/0Ck.
[55] Matthew Karnitschnig, “Russia Eyes Iran as Sanctions-Busting Backdoor for Oil Sales.” *Politico,* August 23, 2022, https://ft.ax/Py4.

իսկ այդ երկրները Ադրբեջանին դիտարկում են որպես էներգետիկ ոլորտում կարևոր գործընկեր՝ իրենց միջև կամրջի դերի աճով:

**Եզրակացություն**

Այսպիսով, վերլուծելով Իրան-Ադրբեջան հարաբերությունները զգուշավոր ռեալիզմի տեսության միջոցով՝ կարելի է պնդել, որ երկու երկրների համալիր ու բազմաշերտ հարաբերություններում եղած խնդիրները, Ադրբեջանի կողմից Իրանի համար ստեղծվող սպառնալիքները դրդում են Իրանին մի կողմից բալանսավորել այդ սպառնալիքները հակընդդեմ սպառնալիքներով, մյուս կողմից՝ չեզոքացնել դրանք մերձեցման միջոցով: Այս իմաստով կարևոր է երկու երկրների հարաբերություններում եղած այս բազմաչափությունը դիտարկել ամբողջականության մեջ և դիտարկել ոչ թե միայն առկա խնդիրները, այլ՝ նաև բոլոր այն մեխանիզմները, որոնց միջոցով երկրները փորձում են հաղթահարել դրանք: Հոդվածը ցույց է տալիս, որ Իրանը տարածաշրջանում շարունակում է բալանսավորման քաղաքականություն վարել և առաջին հայացքից թվացյալ «փոփոխությունները» նրա վարքագծի մեջ պայմանավորված են բալանսավորման համար անհրաժեշտ ավելի մեծ ջանքերով. զգուշավոր ռեալիզմի մեկնաբանմամբ՝ որքան մեծանում են սպառնալիքները, այնքան մեծանում է գործադրվող անհրաժեշտ քայլերի քանակը՝ այդ սպառնալիքները չեզոքացնելու ու հակընդդեմ սպառնալիքներ ստեղծելու համար:

## Գրականության ցանկ


"Azerbaijan Arrests 22 Suspects in Alleged Iran Spy Plot," *BBC*, March 14, 2012, https://www.bbc.com/news/world-europe-17368576.

"Azerbaijan Launches Large-Scale Attack Against Armenia", *EVN Report,* September 13, 2022, Azerbaijan Launches Large-Scale Attack Against Armenia - EVN Report.

"Golestān treaty", *Encyclopædia Iranica,* Vol. XI, Fasc. 1, pp. 86-90, GOLESTĀN TREATY – Encyclopaedia Iranica (iranicaonline.org)

"Https://Twitter.com/Ab_ganji/Status/1443853234079256583?S=20" Twitter. Accessed July 24, 2023, https://twitter.com/ab_ganji/status/1443853234079256583?s=20.

"Iran Agrees to Import 3.3 Bcm/Year of Russia Gas through Azerbaijan.", *Enerdata,* September 20, 2022, https://www.enerdata.net/publications/daily-energy-news/iran-agrees-import-33-bcmyear-russia-gas-through-azerbaijan.html.

"Iran Congratulates Azerbaijan on Liberation of Shusha.", *Tehran Times*, November 9, 2020, https://www.tehrantimes.com/news/454457/Iran-congratulates-Azerbaijan-on-liberation-of-Shusha.

"Iran Hopes Lachin Corridor Will Be Unblocked through Dialogue between Armenia and Azerbaijan.", *Armenpress*, December 20, 2022, https://armenpress.am/eng/news/1100116.html.

"Iran Recalls Azerbaijan Ambassador over Eurovision "Gay Parade", *The Telegraph*, May 22, 2012, https://www.telegraph.co.uk/culture/tvandradio/9283554/Iran-recalls-Azerbaijan-ambassador-over-Eurovision-gay-parade.html.

"Iran, Azerbaijan to Finalize Deals for Oil, Gas Cooperation." Financial Tribune. November 22, 2021. https://financialtribune.com/articles/energy/111260/iran-azerbaijan-to-finalize-deals-for-oil-gas-cooperation.

"Iran, Turkmenistan and Azerbaijan Sign Gas Swap Deal." *Reuters*, November 28, 2021, https://www.reuters.com/markets/commodities/iran-turkmenistan-azerbaijan-sign-gas-swap-deal-2021-11-28/.

"Iranian Lawmakers Describe Geopolitical Change as Iran's Red-Line", *Farsnews Agency*, October 3, 2021, https://www.farsnews.ir/en/news/14000711000775/Iranian-Lawmakers-Describe-Gepliical-Change-as-Iran%27s-Red-Line.

"Iranian Lawmakers Warn Azerbaijan President over 'Compatriots' Comment.", *Tehran Times*, November 14, 2022, https://www.tehrantimes.com/news/478655/Iranian-lawmakers-warn-Azerbaijan-president-over-compatriots.

"Public Opinion Survey: Residents of Armenia | January-March 2023", International Republican Institute, May 1, 2023, Public Opinion Survey: Residents of Armenia | January-March 2023 | International Republican Institute (iri.org).

"Tehran Protests Eurovision "Gay Parade" in Baku," *Spiegel International*, May 23, 2012, https://www.spiegel.de/international/europe/tehran-protests-eurovision-gay-parade-in-baku-a-834709.html.

"Tehran Protests Eurovision "Gay Parade" in Baku," *Spiegel International*, May 23, 2012, https://www.spiegel.de/international/europe/tehran-protests-eurovision-gay-parade-in-baku-a-834709.html.

"Trade Turnover between Iran, Azerbaijan Increase", *Caliber.az*, July 24, 2023. https://caliber.az/en/post/103851/.

Ahmedbeyli, Samira, "Hunt for "Iranian Spies" Continues in Azerbaijan." *Jamnews*, May 17, 2023, https://jam-news.net/iranian-spies-in-azerbaijan/.

Astakhova, Olesya and Hafezi, Parisa, "Russia and Iran Sign Rail Deal for Corridor Intended to Rival Suez Canal." *Reuters*, May 17, 2023, https://www.reuters.com/world/russias-putin-irans-raisi-oversee-railway-deal-signing-2023-05-17/.

Avdaliani, Emil, *New World Order and Small Regions: The Case of South Caucasus*, 2022. Springer Nature, 14.

Bakhash, Shaul, "Iran's Foreign Policy under the Islamic Republic, 1979–2000". In *Diplomacy in the Middle East*, ed. Leon Carl Broun, (Bloomsbury Academic, 2001), 247-58.

Barry, James, "*Brothers or Comrades at Arms? Iran's Relations with Armenia and Azerbaijan*," in *Iran in the World*: *President Rouhani's Foreign Policy*, ed. Shahram Akbarzadeh and Dara Conduit, (Palgrave MacMillan, 2016), 59-75.

Borschchevskaya, Anna and Tabler, Andrew J "Iran's tensions with Azerbaijan point broader shift in the South Caucasus", *The Washington Institute for Near East Policy,* March 31, 2023, Iran's Tensions with Azerbaijan Point to Broader Shifts in the South Caucasus | The Washington Institute

Cohen, Ronen A. and Lev, Tzvi "A Triangle of Interests: Azerbaijan, Iran and Israel". *Iran and the Caucasus* 25, no.1 (2021): 74–89.

Davoodi, Taghi, "Friendly Relations between Iran and Azerbaijan: A Review", *Mediterranean Journal of Social Sciences* 7, no. 5 (2016): 259.

Favara, Greta "Taking Politics Seriously: A Prudential Justification of Political Realism". *Philosophy & Social Criticism* 49, no. 7, (2023): 0.

Fazeli, Yaghoub, "Azerbaijan Arrests 39 People Accused of Working for Iran amid Tehran-Baku Tensions.", *Al Arabiya*, February 1, 2023,

Flanagan, Stephen J., "The Turkey–Russia–Iran Nexus: Eurasian Power Dynamics," *The Washington Quarterly* 36, no 1 (2013): 163-178.

Gevorgyan, Anna and Kocharyank, Hayk, "The Islamic factor in Azerbaijan and its influence on the security interests of Armenia", *Journal of Oriental Studies* 14, (2018): 336-356.

Ghazanchyan, Siranush, "Rouhani: Iran Ready to Contribute to Karabakh Settlement." *Public Radio of Armenia*, April 9, 2014, https://en.armradio.am/2014/04/09/rouhani-iran-ready-to-contribute-to-karabakh-settlement/.

Golmohammadi, Vali and Azizi, Hamidreza "The South Caucasus in the Regionalism of Iran's Foreign Policy". *Central Eurasia Studies* 15 (2022): 305–281.

Goyushzadeh, Aziza "Iran Holds Military Exercises on Border Amid Tensions With Azerbaijan", *VOA, October 20, 2022,* Iran Holds Military Exercises on Border Amid Tensions With Azerbaijan (voanews.com).

Guzzini, Stefano. "Saving Realist Prudence." In *The Social Construction of State Power: Applying Realist Constructivism*, edited by J. Samuel Barkin, 1st ed., (Bristol University Press, 2020), 217–32.

Hannun, Marya, "News You Might Have Missed: Iran Considers Annexing Azerbaijan (Again)." *Foreign Policy*, April 12, 2013, https://foreignpolicy.com/2013/04/12/news-you-might-have-missed-iran-considers-annexing-azerbaijan-again/.

Isayev, Heydar "Azerbaijani MP survives shooting", *Eurasianet,* March 30, 2023, Azerbaijani MP survives shooting | Eurasianet

Isayev, Heydar, "Azerbaijani embassy in Iran comes under deadly attack", *Eurasianet,* January 27, 2023, Azerbaijani embassy in Iran comes under deadly attack | Eurasianet

Kaleji, Vali, "The Complex Web of Interdependence and Threat Balancing That Prevents War between Iran and Azerbaijan." *Middle East Institute*, April 24, 2023, https://www.mei.edu/publications/complex-web-interdependence-and-threat-balancing-prevents-war-between-iran-and.

Karnitschnig, Matthew "Russia Eyes Iran as Sanctions-Busting Backdoor for Oil Sales." *Politico,* August 23, 2022, https://www.politico.eu/article/russia-eyes-iran-as-sanctions-busting-backdoor-for-oil-sales/.

Khoshnood, Arvin and Khoshnood, Ardavan, "Iran's quandary on Nagorno-Karabakh." *Middle East Quarterly* 28, no. 2 (2021): 7.

Kumar, Manali, "Making Decisions under Uncertainty: The Prudent Judgement Approach". *European Journal of International Security* 8, no. 1 (February 2023): 109-29

Kupchan, Charles A., "After Pax Americana: Benign Power, Regional Integration and the Sources of a Stable Multipolarity". In *The New World Order* (London: Palgrave Macmillan UK, 2000), 134–66.

Lashaki, Abdollah Baei, Masoumeh Rad Goudarzi, and Davood Amraei, “The Roots of Tension in South Caucasus: The Case of Iran-Azerbaijan Relationship”, *Journal of Politics and Law* 6, no. 4 (2013) 141-49

Lotfi, Tavakol, Golmohammadi, Vali and Sarmadi, Hamid,” Political Consideration and Development of Economic Relations, Economic Cooperation Capacities of Iran and the Republic of Azerbaijan”, *Mediterranean Journal of Social Sciences* 7, no. 3 S3, (2016): 72-82.

Mehdi Amiri and Ehsan Fallahi, “Geopolynomics of Iran’s Bilateral Relations with Armenia and the Republic of Azerbaijan from 2013 to 2021”. *Central Eurasia Studies* 15 (2023): 73–101.

Meister, Stefan “Shifting Geopolitical Realities in the South Caucasus”. *Reports, SCEEUS,* November (2021): 1–14.

Nourian, Zeinab, "Investigating the Position of Smart Power in Iran's Foreign Policy towards Armenia", *Iranian politics and law* 1&2, no. 3 &4, (2021): 15-28

Paul, Thazha *Power versus Prudence: Why Nations Forgo Nuclear Weapons* (McGill-Queen’s Press-MQUP, 2000), 28-33.

Rad, Daniel “Azerbaijani, Turkish and Pakistani War Games Appear to Prompt Iran to Move Infantry to Border.” *The Armenian Mirror-Spectator,* September 21, 2021, https://mirrorspectator.com/2021/09/21/azerbaijani-turkish-and-pakistani-war-games-appear-to-prompt-iran-to-move-infantry-to-border/.

Rauschenbakh, Kira, “The Nagorno-Karabakh Conflict Challenges Iran.”, *Critical Threats*, October 7, 2020. https://www.criticalthreats.org/analysis/the-nagorno-karabakh-conflict-challenges-iran.

Sarabi, Kazem, “Iran to Double Volume of Gas Swap with Azerbaijan.”, *Caspian News,* June 4, 2022, https://caspiannews.com/news-detail/iran-to-double-volume-of-gas-swap-with-azerbaijan-2022-6-4-0/.

Sariolghalam, Mahmood, *Iran in Search of Itself, Current History* 107, no. 713 (2008): 425-431.

Sinaee, Mariam, “War of Words Heats up between Iran, Azerbaijan, and Israel.”, *Iran International*, January 10, 2023, https://www.iranintl.com/en/202211001032752.

Souleimanov, Emil, Ehrmann Maya , and Aliyev Huseyn, “Focused on Iran? Exploring the Rationale behind the Strategic Relationship between Azerbaijan and Israel”, *Southeast European and Black Sea Studies* 14, no. 4 (2014): 471–88.

Wei, Liu, “Aristotle, Machiavelli, and Prudential Political Realism”, In *Machiavelli in Northeast Asia*, ed. Jun-Hyeuk Kwak, (London: Routledge, 2022), 26-42.

Yaghoub Fazeli, “Azerbaijan Arrests 39 People Accused of Working for Iran amid Tehran-Baku Tensions.”, *Al Arabiya*, February 1, 2023. https://sq.ax/6Td.

# RED LINES AND GREEN LIGHTS: IRAN’S BALANCING POLICY IN THE SOUTH CAUCASUS

*Anna Gevorgyan*
*Senior Researcher*
*Center for Culture and Civilization Studies*

***Keywords:*** *Iran, Armenia, South Caucasus, security, mercenaries, Turkey, Azerbaijan, EU, gas, oil, Prudential Realism*

After the Nagorno-Karabakh war in 2020, some Iranian political statements that support Armenia's security interests and ongoing "wars of words" between Iran and Azerbaijan led to the development of a theory in the international (including Armenian) scientific and analytical community that Iran has fundamentally altered its stance toward the South Caucasus states.

This tendency had a substantial impact on Armenia’s public perception of Iran. As a vivid example, Iran is considered as Armenia's most significant security partner by 54% of questioned Armenians, according to a 2023 survey conducted by the International Republican Institute.

This article explains Iran's broad geopolitical and security interests in the region and Iran’s balance of power approach via analyzing Iran-Azerbaijan relations using the theory of Cautious Realism. The article demonstrates that Iran's goals and interests in the region have not changed, and it continues its balancing policy and in relations with Azerbaijan uses tools of creating contra threats, as well as rapprochement.

DOI 10.56673/18294502-23.16-33

# ԻՍԼԱՄԻ ԴԵՐԸ ՔՐԴԱԿԱՆ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՄԵՋ

*Տիգրան Չանդոյան*[1]
*ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, իրավագիտության, սոցիոլոգիայի և քաղաքագիտության ինստիտուտ*

**ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ**
Քրդական ազգայնականությունը իր առաջացման և զարգացման ընթացքում առնչվել է իսլամի հետ: Այս առնչությունները դրսևորվել են սուֆիական եղբայրությունների և իսլամական կրթական հաստատությունների՝ մեդրեսեների միջոցով:

Սուֆիական եղբայրությունները կարևոր դեր ունեին քրդերի կյանքում, և քրդական ազգայնական գործիչների մեծամասնությունը, լինելով սուֆիզմի հետևորդ, ձևավորվել է այս ինստիտուտների ներսում:

Մեդրեսեները՝ որպես իսլամական կրթական հաստատություններ, նշանակալի դեր են ունեցել քրդական ազգային տրամադրությունների առաջացման ու քրդական ազգայնականության ձևավորման հարցում: Մեդրեսեներում քրդերենով ուսուցումը նպաստել է ազգային ինքնության հաստատմանն ու հիմք ստեղծել քրդական ազգայնականության համար:

**ՀՈԴՎԱԾԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ**
Ներկայացվել է՝
05 մայիս 2023
Ընդունվել է՝
25 օգոստոս 2023

**ԲԱՆԱԼԻ ԲԱՌԵՐ**
ազգայնականություն, կրոն, իսլամ, սուֆիզմ, մեդրեսե, Օսմանյան կայսրություն, Թուրքիայի Հանրապետություն
**DOI:**
**10.56673/18294502-23.16-33**

## Ներածություն

Քրդական ազգայնականության առաջացման, զարգացման և միտումների մասին խոսելիս կրոնի և ազգայնականության հարաբերությունների ըմբռնումը կարևոր նշանակություն ունի: Քուրդ ժողովրդի պատմության տարբեր ժամանակահատվածներում

[1] Ասպիրանտ, ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, իրավագիտության, սոցիոլոգիայի և քաղաքագիտության ինստիտուտ. էլ. հասցե t.chandoyan1994@gmail.com

քրդական ազգայնականության և իսլամի զուգադրումներն ու հակադրություններն էական նշանակություն են ունեցել քրդական ազգային շարժումների ձևավորման և ընթացքի վրա, և այս գործընթացը շարունակվում է նաև այսօր։ Քրդական ազգայնականության մասին ամբողջական պատկերացում կազմելու համար էական դեր ունի ազգայնականության և իսլամի կապի ուսումնասիրումը, սակայն դրանով հետաքրքրված հետազոտողներն այս հարցը սովորաբար ստորադասում են այլ հարցերի։

Սույն հոդվածի շրջանակներում քննարկելու եմ Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետության տարածքում քրդական ազգայնականության և իսլամի առնչությունները 17-րդ դարից մինչև Քեմալ Աթաթուրքի[2] իրականացրած կրոնական բարեփոխումներն ընկած ժամանակահատվածը՝ ձգտելով պարզել իսլամական որոշ ինստիտուտների ազդեցությունը քրդական ազգայնականության առաջացման և ձևափոխումների վրա։

Կրոնի և ազգայնականության հարաբերությունների հիմնահարցը ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում է 19-րդ դարից։ Սոցիոլոգ Էմիլ Դյուրկհեյմն իր «Կրոնական կյանքի տարրական ձևերը» աշխատության մեջ ազգայնականությունը դիտում է որպես «խորը, կրոնականին ձգտող զգացմունքային երևույթ»[3]։ Բրիտանացի սոցիոլոգ, պատմաբան Էնթընի Սմիթը, զարգացնելով Դյուրկհեյմի տեսությունը, ազգայնականությունը համարում է «ժողովրդական նոր կրոն»՝ պարտադիր ու կրկնվող

---

[2] 1924 թ. մարտի 3-ին ԹԱՄԺ ընդունած օրենքով վերացվեց խալիֆայությունը, Օսմանյան հանեդանը արտաքսվեց երկրից, վերացվեց Շարիաթի և Վակֆերի նախարարությունը։ Դրանից 5 օր անց վերացվեցին շարիաթական դատարանները։ 1925 թ. սեպտեմբերին փակվում են թյուրբեներն ու թեքքեները։ Մանրամասն տե՛ս Ռուբեն Սաֆրաստյան, խմբ., *Թուրքիայի հանրապետության պատմություն* (Երևան: ՎՄՎ-ՊՐԻՆՏ, 2018), Erik J. Zurcher, *Turkey: A Modern History*, (London, New York: I. B. Tauris, 2017).

[3] Մանրամասն տե՛ս Emile Durkheim, *The Elementary Forms of Religious Life,* (New York: Free Press, 1995).

ծիսական դրսևորմամբ և հանրությանը ոգեշնչող բնույթով[4]: Ուիլիամ Հաթչինսոնն ու Հարթմութ Լեհմանը ընդգծում են կրոնի դերը՝ որպես ազգայնականության մշակութային և գաղափարախոսական ատաղձի[5]: Բենեդիկտ Անդերսոնն իր հայտնի գրքում կրոնի դերը ազգայնականության զարգացման մեջ դիտարկում է տպագիր կրոնական տեքստերի միջոցով գրագիտության և կրթության տարածմամբ ազգայնական գաղափարների արմատավորման համատեքստում[6]: Սոցիոլոգ Ռոջեր Ֆրիդլենդը, ազգայնականությունը սահմանելով էտատիզմի շրջանակներում՝ որպես «կոլեկտիվ սուբյեկտների ձևավորման պետականակենտրոն ձև», կրոնը համարում է ընդհանրացնող կարգ, որն ընդունակ է կարգավորել կյանքի բոլոր ոլորտները՝ ի նպաստ պետականության գերակայության[7]:

Կալիֆորնիայի համալսարանի պրոֆեսոր, սոցիոլոգ Ռոջեր Բրուբեյքրը, ընդհանրացնելով կրոնի և ազգայնականության հարաբերությունների ուսումնասիրությունները, դրանք դասակարգում է չորս խմբի: Առաջինը կրոնին և ազգայնականությանը որպես համանման՝ անալոգային երևույթների վերաբերվելն է. մյուս կրոնների նման՝ ազգայնականությունը ներառում է հավատ առ ինչ-որ արտաքին ուժի, ակնածանքի զգացում վերջինիս նկատմամբ և ծեսեր՝ կենտրոնացած պետական խորհրդանիշների՝ դրոշի, օրհներգի, զինանշանի վրա[8]:

---

4 Մանրամասն տե՛ս Anthony D. Smith, *Chosen Peoples,* (Oxford: Oxford University Press, 2003).

5 Մանրամասն տե՛ս William R. Hutchison and Hartmut Lehmann, eds., *Many Are Chosen: Divine Election and Western Nationalisms,* (Minneapolis: Fortress Press, 1994).

6 Մանրամասն տե՛ս Benedict R. Anderson*, Imagined Communities: Reflections on the Origin and Spread of Nationalism. 2nd ed.* (London: Verso, 1991).

7 Մանրամասն տե՛ս Roger Friedland, “Money, Sex, and God: The Erotic Logic of Religious Nationalism.” *Sociological Theory,* no. 20(3), (2002): 381-425.

8 Rogers Brubaker, “Religion and Nationalism: Four Approaches”, *Nations and Nationalism*, no. 18, (2012): 2.

Երկրորդ խմբում կրոնը հանդես է գալիս որպես միջոց՝ բացատրելու ազգայնականությանն առնչվող երևույթները՝ ազգի ծագումը, ուժը և այլն: Կրոնի և ազգայնականության փոխհարաբերությունների այս ձևը ձգտում է հստակեցնել այն ուղիները, որոնցով կրոնն օգնում է բացատրել ազգայնականությունը: Սա կարող է դրսևորվել կրոնական մոտիվների, սյուժեների և խորհրդանիշների քաղաքական տիրույթ փոխադրմամբ և ազգայնական պնդումները կառուցելու համար դրանց օգտագործմամբ[9]: Օրինակ՝ կրոնական հիմնական մոտիվ հանդիսացող ընտրյալության գաղափարը կարևոր մշակութային ու գաղափարական շինանյութ է ազգայնականության համար:

Հաջորդ մոտեցման համաձայն՝ կրոնը ազգայնականության մաս է՝ միմյանց փոխներթափանցված և իրար միահյուսված դրսևորմամբ: Կրոնի և ազգայնականության միջև կապը վերլուծելու այս երրորդ եղանակը կրոնը տեսնում է ոչ թե որպես ազգայնականությունից դուրս ինչ-որ բան, որն օգնում է բացատրել այն, այլ՝ մի երևույթ, որը խորապես միահյուսված է ազգայնականության հետ և ոչ թե դրա արտաքին բացատրությունն է: Այս մեկնաբանությամբ կրոնի սահմանները համընկնում են ազգի սահմանների հետ, և կրոնը կարող է ծառայել որպես հիմնական տարբերակիչ, որը թույլ է տալիս ճանաչել էթնիկ խմբին կամ ազգին[10]:

Եվ վերջապես, ըստ չորրորդ խմբի՝ ազգայնականությունը ինքնին կրոն է՝ հստակ կրոնական տարրերով և դրսևորման ձևերով: Կրոնի և ազգայնականության միջև կապը այստեղ դրսևորվում է այն պնդմամբ, որ կրոնական ազգայնականությունը ազգայնականության առանձնահատուկ տեսակ է[11]:

---

9 Brubaker, “Religion and Nationalism,” 7.
10 Brubaker, “Religion and Nationalism,” 12.
11 Brubaker, “Religion and Nationalism,” 2.

Բրուբեյքրը, խոսելով կրոնականների կողմից գրագիտության տարածման և ժողովրդի լեզվի ստանդարտացման մասին, բերում է ռեֆորմիստների օրինակը, որովհետև վերջիններս կարևորում էին յուրաքանչյուր անհատի կողմից սուրբգրային տեքստերին ծանոթացումն ու ընկալումը[12]: Այս հոդվածը, քննարկելով քրդական ազգայնականության զարգացման գործում մեդրեսեների ունեցած դերը, հաստատում է Բրուբեյքրի պնդումը:

## Քրդական ազգայնականության ուսումնասիրությունների ներկա վիճակը

Քրդական ազգայնականության և իսլամի առնչությունների վերաբերյալ գիտական ուսումնասիրությունները համեստ են: Տարբեր ուսումնասիրողներ քրդական ազգայնականության վերաբերյալ իրենց աշխատանքներում, որպես կանոն, հաճախ անդրադարձ են կատարել նաև իսլամ-քրդական ազգայնականություն հարաբերություններին: Վ. Ջվաիդեհը քրդական ազգային շարժումներին նվիրված իր ուսումնասիրության շրջանակում մասնակիորեն անդրադառնում է այս հարցին միայն սուֆիական եղբայրությունների (տարիկաթների) մասին խոսելիս[13]: Նա քրդական ինքնության հիմքը համարում էր աշիրեթային սոցիալական կազմակերպումը, ինչի ուղղությամբ էլ զարգացել է նրա ուսումնասիրությունը: Քրդական մեդրեսեների վերաբերյալ Զեյնալաբդին Զինարի մենագրությունը[14] օգնում է մասամբ պատկերացում կազմել իսլամական կրթական համակարգի միջոցով քրդերենի

[12] Brubaker, “Religion and Nationalism,” 9.

[13] Wadie Jwaideh, *The Kurdish National Movement, its Origin and Development,* (New York, Syracuse: Syracuse University Press, 2006).

[14] Zeynalabdîn Zinar, *Xwendina Medresê, Kurdî/kurmancî, Şîrovekirin,* (Stockholm: Pencînar Weşanxaneya Çanda Kurdî, 1993).

զարգացման և դրա՝ քրդական ազգայնականության վրա ունեցած ազդեցության մասին: Մ. վան Բրուինեսսենի ուսումնասիրությունը՝ նվիրված քրդական հասարակա-քաղաքական կառուցվածքին, ավելի ընդգրկուն անդրադարձ ունի սուֆիական եղբայրություններին և քրդական հասարակության վրա դրանց ազդեցությանը[15]: Այնուամենայնիվ, այս մենագրությունը քրդական հասարակաքաղաքական կառուցվածքին է նվիրված և քրդական ազգայնականությանը վերջինս անդրադառնում է միայն ընդհանուր գծերով: Շեյխ Սայիդի ապստամբության մասին Ռ. Օլսոնի ուսումնասիրությունը թեմային առնչվող քիչ գրքերից է[16]: Օլսոնը քրդական ազգայնականության ծագումը կապում է շեյխ Ուբեյդուլլահի անվան հետ՝ իր ուսումնասիրության շրջանակներում դրա զարգացումը հասցնելով մինչև Սայիդ Ռըզայի ապստամբությունը: Այս հոդվածը լրացնում է դաշտում եղած բացը և քննարկում է իսլամի և քրդական ազգայնականության կապը:

**Քրդական բնակության աշխարհագրությունը**

Հոդվածի շրջանակներում քննարկվող տարածաշրջանը (ներկայիս Թուրքիայի Հանրապետությունում քրդերի զբաղեցրած բնակտարածությունը) շարունակ գտնվել է աշխարհաքաղաքական գործընթացների կիզակետում: Այստեղ համեմատաբար կայունություն հաստատվեց օսմանյան գերիշխանության հաստատմամբ:

17-րդ դարի առաջին կեսին՝ մասնավորապես 1639 թվականի Ղասրեշիրինի (Զուհաբի) պայմանագրի կնքումից հետո, քուրդ իշխանապետությունների զբաղեցրած տարածքների՝ Օսմանյան

[15] Martin van Bruinessen, *Agha, Shaikh and State, The Social and Political Structures of Kurdistan,* (London: Zed Books, 1992), 213.

[16] Robert Olson, *The Emergence of Kurdish Nationalism and the Sheikh Said Rebellion, 1880-1925,* (Cansas: University of Texas Press, 1989).

կայսրության և Սեֆյան Պարսկաստանի միջև բաժանվելով, քրդական աշիրեթների զգալի մասն անցավ Օսմանյան կայսրության իշխանության տակ: Մոտավորապես այս ժամանակահատվածում Օսմանյան կայսրության հարավարևելյան շրջաններում սկսում են ի հայտ գալ քրդական ազգայնականության ձևավորման վաղ նախադրյալները:

Քրդերը Արևմտյան Ասիայում բնակվող ժողովուրդ են, որի բնակության արեալը ներկայումս բաժանված է չորս պետությունների՝ Թուրքիայի, Իրանի, Իրաքի և Սիրիայի միջև: 17-րդ դարի առաջին կեսին Օսմանյան կայսրության հպատակության տակ անցած քրդական աշիրեթները Առաջին համաշխարհային պատերազմից հետո հայտնվեցին մի իրավիճակում, երբ աշխարհաքաղաքական վերաձևումների արդյունքում չորս տարբեր պետությունների կազմում հայտնված քրդերի յուրաքանչյուր հատվածը ստիպված էր առանձին պայքարել սեփական ինքնորոշման համար:

Քրդերի մեծ մասը սուննի մուսուլմաններ են: Թուրքիայի քրդերի մեծ մասը հարում է սուննի իսլամի շաֆիական մազհաբին, համեմատաբար փոքր թիվ են կազմում հանիֆիական մազհաբի ներկայացուցիչները[17]: Իսլամացումը քրդերի շրջանում սկսվել է արաբների՝ տարածաշրջան մուտք գործելով: Նախքան իսլամացվելը քրդերը մեկ հիմնական կրոնի հետևորդ չեն եղել:

## Քրդերի նախաիսլամական կրոնական հավատալիքները

Քուրդ ժողովրդի ցեղային կառուցվածքը, որով նրանց մեծամասնությունն ապրում էր ընդհուպ մինչև 20-րդ դարի առաջին կեսը, թույլ է տալիս ենթադրել, որ իսլամը քրդերի շրջանում

---

[17] Zeki Sarigil, Omer Fazlioglu. "Exploring the roots and dynamics of Kurdish ethno-nationalism in Turkey", *Nations and Nationalism* 20, no. 3, (2014): 447, Bilkent University.

տարածվել և արմատավորվել է աստիճանաբար և երկարատև ժամանակահատվածում, քանի որ քուրդ հանրույթի միատարր ու կենտրոնացված լինելը գործնականում դժվարացնում էր իսլամի քարոզումն ու տարածումը:

Ցեղային կառուցվածքը մեծ նշանակություն է ունեցել քրդերի կյանքում, և այսօր էլ, չնայած ցեղային համակարգի գրեթե վերացած լինելուն, այն շարունակում է էական դեր ունենալ քրդերի աշխարհայացքում, քանի որ ցեղը նույնականացվում է ազգակցական կապերի, մեծ ընտանիքի, հասարակության մեջ սեփական դիրքի գրավման և այլնի հետ[18]: Այն քրդերի ինքնության կարևոր բաղադրիչներից մեկն է: Քրդական ցեղերի մեջ տարածված էր այս կամ այն հայտնի քաղաքական կամ կրոնական դեմքի հետ կապել սեփական ցեղի ծագումը՝ այսպիսով միմյանց ազնվական ծագում վերագրելով. օրինակ Զաֆ ցեղը որպես իր նախնի համարում էր Սալահ ադ-Դինին[19]: Այս առումով յուրաքանչյուր ցեղ ինքնին մի փոքր հանրույթ էր, որը, չնայած նույն լեզվի և մշակույթի կրողն էր, իրեն մյուս ցեղերից առանձին և տարբեր էր ընկալում: Արդյունքում որևէ գաղափարի տարածումը նման միջավայրում հանդիպում էր լրացուցիչ դժվարությունների: Մասնավորապես սա դրսևորվում էր իսլամի պարագայում, և դրանով կարող է պայմանավորված լինել իսլամի տարածման դանդաղ տեմպը քրդական միջավայրում:

Իր մենագրության մեջ, խոսելով քրդերի նախաիսլամական հավատքի մասին, Արշակ Փոլադյանը նշում է, որ քրդերի շրջանում տարածված են եղել ինչպես բազմաստվածական, այնպես էլ՝ միաստվածական կրոններ[20]: Աշխարհի արարչա-գործությունից

[18] David McDowall, *A Modern History of The Kurds, 4th edition,* (London, I. B. Tauris, 2021): 14.
[19] McDowall, *A Modern History of The Kurds,* 15, n. 18.
[20] Аршак Поладян, *Курды в VII-X веках по арабским источникам,* (Ереван: НАН, 1987).

մինչև 1231 թվականի եղելությունները նկարագրող Իբն ալ-Ասիրի «Լիակատար պատմության» մեջ, 10-11-րդ դարերի իրադարձությունների մասին խոսելիս, քրդերը դեռևս հիշատակվում են որպես «հեթանոսներ», «ապականողներ»[21]: 19-րդ դարում Օսմանյան կայսրության տարածքով ճանապարհորդած Ջոն Թեյլորը իր ուղեգրություններում վկայում է Սասունում ապրող քրդական Բալաքի աշիրեթի մասին, որի անդամները ո՛չ քրիստոնյա էին, ո՛չ մուսուլման, ո՛չ էլ՝ եզդի[22]: Նույնչափ մշուշոտ է քրդերի նախաիսլամական շրջանի կրոնի (կամ կրոնների) և հավատալիքների հարցը, քանի որ քննարկվող շրջանից հարցին առնչվող պատմագրական կամ այլ բնույթի վկայություններ մեզ չեն հասել: Ներկայումս քուրդ ազգայնականների կողմից որպես քարոզչանյութ շրջանառվող այն թեզը, թե քուրդ ժողովուրդը նախքան իսլամ ընդունելը դավանել է զրադաշտականություն, ապացուցված չէ. անգամ եթե ընդունենք դա, հնարավոր չէ պատասխանել այն հարցին, թե ինչ չափով է զրադաշտականությունը տարածված եղել քոչվորական կենսակերպ վարող քրդերի միջավայրում, որպես կրոն ինչ տեղ է զբաղեցրել քոչվոր-ցեղային հասարակարգում և այլն[23]: Հաշվի առնելով քրդական ցեղերի տարածման արեալը և այդտեղ իսլամի մուտք գործելուն նախորդած ժամանակահատվածում տարածված կրոնների և աղանդների ընդհանուր պատկերը՝ կարելի է

[21] Իբն ալ-Ասիր, *Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, արաբական աղբյուրներ Բ,* թարգմ., առաջաբանը և ծանոթագրությունները՝ Արամ Տեր-Ղևոնդյան, (Երևան: ԳԱԱ, 1981) 52, 105:

[22] John G. Taylor, “Travels in Kurdistan, with Noticed of the Sources of the Eastern and Western Tigris and Ancient Ruins in the Neighborhood”, *Journal of the Royal Geographical Society* no. 35, (1865): 28-29.

[23] "Hopes for Zoroastrianism revival in Kurdistan as first temple opens its doors”, Rudaw, վերջին մուտք՝ 05.06.2023 թ., https://www.rudaw.net/english/kurdistan/210920163.

ենթադրել, որ նախաիսլամական շրջանի քրդական կամ պրոտո-քրդական ցեղերը չեն դավանել մեկ հիմնական կրոն[24]:

Այն մասին, որ նախաիսլամական շրջանում քրդերի մի մասը դավանել է քրիստոնեություն, փաստում են որոշ պատմական վկայություններ, ըստ որոնց՝ ասորի հոգևորականները քարոզչություն են իրականացրել Հարավային Միջագետքի քրդաբնակ շրջաններում, ինչի արդյունքում քրդերի մի ստվար զանգված քրիստոնեություն է ընդունել[25]:

**Քրդերի իսլամացումն ու սուֆիականության դերը**

Իսլամացումը քրդերի շրջանում սկսվել է արաբների՝ տարածաշրջան մուտք գործելով: Այս մասին պահպանված սկզբնաղբյուրներ չեն հասել մեզ: Նախորդ դարում քուրդ գիտնականների շրջանում փորձեր էին կատարվում քրդերի իսլամացման ժամանակը հասցնել ընդհուպ մինչև Մուհամմադ մարգարեի ապրած ժամանակաշրջան, ինչը, եթե թյուրիմացության արդյունք չէր, ապա գոնե փորձ էր բարձրացնելու քրդերի հեղինակությունն իսլամական միջավայրում: Այս պնդումը հերքվել է, քանի որ Արաբական թերակղզում իսլամի առաջացման շրջանում քրդերի գոյությունը փաստող վկայություն չկա[26]:

Քրդերի շրջանում նշանակալի թիվ են կազմում սուննի մուսուլմանները: Թուրքիայի քրդերի մեծ մասը հարում է սուննի իսլամի շաֆիական մազհաբին, համեմատաբար փոքր թիվ են կազմում հանաֆիական մազհաբի ներկայացուցիչները[27]: Սուֆիական եղբայրությունները քուրդ ազգայնականության վրա իսլամի ունեցած ազդեցության դրսևորման կարևոր

[24] Поладян, *Курды в VII-X веках,* 66-69.
[25] Jwaideh, *The Kurdish National Movement,* 18.
[26] Поладян, *Курды в VII–X веках,* 69.
[27] Sarigil and Fazlioglu, "Exploring the roots and dynamics," 447.

ինստիտուտներ էին, որոնք Օսմանյան կայսրության քրդաբնակ շրջաններում մեծ հեղինակություն ունեին:

Սուֆիզմը իսլամական միստիկ ուսմունքների համակարգ է, որը երկար զարգացման ուղի է անցել և իր գոյության սկզբնական շրջանում բացառապես հոգևոր-միստիկ նպատակներ ուներ. այն հոգևոր ճանապարհ էր «աստվածային ճշմարտության» ճանաչմանը հասնելու համար: Սուֆիական եղբայրությունները ձևավորվեցին ավելի ուշ շրջանում՝ 14-րդ դարում: Եղբայրությունների տարածմամբ և դրանց վարպետ-ուսուցիչ-առաջնորդների՝ շեյխերի ժողովրդակա-նության աճին զուգահեռ սուֆիական եղբայրությունները սկսեցին նոր նշանակություն ու գործառույթներ ձեռք բերել. շեյխերը և այլ բարձրաստիճան սուֆիներ աստիճանաբար «միջնորդի» դեր ստանձնեցին իրենց հետևորդների և Ալլահի միջև, ինչը նրանց մեծ խարիզմա և հեղինակություն էր հաղորդում և շեշտակիորեն ավելացնում էր նրանց հետևորդների թիվը, ինչը հաճախ օգտագործվում էր աշխարհիկ՝ հիմնականում քաղաքական նպատակներով[28]: Քրդական ազգայնականության վրա նշանակալի ազդեցություն են ունեցել մասնավորապես նակշբանդիական եղբայրությունը ներկայացնող շեյխերն ու նրանց ընտանիքները:

14-15-րդ դարերում սուֆիական եղբայրությունները տարածվեցին Միջագետքում, Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության մյուս քրդաբնակ շրջաններում[29]: Եղբայրություններից առավել ազդեցիկ էին կադիրիական և նակշբանդիական եղբայրությունները, որոնցից և դուրս եկան քուրդ ազգայնականության պատմության մեջ առանցքային դերակատում ունեցած գործիչներ:

---

[28] Սուֆիզմի մասին մանրամասն տե՛ս Martin Lings, *What is Sufism?* (Berkly and Los Angeles, University of California Press, 1975).

[29] Bruinessen, *Agha, Shaikh and State,* 213.

19-րդ դարում Քրդստանի ամենաազդեցիկ եղբայրությունը կադիրիականն էր[30]: 1800-ականների սկզբում Քրդստանում ձևավորվել էին կադիրիական երկու ազդեցիկ շեյխական ընտանիք-կլաններ, որոնք, իրենց պնդմամբ, սերում էին եղբայրության հիմնադիր Աբդուլ Քադիր Գիլանիից. այդ ընտանիքներից մեկը՝ Բարզանջի ընտանիքը, ծագում էր Սուլեյմանիեի մոտ գտնվող Բարզանջ գյուղից, մյուսը Սայիդ-ի Նեհրի ընտանիքն էր Հաքքարիում[31]:

Ժամանակագրական կարգով երկրորդ՝ նակշբանդիական եղբայրությունը Դիարբեքիրում և մյուս քրդաբնակ շրջաններում սկսեց տարածվել 17-րդ դարից սկսած, չնայած ստեղծվել էր ավելի վաղ՝ 14-րդ դարում[32]: Նակշբանդիականների արագ տարածման հիմնական պատճառը այս եղբայրության ճկուն կառուցվածքն ու ժողովրդի ցածր խավերին հասանելիությունն էր: Քաղաքական առումով նակշբանդիականների տարածմանը նպաստեց Օսմանյան կայսրությունում գործող մեկ այլ տարիկաթի՝ բեքթաշիական սուֆիական եղբայրության հանդեպ պետության ճնշումները[33]. սա նակշբանդիականների և բեքթաշիականների՝ Օսմանյան կայսրությունում քաղաքական ազդեցության մեծացման նպատակով տարված պայքարում նակշբանդիականների հաղթանակի արդյունքներից մեկն էր: Բացի այդ բեքթաշիները շիայադավան էին. նրանց թեքքեները՝ սուֆիական

---

[30] Bruinessen, *Agha, Shaikh and State,* 213.

[31] McDowall, *A Modern History of The Kurds,* 58.

[32] McDowall, *A Modern History of The Kurds,* 58.

[33] Բեքթաշիականությունը հատկապես մեծ տարածում ուներ ենիչերիների շրջանում, և վերջիններիս կողմից սուլթանի իշխանությանն ուղղված սպառնալիքի չեզոքացման քայլերից մեկն էլ այդ բեքթաշիների նկատմամբ ճնշումներն էին: Տե՛ս McDowall, *A Modern History of The Kurds,* 58.

հավաքատեղիները, հաճախ խլվելով նրանցից, հանձնվում էին նակշբանդիականներին[34]:

Նակշբանդիական եղբայրությունը Քրդստանում տարածվեց Ջաֆ աշիրեթից սերող քուրդ Մոուլանա Խալիդի (1776-1827) և նրա հետևորդների կողմից: Այն շատ արագ տարածում գտավ և կարճ ժամանակում իր ազդեցիկությամբ գերազանցեց կադիրիական եղբայրությանը՝ իր շարքերը ներգրավելով անգամ կադիրիական եղբայրության անդամների մի մասին[35]:

19-րդ դարում քրդաբնակ տարածքներում Բարձր Դռան իրականացրած բարեփոխումները իշխանության կենտրոնաձիգ կառավարումը հաստատելու առումով դրական արդյունքներ տվեցին, սակայն օսմանյան կառավարության նշանակած պաշտոնյաները չունեին այն լեգիտիմությունն ու ազդեցությունը, որն ունեին քուրդ միրերը նախկինում[36]: Ստեղծված անիշխանության իրավիճակը առաջացրել էր իշխանության վակուում, որը լցնելու եկան Նակշբանդիական և Կադիրիական եղբայրությունների քուրդ շեյխերը[37]: Նրանք վայելում էին մեծ հարգանք հանրության շրջանում, ազդեցիկ էին նաև քրդական միջավայրից դուրս և հետևորդներ ունեին Օսմանյան կայսրության մեծ մասում և պարսկական Քրդստանում: Հենց այս շեյխերն ու շեյխական ընտանիքներն (Բարզանի, Բարզանջի, Շամդինանի[38]) էլ հանձն առան քրդական ցեղերի առաջնորդումը և ավելի մեծ խնդիրներ ստեղծեցին կենտրոնական իշխանությունների համար, քան միրերը:

---

[34] McDowall, *A Modern History of The Kurds,* 59, n. 40.

[35] McDowall, *A Modern History of The Kurds,* 58-60.

[36] McDowall, *A Modern History of The Kurds,* 69.

[37] Ahmed Serdar Akturk, “The Development of the Kurdish National Movement in Turkey from Mahmud II to Mustafa Kemal Ataturk” in *Routledge Handbook on the Kurds,* ed. Michael M. Gunter, (NY: Routledge, 2019), 63.

[38] Akturk, “The Development of the Kurdish National Movement,” 64.

Շեյխական իշխանության ամենաակնառու օրինակը կարելի է համարել շեյխ Ուբեյդուլլահին: Նա, իրեն Մուհամմադ մարգարեի ժառանգորդ հայտարարելով[39] ու ահռելի հոգևոր և քաղաքական լեգիտիմություն գեներացնելով, իր շուրջը համախմբեց հանրային լայն զանգվածների և կարողացավ իր իշխանությունը տարածել Բոհթանի, Բեհդինանի, Հաքքարի, ինչպես նաև՝ Ղաջարական Պարսկաստանի Արդալան քրդաբնակ շրջանի վրա[40]: 1880 թվականին, ներխուժելով Պարսկաստան, նա պնդում էր, որ գործում է քուրդ ժողովրդի անունից[41]: Թավրիզում Մեծ Բրիտանիայի գլխավոր հյուպատոս Ուիլյամ Աբբոթին իր գործողությունների դրդապատճառները շեյխ Ուբեյդուլլահը բացատրում է այսպես.

> «Քուրդ ազգը առանձին ժողովուրդ է: Նրա կրոնն ուրիշ է, և նրա օրենքներն ու սովորույթները տարբեր են... Քրդստանի ցեղապետերն ու կառավարիչները, լինեն նրանք թրքահպատակ թե պարսկահպատակ, և Քրդստանի բոլոր բնակիչները մեկ են և միասնական... Մենք ցանկանում ենք մեր ձեռքն առնել մեր գործերը»[42]:

Դեռևս նրա ժամանակակիցների կողմից սա դիտվում էր որպես Օսմանյան կայսրության և Ղաջարական Պարսկաստանի տարածքներում բնակվող բոլոր քրդերի միավորման և առանձին սուվերեն միավորի ստեղծման ուղղությամբ գործողություն, որի

[39] Jwaideh, *The Kurdish National Movement,* 78-80.
[40] Akturk, "The Development of the Kurdish National Movement," 64, McDowall, *A Modern History of The Kurds,* 70.
[41] McDowall, *A Modern History of The Kurds,* 70.
[42] Correspondence Respecting the Kurdish invasion of Persia, Sheikh Obeidallah to Dr Cochran, 5 October 1880, Inclosure in Abbott to Thomson, Urumiya, 7 October 1880, *Parliamentary Papers,* Turkey No. 5 (1881).

գլխին կանգնած էր շեյխ Ուբեյդուլլահը[43], և ում աջակցում էին մի քանի քրդական աշիրեթներ ևս[44]:

Օսմանյան սուլթանների բարեհաճ վերաբերմունքը նակշբանդիականների նկատմամբ պայմանավորված էր հետևյալով. **ա.** նակշբանդիականները խստորեն հետևում էին շարիաթին և պահպանում այն[45], **բ.** նրանք սուլթանության և խալիֆայության հանդեպ հավատարմություն և ակնածանք ունեին: Հենց սա էր պատճառը, որ Մուստաֆա Քեմալը, երբ վերացրեց խալիֆայությունն[46] ու արտաքսեց սուլթանին և վերացրեց շարիաթական դատարանները, բախվեց քրդերի բուռն հակազդեցությանը, որը նակշբանդական քուրդ շեյխ Սայիդի գլխավորությամբ վերաճեց հուժկու ապստամբության[47]:

Շեյխ Սայիդը, խալիֆայության վերականգման նպատակով համագործակցելով շեյխ Աբդուլկադիրի, այլ քուրդ ցեղապետերի, օսմանյան նախկին սպաների և պաշտոնյաների հետ, պատերազմ հայտարարեց քեմալականներին: Սկսվելով 1925 թվականի փետրվարին՝ այդ ընդվզումը տևեց մոտ մեկ ամիս: Թուրքիայի նորանշանակ վարչապետ Իսմեթ Ինյոնյուին հաջողվեց ճնշել ապստամբությունը, իսկ շեյխ Սայիդին և ապստամբության 46 մյուս առաջնորդներին սեպտեմբերի 4-ին Դիարբեքիրում մահապատժի

[43] Thomson to Granville, Tehran, 31 October 1880, *Parliamentary Papers,* Turkey No. 5 (1881): Տե՛ս նաև Abbott to Thomson, Urumiya, 7 October 1880, Inclosure 1 in No. 61, *Parliamentary Papers,* Turkey No. 5 (1881).

[44] Շեյխ Ուբեյդուլլահի՝ Պարսկաստան ներխուժման ընթացքում նրան միացել են *մանգուր, զարզա, պիրան* աշիրեթները՝ այսպիսով կազմելով մոտ 20000-ի հասնող անկանոն բանակ:

[45] McDowall, *A Modern History of The Kurds,* 60.

[46] Խալիֆը Մարգարեին փոխարինողն ու ումմայի՝ բոլոր մուսուլմանների համայնքի առաջնորդն է: 1924 թվականին ԹԱՄԺ ընդունած օրենքով խալիֆայությունը վերացվեց: Մանրամասն տե՛ս Նաիրա Սահակյան, «Խալիֆայության սուննիական տեսության պատմական զարգացումը», *Քաղաքական և մշակութային հետազոտությունների կենտրոն, Վերլուծական տեղեկագիր,* ԵՊՀ, no. 7 (2015), 30-71,

[47] Akturk, “The Development of the Kurdish National Movement,” 69.

ենթարկեցին[48]: Այստեղ, անդրադառնալով կրոնի և ազգայնականության փոխհարաբերությունների՝ Բրուբեյքրի տված դասակարգման չորս կետերին, կարող ենք նկատել, որ շեյխ Սայիդի ապստամբությունը համապատասխանում է նշված դասակարգման երկրորդ կետին, քանի որ կրոնական հասկացություններն ու ինստիտուտները գալիս են բացատրելու և լեգիտիմացնելու ըստ էության իրենից ազգայնական շարժում ներկայացնող քաղաքական գործողությունները[49]:

Հանրապետական Թուրքիայում աշխարհիկացման քաղաքականության արդյունքում սուֆիական եղբայրությունները դադարեցին քաղաքական գործոն լինելուց և ընդհատակ անցան, սակայն քեմալականներին չհաջողվեց ամբողջովին ոչնչացնել դրանք: Գաղտնի գործունեություն ծավալելով քրդաբնակ շրջաններում՝ դրանք շարունակում էին զարգանալ՝ սպասելով բարենպաստ իրավիճակի, որն առաջացավ միակուսակցական համակարգի փլուզմամբ[50] (1950): Ստեղծված նոր պայմաններում քուրդ ազգայնականության և իսլամի հարաբերությունները զարգացան այլ ընթացքով, որը ուսումնասիրման այլ թեմա է և չի մտնում սույն հոդվածի տրամաբանության մեջ:

## Իսլամական կրթության դերը քրդական ազգայնականության ձևավորման գործում

Քրդական ազգայնականության առաջացման և զարգացման մեջ իսլամական կրթության դերը ևս մեծ է: Քրդական ազգայնականության նախադրյալներն ի հայտ եկան իսլամական առաջնային կրթարաններում՝ մեդրեսեներում: Բացի այն, որ մեդրեսեներում, հոգևոր կրթություն տալով, պատրաստում էին

[48] McDowall, *A Modern History of The Kurds,* 202.

[49] Brubaker, “Religion and Nationalism,” 7.

[50] Մանրամասն տե՛ս Zurcher, *Turkey: A Modern History,* 208-243.

իսլամական կրոնագետների, պետք է ի նկատի ունենանք, որ կրթություն ստանալու այլ տարբերակ, քան մեդրեսեններն էին, Օսմանյան կայսրության քրդաբնակ շրջանների մուսուլմանները չունեին: Մեդրեսեներ էին հիմնվել և գործում Օսմանյան կայսրության քրդաբնակ շրջանների խոշոր քաղաքներում՝ Դիարբեքիրում, Ջզիրեում, Բայազետում, Բիթլիսում, Խիզանում, Մոկսում, Սիլվանում, Սղերդում, Բալուում, Վանում և այլուր[51]: Միայն Բիթլիսում գործել է ավելի քանի հինգ մեդրեսե: Ստեղծված լինելով 11-12-րդ դդ.՝ դրանցից շատերը հայտնի էին ամբողջ տարածաշրջանում, և այնտեղ քրդերից բացի ուսանելու էին գալիս նաև թյուրքեր, պարսիկներ, արաբներ: Դրանցից էին, օրինակ, Կարմիր մեդրեսեն (Medreseya Sor) Ջզիրեում, Սըթրաբաս մեդրեսեն (Sıtrabas Medrese) Դիարբեքիրում և այլն: Մեդրեսեի շրջանավարտներ են այնպիսի հայտնի քուրդ գործիչներ, ինչպիսիք են Ֆեքիյե Թեյրանը, շեյխ Թահա Նեհրին, շեյխ Ուբեյդուլլահը, Ահմադե Խանին և այլք[52]:

Կրթությունը մեդրեսեններում երկլեզու էր՝ արաբերեն և քրդերեն, որոշ մեդրեսեններում որպես ուսուցման լեզու կիրառվում էր նաև պարսկերենը: Օսմաներենը, լինելով պաշտոնական գրագրության լեզու, չէր ուսուցանվում մեդրեսեններում: Այսպիսով, առնվազն քրդերենով (կուրմանջի բարբառով) կրթությունը հնարավորություն էր ընձեռում իսլամական միջավայրում ազգային ինքնության առաջնային բաղադրիչի՝ լեզվի զարգացման համար: Մեդրեսեններում օգտագործվող հիմնական դասագրքերից, որոնց թիվը մոտ 23 էր, 7–ը քրդերեն էին: Թե՛ դրանք, թե՛ արաբերեն դասագրքերի մի զգալի մասը ստեղծվել էին մեդրեսեի շրջանավարտ քուրդ մտավորականների կողմից[53]: Քուրդ

[51] Zinar, *Xwendina Medresê,* 11.
[52] Zinar, *Xwendina Medresê,* 11-13.
[53] Zinar, *Xwendina Medresê,* 61-100.

ազգայնականության ձևավորման մեջ լեզվի կարևորության մասին խոսելիս Ամիր Հասանփուրը առաջ է քաշում «լեզվաբանական ազգայնականություն»[54] հասկացությունը: Հասանփուրը[55], վերլուծելով քուրդ բանաստեղծ Ահմադե Խանիի (1651–1706) «Մամե ու Զինե» կամ «Մամ ու Զին» պոեմը[56], ցույց է տալիս մայրենի լեզվի կարևորության գիտակցումը Ա. Խանիի կողմից. վերջինս, գիտակցելով հանդերձ, որ տարածաշրջանում տվյալ ժամանակաշրջանում գրական լեզուն ֆարսին էր, որն ուներ բարձր հեղինակություն և հարուստ գրական ավանդույթ և տիրապետելով հանդերձ ֆարսիին՝ այնուամենայնիվ իր պոեմը շարադրել է մայրենի քրդերենով՝ հավակնելով այն հավասարեցնել ֆարսիի կարգավիճակին[57]՝ չնայած վերջինիս գրական ավանդույթի բացակայությանը:

**Եզրակացություն**

Քրդական ազգայնականությունը, ինչպես տեսանք, 17-րդ դարից մինչև Թուրքիայի Հանրապետության վաղ շրջան ձևավորվել է՝ իր հիմքում ունենալով երկու իսլամական ինստիտուտներ՝ սուֆիական եղբայրությունները և մեդրեսեները: Ընդ որում, եթե երկրորդը քրդական ազգայնականության ձևավորման և զարգացման վրա ունեցել է անուղղակի ազդեցություն, ապա սուֆիական եղբայրությունները ուղղակի գործոն են եղել քրդական ազգայնականության զարգացման մեջ:

---

[54] Amir Hassanpour, “The making of Kurdish identity: Pre- 20th century historical and literary discourses”, in *Essays on the origins of Kurdish nationalism*, ed. Abbas Vali, (Costa Mesa: Mazda Publishers, 2003) 126-127.

[55] Ամիր Հասանփուրը (1943-2017) իրանցի քուրդ գիտնական է, ում գիտական հետաքրքրության շրջանակը ներառում է քրդերենի և քրդական ազգայնականության առնչությունները և հարակից հարցեր:

[56] Hassanpour, “The making of Kurdish identity”, 126.

[57] Amir Hassanpour, *Nationalism and language in Kurdistan,* (San Francisco: Mellon Press, 1992) 86.

Սուֆիական եղբայրությունները քրդաբնակ շրջաններում իրենց ստեղծումից մինչև Թուրքիայի Հանրապետության կողմից դրանց արգելումը եղել են քուրդ բնակչության համախմբող և գաղափարախոսական հզոր գործիքներ: Շեյխերի ունեցած ահռելի ազդեցությունը թույլ է տվել ծրագրելու և իրականացնելու զանգվածային շարժումներ, որոնց մի մասը քննարկվեց այս հոդվածում: Ունենալով որոշակի հավակնություններ և նկրտումներ, ինչպիսիք էին ինքնիշխանության ձեռքբերումը՝ շեյխ Ուբեյդուլլահի դեպքում կամ խալիֆայության վերականգնումը՝ շեյխ Սայիդի դեպքում, ինչպես նաև տիրապետելով որոշակի ռեսուրսների դրանք նախաձեռնելու համար՝ սուֆիական եղբայրոյթունների առաջնորդները գիտակցում էին, որ միայն կրոնական զգացումները բավարար չեն այդ նախաձեռնությունների իրականացման համար, քանի որ հաճախ պայքարի հակառակ կողմում ևս նույնադավաններ էին, օրինակ՝ թուրքեր: Նրանք հանգեցին այն մտքին, որ անհրաժեշտ էր որպես խթան որդեգրել և կիրառել այլ գաղափարախոսություն ևս, ինչն այս դեպքում, ինչպես տեսանք, քրդական ազգայնականությունն էր: Այսպիսով, սուֆի շեյխերի ունեցած հեղինակությունն ու ազդեցությունը, որի աղբյուրը կրոնական խարիզման էր, ուղղակիորեն նպաստում էր քրդերի շրջանում ազգայնական գաղափարախոսության տարածմանը:

Երկրորդ գործոնը՝ մեդրեսեները, ևս ունեցել են մեծ դեր: Մեդրեսեներում Օսմանյան կայսրության քրդաբնակ շրջաններում իրականացնում էին քրդերենի ամրապնդման անուղղակի գործառույթ՝ նախահիմք ստեղծելով ազգային ինքնության գիտակցման և ազգայնականության առաջացման համար: Մեդրեսեներում էին կրթվում և պատրաստվում այն անհատները, որոնք ձևավորում և առաջնորդում էին ազգայնական շարժումները, ստանձնում էին ազգայնականության գաղափարախոսի դերը: Մեդրեսեներում քրդերեն լեզվով իրականացվող կրթությունը վարչական լեզու օսմաներենի և կրոնական լեզու արաբերենի

զերիշխող միջավայրում ինքնության պահպանման, խթանման և զարգացման միջոց էր: Եթե օսմանյան վերնախավում թուրքերենը ընկալվում էր որպես գավառական խոսվածք և իր տեղը զիջում էր օսմաներենին, ապա քրդական վերնախավում նման երևույթ չէր նկատվում, քանի որ մեդրեսեներում կրթություն ստացած և վերնախավ ձևավորած անհատների համար քրդերենը ևս հանդես էր եկել որպես կրթության լեզու, ինչը չէր կարող ազդեցություն չունենալ լեզվի և ազգայնականության կապերի ամրապնդման հարցում:

## Գրականության ցանկ

Ալ-ասիր, Իբն: *Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, արաբական աղբյուրներ Բ*, թարգմ., առաջաբանը և ծանոթագրությունները՝ Արամ Տեր-Ղևոնդյան. Երևան: ԳԱԱ, 1981:

Սահակյան, Նաիրա: «Խալիֆայության սուննիական տեսության պատմական զարգացումը»: *ՔՄՀԿ Վերլուծական տեղեկագիր* no. 7 (2015), 30-71, ԵՊՀ:

Поладян, Аршак. *Курды в VII-X веках по арабским источникам*. Ереван: НАН, 1987.

Abbott to Thomson, Urumiya, 7 October 1880, Inclosure 1 in No. 61, *Parliamentary Papers,* Turkey No. 5 (1881).

Akturk, Ahmed Serdar. “The Development of the Kurdish National Movement in Turkey from Mahmud II to Mustafa Kemal Ataturk.” In *Routledge Handbook on the Kurds*, edited by Michael M. Gunter, 63. NY: Routledge, 2019.

Anderson, Benedict R. *Imagined Communities: Reflections on the Origin and Spread of Nationalism*. 2nd ed. London: Verso, 1991.

Brubaker, Rogers. “Religion and Nationalism: Four Approaches.” *Nations and Nationalism*, no. 18, (2012): 2.

Bruinessen, Martin van. *Agha, Shaikh and State, The Social and Political Structures of Kurdistan*. London: Zed Books, 1992.

Correspondence Respecting the Kurdish invasion of Persia, Sheikh Obeidallah to Dr Cochran, 5 October 1880, Inclosure in Abbott to Thomson, Urumiya, 7 October 1880, *Parliamentary Papers*, Turkey No. 5 (1881).

Durkheim, Emile. *The Elementary Forms of Religious Life*. New York: Free Press, 1995.

Friedland, Roger. “Money, Sex, and God: The Erotic Logic of Religious Nationalism.” *Sociological Theory*, no. 20(3), (2002): 381-425.

Hassanpour, Amir. “The making of Kurdish identity: Pre- 20th century historical and literary discourses.” In *Essays on the origins of Kurdish Nationalism*, edited by Abbas Vali, 126-127. Costa Mesa: Mazda Publishers, 2003.

Hassanpour, Amir. *Nationalism and Language in Kurdistan*. San Francisco: Mellon Press, 1992.

Hutchison William R., and Hartmut Lehmann, eds. *Many Are Chosen: Divine Election and Western Nationalisms*. Minneapolis: Fortress Press, 1994.

Jwaideh, Wadie. *The Kurdish National Movement, its Origin and Development*. New York, Syracuse: Syracuse University Press, 2006.

Lings, Martin. *What is Sufism?* Berkly and Los Angeles, University of California Press, 1975.

McDowall, David. *A Modern History of The Kurds,* 4th edition. London, I. B. Tauris, 2021.

Olson, Robert. *The Emergence of Kurdish Nationalism and the Sheikh Said Rebellion, 1880-1925*. Cansas: University of Texas Press, 1989.

Rudaw. "Hopes for Zoroastrianism revival in Kurdistan as first temple opens its doors”, վերջին մուտք՝ 05.06.2023 թ. https://www.rudaw.net/english/kurdistan/210920163.

Sarigil, Zeki and Fazlioglu, Omer. "Exploring the roots and dynamics of Kurdish ethno-nationalism in Turkey." *Nations and Nationalism* 20, no. 3, (2014): 447, Bilkent University.

Smith, Anthony D. *Chosen Peoples*. Oxford: Oxford University Press, 2003.

Taylor, John G. “Travels in Kurdistan, with Noticed of the Sources of the Eastern and Western Tigris and Ancient Ruins in the Neighborhood”, *Journal of the Royal Geographical Society* no. 35, (1865).

Thomson to Granville, Tehran, 31 October 1880, Parliamentary Papers, Turkey No. 5 (1881):

Zinar, Zeynalabdîn. Xwendina Medresê, Kurdî/kurmancî, Şîrovekirin. Stockholm: Pencînar Weşanxaneya Çanda Kurdî, 1993.

Zurcher, Erik J. *Turkey: A Modern History*. London, New York: I. B. Tauris, 2017.

# THE ROLE OF ISLAM IN THE EMERGENCE OF KURDISH NATIONALISM

*Tigran Chandoyan*
*PhD Student*
*Institute of Philosophy, Sociology and Law, NAS RA*

***Keyword:*** *nationalism, religion, Sufism, medrese, Ottoman Empire, Republic of Turkey*

This article delves into the intricate relationship between Kurdish nationalism and Islam during its formative years and subsequent development. The historical backdrop reveals a profound interconnection, with profound implications for the shaping of Kurdish national identity. Kurdish nationalism's emergence and evolution were deeply enmeshed with Islamic influences. This connection found its expression through the pivotal roles played by Sufi brotherhoods and Islamic educational institutions known as madrasas.

Sufi brotherhoods occupied a central position in the lives of Kurds, and it is notable that a significant majority of prominent Kurdish nationalist figures were devout followers of Sufism, nurtured within the nurturing embrace of these brotherhoods. In their turn, medreses, functioning as indispensable Islamic educational establishments, exerted a substantial influence on the rise of Kurdish national sentiments and the eventual crystallization of Kurdish nationalism. Notably, the inclusion of Kurdish language instruction within the curriculum of medreses played a pivotal role in fostering a distinct national identity, thereby providing a sturdy foundation for the emergence of Kurdish nationalism.

This article sheds light on the intertwined narratives of religion and nationalism in the Kurdish context, offering valuable insights into the complex historical forces that have contributed to the shaping of Kurdish identity and the enduring relationship between Kurdish nationalism and Islam.

DOI 10.56673/18294502-23.16-55

# THE EFFECTS OF CONSPIRACY THEORY SPREAD BY LEADERS DURING TIMES OF WAR: THE ROLE OF GENDER ON FOLLOWER PERCEPTIONS OF LEADER EFFECTIVENESS AND WARMTH

*Hovhannes Jijyan*[1]
*Vrije Universiteit Amsterdam*

**Abstract**
This paper investigates whether the spread of conspiracy theories by leaders during times of war has an effect on perceived leader effectiveness and warmth by followers additionally takes into account the role of gender in this exchange. Analysis demonstrates that the gender of the leader had no significant effect on followers' perceived effectiveness or warmth in all the conditions. Furthermore, conspiracy spread did not have a significant interaction with perceived effectiveness, however, conspiracy-spreading leaders were perceived as less warm compared to neutral leaders. The results led to the conclusion that based on our sample taken from the Armenian population, the leader's gender does not play a role in perceived effectiveness when delivering bad news during times of crisis.

**ARTICLE HISTORY**
Received
05 July 2023
Accepted
20 August 2023

**KEYWORDS**
Leader effectiveness; Armenia; Conspiracy theory; Gender; War
**DOI: 10.56673/18294502-23.16-55**

## Introduction

The spread of conspiracy theories has been prevalent for many years: however, recent global events, such as the COVID pandemic, which fueled distrust in governmental institutions have also contributed to a rise of a new wave of conspiracy theory spread[2]. The common definition of conspiracy theories is the conviction that a group of actors meets in secret agreement with the purpose of attaining some malevolent goal[3]. Conspiracy theories have been used as a tool by leaders who aided them in guiding their subordinates in a potentially reputation-benefiting direction while at the

[1] Vrije Universiteit Amsterdam, email: jijyanhov@gmail.com
[2] Kużelewska, Elżbieta, and Mariusz Tomaszuk. "Rise of Conspiracy Theories in the Pandemic Times." *International Journal for the Semiotics of Law - Revue internationale de Sémiotique juridique* 35, no. 6 (2022): 2375.
[3] Jeffrey M. Bale, "Political Paranoia v. Political Realism: On Distinguishing between Bogus Conspiracy Theories and Genuine Conspiratorial Politics," Patterns of Prejudice 41, no. 1 (February 1, 2007): 45–60.

same time creating societal challenges, pitting humans against humans and putting their words and ideologies into irreconcilable conflict[4]. This spread of conspiracy can have diverse effects on the perception that leaders receive: The systematical spread of conspiracy theories by leaders seems to affect followers' perceptions of their competence. A relevant example of such an effect could be seen after Joe Biden's projected victory over Donald Trump in the 2020 elections in the United States. Radical right-wing supporters used social media to fuel potential irrational reasons as to why Joe Biden won the election; one of such accusations was fraud. Despite the lack of proof, the unverified claims circulated online with equal vigor until more than 60% of Republicans were said to think that the election was rigged and that Biden won due to widespread voter fraud[5]. In this scenario, the leader (Donald Trump) did not inhibit these reactions from the public, but did quite the contrary, by fueling such accusations against the Election Board and the Democratic Party to benefit his own perception from his supporters[6]. It seemed that spreading conspiracies did not harm his reputation among his followers nor prevent him from having an impact.

Although previous studies have suggested that people who believe in conspiracy theories may be negatively evaluated (e.g., people tend to perceive those who believe in conspiracy theories as gullible)[7], other studies have argued that leaders strategically use conspiracy theories as a tool to strengthen their political power[8]. The most recent case worth mentioning is the 2020 Nagono-Karabakh war, which took place at the height of the COVID pandemic. The media was flooded with misinformation about the virus, and conspiracy theories were taking over the informational landscape[9].

[4] Jessica D'Amico, "Conspiracy Theories and Social Media: How Online Disinformation Poses a Formidable Threat to the Livelihood of Contemporary Civilization," Fisher Digital Publications, n.d.(2021).
[5] D'Amico, "Conspiracy Theories and Social Media", 2.
[6] D'Amico, "Conspiracy Theories and Social Media", 8.
[7] Quassim Cassam, "Vice Epistemology," The Monist 99, no. 2 (March 21, 2016): 159–80.
[8] Zhiying Ren et al., "Authoritarian Leaders Share Conspiracy Theories to Attack Opponents, Galvanize Followers, Shift Blame, and Undermine Democratic Institutions," Current Opinion in Psychology 46 (August 1, 2022): 101388.
[9] Karen M. Douglas, "COVID-19 Conspiracy Theories," Group Processes & Intergroup Relations 24, no. 2 (February 1, 2021): 270–75.

The physical war between the countries had an added component of digital warfare, encompassing misinformation and informational repression. It needs to be clarified what effects these tactics had on the population of both countries: did the spread of conspiracy theories affect how citizens of both countries viewed their respective leaders? And if yes, was it a negative or positive effect? These are the questions which this research will try to answer. My study will fill the gap of empirical research of conspiracy spread specifically in post-war Armenia by focusing primarily on conspiracy theory spread in the Southern Caucasus area, to evaluate the recent effects of the events which unfolded during the war, and the perceptions which were generated post-war in the Armenian population.

**Belief in Conspiracy Theories and Their Evolutionary Basis**

Most research associates conspiracy theories with misinformation, mistrust in expertise, political institutions, and propaganda while at the same time distinguishing that epistemic deficiency and often also derogatory and disparaging information are key factors in the concept of a "conspiracy theory"[10]. Conspiracy theories have been prevalent throughout human history.

The adaptive conspiracism hypothesis proposes that people inherently possess a functionally integrated mental system to detect conspiracies that, in all likelihood, have been shaped in an ancestral human environment, in which hostile coalitions (conspiracies) that truly existed were a frequent cause of misery, death, and reproductive loss[11]. A failure to detect potential conspiracies may cost more than an over-recognition, which is the basis of the error management theory. The theory predicts that although over- or underestimating potential conspiracies can be costly if a leader underestimates conspiracies, this will bear higher costs and reputational

[10] Marianna Napolitano and Kevin Reuter, "What Is a Conspiracy Theory?," Erkenntnis 88, no. 5 (September 24, 2021): 2035–62.
[11] Jan-Willem Van Prooijen and Mark Van Vugt, "Conspiracy Theories: Evolved Functions and Psychological Mechanisms," Perspectives on Psychological Science 13, no. 6 (September 19, 2018): 770–88.

damage[12]. These costs mainly depend on various social parameters, for instance if the majority of the group tends to believe in conspiracies, the several reputational costs, that can be present do not discourage the group from still believing in the conspiracy. In their research, Van Prooijen & Van Vugt proposed that conspiracy theories are directly or indirectly triggered by coalitional aggression and exploitation, and that leaders who are fast to catch on to these potential coalitions receive higher reputational gain in such environments. This reputational gain ties back to the adaptive mechanisms of the group. People tend to be overly cautious, therefore, the over-recognition done by leaders can benefit their reputational gains in times of crisis.

In the same line of reasoning, the current study proposes that leaders who are excellent at detecting potential conspiracies during intergroup conflict may be valued and rewarded with high reputation.

**Perceived Effectiveness & Warmth**

What is the reputation that leaders get by spreading conspiracy theories? Previous literature has suggested that people perceive others according to two dimensions: competence and warmth[13]. Competence refers to capability and assertiveness, and warmth refers to trustworthiness and friendliness[14]. The two-dimensional perceptions may also influence how people evaluate leaders who spread conspiracy theories, contributing to their reputations.

Leader's competence, or leadership effectiveness, is a key factor of organizational success or failure when examining the various factors that lead to organizational success [15]. The extend to which a leader is deemed as effective by their followers, seems to attribute to the success or failure of organizational goals. This same model can be translated into a more political realm, when looking at the effectiveness of a country's leader, and whether

[12] Van Prooijen & Van Vugt, "Conspiracy Theories: Evolved Functions and Psychological Mechanisms", 35.
[13] Susan T. Fiske, "Stereotype Content: Warmth and Competence Endure," Current Directions in Psychological Science 27, no. 2 (February 28, 2018): 67–73.
[14] Fiske, "Stereotype Content: Warmth and Competence Endure", 69.
[15] Mitra Madanchian et al., "Leadership Effectiveness Measurement and Its Effect on Organization Outcomes," *Procedia Engineering* 181 (January 1, 2017): 1043–48.

that has an effect on positive outcomes for the respective society and country in the eyes of the followers and the population in general. Leaders who have the ability to detect potential conspiracies may be perceived as more effective because they can manage intergroup conflict. A notable study by Avramov et al. looked at the spread of conspiracy theories as a foreign policy tool in the arsenal of modern hybrid warfare. They argued that the spread of conspiracy theories was an informational aspect in modern warfare, and coined it as "an offensive disinformation dissemination weapon for pressuring political decision-makers in selected countries at critical junctures"[16]. Their focus was on Russian foreign policy throughout the last few years, and how the isolation from the west gave Russian government agencies and media outlets a chance to "foster a steady supply of "alternative histories" and outright both ontologically false and effective conspiracy theories"[17]. He looked into the public's perception and reaction to the spread of conspiracy theories and concluded that it did have a positive effect on current leadership's ratings (effectiveness), especially in times of crises.

Warmth goes hand in hand with effectiveness and has been proven by multiple studies to be a vital factor when considering leadership quality. Leaders who spread conspiracy theories may be perceived as less warm because they communicate hostile attitudes towards members of other groups. Some studies have supported this idea. For example, spreading conspiracy theories conveys qualities such as suspiciousness, paranoia, and narcissism[18]. In a study conducted by Uscinski[19] respondents were asked to rate the "QAnon movement" (an American political conspiracy theory) on a feeling thermometer scale ranging from cold to warm. Although the

[16] Kiril Avramov, "By Another Way of Deception: The Use of Conspiracy Theories as a Foreign Policy Tool in the Arsenal of the Hybrid Warfare," Information & Security 39, no. 2 (January 1, 2018): 151–61.
[17] Avramov, "By Another Way of Deception: The Use of Conspiracy Theories as a Foreign Policy Tool in the Arsenal of the Hybrid Warfare," 154.
[18] Aleksandra Cichocka, Marta Marchlewska, and Mikey Biddlestone, "Why Do Narcissists Find Conspiracy Theories so Appealing?" Current Opinion in Psychology 47 (October 1, 2022): 101386. Jan-Willem Van Prooijen et al., "The Entertainment Value of Conspiracy Theories," British Journal of Psychology 113, no. 1 (July 14, 2021): 25–48
[19] Joseph E. Uscinski et al., "Have Beliefs in Conspiracy Theories Increased over Time?," PLOS ONE 17, no. 7 (July 20, 2022).

movement was on the rise, the results showed a decrease in support of QAnon, and cold ratings given to statements made by prominent QAnon leaders. Thus, the current study proposed that conspiracy leaders may be perceived as less warmth than neutral persons.

### The Moderating Effect of Gender

[21] Anne Crowley & Dan Moxon, *New and innovative forms of youth participation in decision-making processes,* Council of Europe, (October 2017); Analytical paper on *“Youth Participation, Young people political participation in Europe: What do we mean by participation?”*, https://pjp-eu.coe.int/documents/42128013/47261980/What+is+youth+participation.pdf/223f7d06-c766-41ea-b03c-38565efa971a, մուտք՝ 07.07.2023:

[22] Handayani M., *Samuel Philips Huntington on political participation and democracy*, Department of Political Science Kulliyyah of Islamic Revealed Knowledge and Human Science International University Malaysia, Semester 3, (2008-2009).

արդիականացման խնդիրների լուծման[23]: Առաջին հերթին, փոփոխություններ պետք է կատարվեն ինստիտուցիոնալ միջավայրում (նորմերն ու արժեքները, որոնցով կառաջնորդվեն մարդիկ իրենց քաղաքական վարքագծում): Երկրորդ, պետք է ստեղծել քաղաքական համակարգ, որը հիմնված կլինի քաղաքական բազմակարծության ու մրցակցության վրա և կկարողանա ներկայացնել և համակարգել տարբեր սոցիալական խմբերի շահերը, ապահովել քաղաքացիների՝ վերափոխմանը մասնակցելու միջոցների մոբիլիզացումը: Այն դեպքում, երբ իշխող կառավարությունը ի վիճակի չէ ստեղծել քաղաքական համակարգ, որը համապատասխանում է թվարկված պահանջներին, քաղաքացիները գտնում են իրենց ակտիվության իրագործման այլ՝ ոչ ինստիտուցիոնալ ուղիներ (բողոքարկման գործողությունները, «ուղղակի գործողություն»): Ժամանակակից քաղաքական գործընթացներն ուսումնասիրելիս որոշակի են հասարակական ակտիվության ցանցային փոփոխությունները. քաղաքական և հասարակական զարգացման գործընթացներում տեղեկատվության ընկալման միատարրությանը փոխարինել են բազմակարծությունը և խաղարկման լայն դաշտը:

Տեղեկատվական դաշտի նոր արժեքաբանությունը փոխել է ամբողջ հասարակության և մասնավորապես՝ երիտասարդության ընկալումները: Երիտասարդությունը ակտիվություն է դրսևորում ոչ միայն քաղաքականության ոլորտում, այլ նաև՝ սոցիալական արդարության ապահովման և հասարակական փոխակերպումների շրջանակներում մասնակցայնության ոլորտում: Ժամանակակից քաղաքական հաղորդակցությունը արմատապես փոխել է երիտասարդության արժեհամակարգը: Հատևաբար, արդի քաղաքական զարգացման տրամաբանությամբ պայմանավորված՝

[23] Самюэль Хантингтон, *Третья волна: Демократизация в конце XX века*, (РОССПЭН, М., 2003).

երիտասարդության սոցիալականացման գործընթացում գերակա որոշիչ դեր ունեն նոր տեղեկատվա-հաղորդակցական տեխնոլոգիաները: Հասարակությունը և մասնավորապես երիտասարդությունը զգալիորեն ավելի հետաքրքրված է քաղաքականության էստետիզացմամբ: Այլ բառերով ասած՝ քաղաքականությունն այժմ շատ նման է շոու բիզնեսին իր խաղարկայնությամբ: Այն աշխարհը, որում այժմ ապրում է երիտասարդությունը այլ է և՛ սպառողական արժեհամակարգով, և՛ ազատականությամբ, և՛ ազատության պահանջներով: Երիտասարդական բազմաթիվ շարժումներ ուղղված են ցուցադրականության ապահովմանը և մասնակիցների իմիջի ձևավորմանը, որը և բերում է նրանց զգալի պարզեցմանը:

Վստահությունը և սոցիալական համերաշխությունը ուղղակիորեն ազդեցություն են թողնում քաղաքական մասնակցության վրա, քանի որ այն կառուցվում է հորիզոնական, այլ ոչ՝ ուղղահայաց կապերի հիմքի վրա: Վստահության հարցը բավականին ցածր է երիտասարդության շրջանում: Հարվարդի և Մելբուրնի համալսարանների կողմից իրականացված հետազոտությունների համաձայն՝ երիտասարդներն ամենաքիչն են վստահում ժողովրդավարությանը, քան ցանկացած այլ տարիքային խումբ[24]: Այս իմաստով հորիզոնականությունը՝ հավասարությունը, ունի վճռորոշ ազդեցություն, քանի որ քաղաքական մասնակցության ավանդական ինստիտուցիոնալ ձևերը որպես նախապայման պահանջում են որոշակի հմտություններ, ինչն էլ հանգեցնում է հիերարխիայի՝ ուղղահայաց համակարգի: Մասնակցության ոչ ավանդական ձևերը որևէ նախապայման չունեն. կարելի է ներգրավվել սոցիալական շարժումներին առանց որևէ

[24] Harvard research suggests that an entire global generation has lost faith in democracy. Quartz. by Gwynn Guilford Published November 30, 2016, https://qz.com/848031/harvard-research-suggests-that-an-entire-global-generation-has-lost-faith-in-democracy/, մուտք՝ 10.07.2023:

պատրաստվածության, ինչն էլ բացառում է որևէ հիերարխիա. դրանք բնույթով հորիզոնական են:

Հետագայում իր զարգացումն է ստացել նաև «մասնակցային ժողովրդավարություն» (participatory democracy) հասկացությունը: Համաշխարհային կառավարումը, որը հիմնված է մասնակցային մեխանիզմների վրա, հնարավոր է ոչ միայն միջպետական ջանքերի, այլ նաև՝ համաշխարհային քաղաքացիական հասարակության, նոր և հին սոցիալական շարժումների միջև դաշինքի միջոցով[25]:

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի 2002 թվականի համաշխարհային զարգացման զեկույցում հստակ ընդգծվել է, որ պետությունները կարող են ապահովել մարդկային զարգացումը «բոլորի համար», միայն երբ կունենան այնպիսի ժողովրդավարական կառավարման համակարգ, որը, հաշվետու լինելով հանրության բոլոր անդամներին, ապահովում է մարդկանց մասնակցությունն իրենց կյանքին վերաբերող հարցերի քննարկումներին և որոշումների ընդունմանը[26]: Վերջին հետազոտությունների լայն շրջանակը նշում է, որ ընտրություններին մասնակցությունը, քաղաքական կուսակցություններին անդամակցությունը, քաղաքականության նկատմամբ հետաքրքրությունը և քաղաքական ինստիտուտների նկատմամբ վստահությունը անկում են գրանցել հատկապես երիտասարդների շրջանում[27]:

## Տեղեկատվական տեխնոլոգիաները, ԶԼՄ-ները և երիտասարդների մասնակցությունը

Համացանցի և տեղեկատվական ու հաղորդակցության տեխնոլոգիաների ազդեցությունը երիտասարդների

[25] Forbirig, “Revisiting youth political participation”, 21.
[26] *“Deepening democracy in a fragmented world”*. World Development Report, UNDP, http://hdr.undp.org/en/reports/global/hdr2002/, (2002), մուտք՝ 07.07.2023:
[27] Analytical paper on *“Youth Participation, Young people political participation in Europe: What do we mean by participation?”* .

մասնակցության վրա լայնորեն ուսումնասիրվող հիմնահարց է հասարակագիտության մեջ: Հիմնականում երկու տեսություններ կան, որոնք ուսումնասիրում են այս երկու երևույթների փոխառնչությունները՝ մոբիլիզացման տեսությունը (Mobilization theory) և ամրապնդման տեսությունը (Reinforcement theory)[28]: Մոբիլիզացման տեսությունը պնդում է, որ համացանցը կարող է նշանակալի ազդեցություն ունենալ մասնակցության վրա և հատկապես՝ համացանցը և տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաները (այսուհետ՝ ՏՀՏ) լայնորեն կիրառող երիտասարդների մասնակցության վրա, քանի որ այդ տեխնոլոգիաները կարող են 1. անկախ ֆիզիկական ներկայությունից, ինչը կարող է խոչընդոտել դեմ առ դեմ մասնակցությանը, նպաստել որոշումների կայցմանը ներգրավված լինելուն, 2. երիտասարդների մոտ մասնակցության արդյունավետության մասին իրական ընկալումներ ձևավորել. նրանք կարող են գիտակցել, որ իրենց մասնակցությունը ազդեցություն ունի որոշումների կայացման վրա, ինչն էլ կարող է նպաստել դեմ առ դեմ մասնակցությանը:

Ի տարբերություն մոբիլիզացիայի տեսության՝ ամրապնդման տեսությունը պնդում է, որ համացանցը կամրապնդի դեմ առ դեմ մասնակցության՝ գոյություն ունեցող օրինաչափությունները. նրանք, ովքեր նախկինում չեն մասնակցել, կշարունակեն չմասնակցել, մինչդեռ նրանք, ովքեր մասնակցել են անցյալում, կօգտագործեն համացանցը ավելի ներգրավված լինելու համար: Այս փաստարկը հիմնված է երկու հիմնական ենթադրության վրա. 1. մասնակցությունը՝ դեմ առ դեմ կամ առցանց, ունի սոցիալ-տնտեսական պայմանավորվածություն և որոշվում է սոցիալ-տնտեսական խոչընդոտներով, ինչպիսիք են կրթությունը և

28 Taewoo Nam, *Dual effects of the internet on political activism: Reinforcing and mobilizing*, Government Information Quarterly. (2012). № 29, 90–97.

եկամուտը, որոնք համացանցը չի կարող անմիջապես փոխել, 2. ներկայումս ոչ ակտիվ անհատները չեն դառնա ավելի մոտիվացված կամ հետաքրքրված մասնակցելու քաղաքականությանը միայն այն պատճառով, որ ի հայտ է եկել մասնակցության նոր միջոց՝ համացանցը[29]: Չնայած հակասությանը՝ այս երկու տեսությունները պնդում են, որ առկա է դրական կապ առցանց և դեմ առ դեմ մասնակցության միջև, ինչն արդեն պայմանավորված է ինքնության, որևէ խմբին պատկանելու ձգտմամբ. եթե երիտասարդը հարում է որևէ քաղաքական խմբի, հետազոտությունները ցույց են տալիս, որ նա առցանց ևս հարում է այդ խմբին, օրինակ՝ հետևում է այդ խմբի ֆեյսբուքյան էջին և այլն: Այս հանգամանքը նաև խմբերի միջև սահմանների ձևավորման, բևեռացման նպատակ ունի:

Այս երկու տեսությունների միջև բանավեճը դեռևս արդիական է, քանի որ պրակտիկ բազմաթիվ հետազոտություններ և իրադարձություններ կան, որոնք հիմնավորում են երկու տեսությունների ճշմարտացիությունը: Տեսությունները մեթոդաբանական և վերլուծական հեռանկարներ են բացում շարունակելու ուսումնասիրել համացանցի, ՏՀՏ-ների և երիտասարդների մասնակցության միջև փոխպայմանավորվածության հարցը:

Համացանցը և ՏՀՏ-ները նաև էական ազդեցություն ունեցան զանգվածային լրատվական միջոցների գործունեության, գործառույթների, տրամաբանության վրա: ԶԼՄ-ների հիմնական գործառույթը իրականության անընդհատ վերակառուցումն է[30]: Այս իմաստով պարզ է դառնում, թե որքան կարևոր գործոն է ԶԼՄ-ն երիտասարդների քաղաքական մասնակցության համար, քանի որ

---

[29] Tai, K.-T., Porumbescu, G., & Shon, J. *Can e-participation stimulate offline citizen participation: an empirical test with practical implications*, (Public Management Review, 2019), 1-19.
[30] Niklas Luhmann, *The reality of Mass media*, (January, 1996).

ԶԼՄ-ների միջոցով ներկայացված իրականության, դրա մաս կազմող քաղաքական գործընթացների հետ է անմիջականորեն առնչվում երիտասարդը՝ հատկապես համացանցի լայն տարածման արդի պայմաններում: ԶԼՄ-ն միայն տեղեկատվության հաղորդման պարզունակ գործընթաց չէ: Համակարգային տեսության ներկայացուցիչ Ն. Լուհմանը նշում է, որ համակարգերը միմյանցից տարանջատվում են կոդերով: ԶԼՄ-ի կոդը ինֆորմացիան է, որը հաղորդվում է, ավելին՝ ինֆորմացիայի յուրահատկացումը, առանձնացումը: Երբ ԶԼՄ-ն ինֆորմացիան ձևափոխում է և դարձնում հանրությանը մատուցելի, ինֆորմացիան այլևս հանդես չի գալիս նախկին տեսքով և չի համապատասխանում իրականությանը: Ստացվում է, որ ԶԼՄ-ի համակարգը ինֆորմացիան վերածում է ոչ ինֆորմացիայի: Հետևաբար, ԶԼՄ-ի կոդը ինֆորմացիա/ոչ ինֆորմացիան է: Այսինքն՝ ԶԼՄ-ն ոչ թե հատուկ մատուցում է ոչ ինֆորմացիա, այլ ուղղակի կատեգորիզացնում է ինֆորմացիան ու մեխանիկորեն ստեղծվում է ոչ ինֆորմացիա: Սա էլ կոդավորման գործընթացն է, որն իրականացնում է համակարգն իր կոդի միջոցով:

**Քաղաքական սոցիալականացում և քաղաքացիական կրթություն**

Ինչպես արդեն նշվեց, քաղաքական մասնակցությունը երիտասարդների սոցիալականացման գործընթաց է: Որպես սոցիալականացման բնականոն գործընթաց՝ երիտասարդների քաղաքական մասնակցությունը կրում է մի շարք գործոնների ազդեցությունը՝ ԶԼՄ-ների, քաղաքական համակարգի, հասարակության, ավագ սերունդների և իհարկե կրթության: Այս հատվածում քննարկվելու է, թե գրականության մեջ ինչպես է արտացոլված երիտասարդների քաղաքացիական, քաղաքական կրթության և քաղաքական մասնակցության փոխկապվածությունը:

Քաղաքացիական կրթության նպատակը երեխաների և երիտասարդների քաղաքական գրագիտության բարձրացումն է[31]: Երիտասարդների կողմից քաղաքական տեղեկատվության ստացումը և վերլուծական հմտությունների ձեռքբերումը քաղաքական կրթության կարևոր բաղկացուցիչներից են[32]: Հետաքրքրական է, որ այս իմաստով գրականության մեջ հակադրության մեջ են դրվում քաղաքացիական կրթությունը և ԶԼՄ-ները: Ինչպես արդեն նշվել է, ԶԼՄ-ները մշակում են իրականության վերաբերյալ ինֆորմացիան՝ այն վերածելով ոչ ինֆորմացիայի, հետևաբար քաղաքական կրթությունը կարող է կատարել իրականության վերաբերյալ ինֆորմացիայի ստացման համար հմտություն ձեռք բերելու գործառույթ: Պատահական չէ, որ գրականության մեջ նաև նշվում է քաղաքական կրթության մեջ թվային գրագիտության կարևորությունը՝ որպես առանցքային բաղկացուցիչ:

Քաղաքական կամ քաղաքացիական կրթությունը դիտարկվում է որպես ժողովրդավարության հասկացման և քննադատական գնահատման միջոց: Քաղաքական կրթության միջոցով երիտասարդներին է փոխանցվում, թե ինչպես է գործում քաղաքական համակարգը, ինչպես են կայացվում որոշումները, ինչպես կարելի է մասնակցել դրանց: Նաև հնարավորություն պետք է ստեղծել, որպեսզի երիտասարդները կարողանան հարցականի տակ դնել, քննադատել այդ համակարգը և գործընթացները:

## Հետազոտության մեթոդաբանություն

Հոդվածը հիմնված է դաշտային հետազոտության արդյունքների վերլուծության վրա, որի շրջանակներում կիրառվել են տեղեկատվության հավաքագրման հետևյալ մեթոդները.

---

[31] David Keer, R*e-examining Citizenship Education in England*. In Torney-Purta, J., Schwille, J. and Amadeo, J. Civic Education across countries: Twenty-four national case studies from the IEA Civic Education project, (Amsterdam, IEA., 1999).

[32] Richard Niemi and Jane Junn, *Civic education: What makes students learn?* (New Haven & London, CT: Yale University Press, 1998).

1. *Փաստաթղթերի վերլուծություն.* վերլուծության մեջ ներառվել են արևմտյան սոցիոլոգիական և քաղաքագիտական ակադեմիական գրականություն երիտասարդության սոցիոլոգիայի, երիտասարդության մասնակցության վերաբերյալ, ինչպես նաև՝ Հայաստանում իրականացված երիտասարդական ոլորտի նախկին հետազոտություններ, վիճակագրական տվյալներ:

2. Փաստաթղթային վերլուծության շրջանակներում *երկրորդային վերլուծության* են ենթարկվել Հայաստանում Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի կողմից 15-19 տարիքային խմբի երիտասարդների շրջանակներում իրականացված հարցման տվյալները[33]: Արմավիրում, Սյունիքում և Երևանում իրականացվել է քանակական առցանց հարցում 2022 թվականի նոյեմբեր-հունվար ամիսներին ընտանիքում, ուսումնական հաստատությունում, համայնքային և պետական մակարդակում որոշումների կայացմանը ավագ դպրոցի աշակերտների մասնակցության վերաբերյալ: Հետազոտության ընտրանքը կառուցվել է բազմաստիճան[34] (երկաստիճան) հավանականային[35] ներկայացուցչական ընտրանքային ռազմավարության հիման վրա: Քանակական առցանց հարցմանը մասնակցել են 9-12 դասարանի 1557 աշակերտ, 519 դասղեկ, 230 տնօրեն և 1566 ծնող:

[33] «Որոշումների կայացման գործընթացներում երիտասարդների ներգրավվածության գնահատում. հայացք հանրակրթական դպրոցի ավագ դասարանների աշակերտների, նրանց ծնողների, դասղեկների և տնօրենների կողմից» հետազոտությունն իրականացվել է «Քաղաքացիական կրթություն և մասնակցություն» ծրագրի շրջանակներում Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի կողմից Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (ԿՏԱԿ) հետ սերտ համագործակցությամբ:

[34] Բազմաստիճան ընտրանքը հավանականային ընտրանքի տեսակ է, որի ժամանակ ընտրանքի կառուցման յուրաքանչյուր աստիճանում փոխվում է ընտրանքի միավորը:

[35] Հավանականային են այն ընտրանքները, երբ գլխավոր համախմբության յուրաքանչյուր միավոր հավասար հնարավորություն ունի ընտրանքային համախմբությունում հայտնվելու համար:

3. *Հարցաթերթիկային հարցումների* իրականացում. 2022 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին իրականացվել է համապետական ներկայացուցչական հարցում (0,05-ից ոչ բարձր ընտրանքի սահմանային սխալով 0,95 նշանակալիության աստիճանի համար) բազմաստիճան կլաստերային ընտրանքով, որտեղ գլխավոր համախմբություն է հանդիսանում ՀՀ 18-35 տարիքային խմբի առկա հայաստանաբնակ երիտասարդ բնակչությունը: Հարցմանը մասնակցել է 18-35 տարեկան ՀՀ 625 երիտասարդ, ընդ որում՝ 49, 3% քաղաքաբնակ, 14.7% գյուղաբնակ և 36% երևանաբնակ: Հարցման մասնակիցների 58,1 %-ը արական, իսկ 41,9 %-ը իգական սեռի ներկայացուցիչներ են:

**Արդյունքներ և քննարկում**

Երիտասարդների քաղաքական և քաղաքացիական մասնակցության առկա վիճակը ներկայացնելու և վերլուծելու տեսանկյունից կարևոր է դիտարկել քաղաքական ընտրություններին երիտասարդների մասնակցության վիճակագրությունը: 2018 թվականի խորհրդարանական ընտրություններին կին ընտրողների 26,6%, իսկ տղամարդ ընտրողների 31.2% 18-35 տարեկան էին[36], իսկ 2021 թվականի այդ ցուցանիշը համապատասխանաբար 13.8% և 12.6% է կազմել[37]: Հետաքրքրական է նաև դիտարկել, թե որքան է կազմել ընտրություններին մասնակցության ցուցանիշը 18-35 տարիքային խմբում: Այսպես, 18-35 տարիքային խմբում ընտրությունների մասնակցության ցուցանիշը կրկնակի ցածր է՝ 50-65 տարիքային խմբի հետ համեմատած:

---

[36] Վիճակագրական տվյալներ. կանանց և տղամարդկանց մասնակցությունը 2018թ. ընտրական գործընթացներին, https://res.elections.am/images/doc/Statistics2018.pdf, մուտք՝ 02.08.2023:

[37] Վիճակագրություն. Կանանց և տղամարդկանց մասնակցությունը 2021 թ. հունիսի 20-ին, https://res.elections.am/images/doc/Statistics2021.pdf, մուտք՝ 02.08.2023:

***Գծապատկեր 1.*** *Կանանց ու տղամարդկանց մասնակցության ցուցանիշը ըստ տարիքային խմբերի (տվյալ տարիքային խմբում յուրաքանչյուր սեռի ընտրողների համեմատ)*[38]




Երիտասարդների ավանդական մասնակցության վերաբերյալ մյուս կարևոր ցուցանիշը ներգրավվածությունն է քաղաքական կուսակցություններում: Հայաստանյան երիտասարդների մասնակցության ձևերի վերաբերյալ հետազոտական տվյալները ցույց են տալիս, որ մինչ պատերազմը և հետպատերազմյան իրականությունում երիտասարդները ունեցել են պասիվ մասնակցություն, քանի որ գրեթե չի փոխվել քաղաքական կուսակցություններում երիտասարդների մասնակցության ցուցանիշը: 2022 թվականին իրականացված համապետական ներկայացուցչական հարցման տվյալներով՝ հայաստանյան 18-35 տարեկան երիտասարդների շուրջ 9%-ն է անդամակցում որևէ քաղաքական կուսակցության կամ որևէ քաղաքական շարժման:

[38] *Կանանց ընտրական վարքի առանձնահատկությունները 2021թ.-ի ազգային ժողովի և ՏԻՄ ընտրություններում,* https://oxygen.org.am/wp-content/uploads/2022/05/REPORT_Women-Electoral-Behaviour_2022_ARM.pdf, մուտք՝ 02.08.2023:

Եթե նկատի ունենանք երիտասարդների ոչ ավանդական մասնակցությունը, ապա կարող ենք նկատել, որ, օրինակ, բարեգործական միջոցառումներին և կամավորական աշխատանքներին հայաստանյան երիտասարդների ավելի մեծ մասն է մասնակցում՝ համեմատած քաղաքական որևէ կուսակցության անդամակցության հետ:




***Գծապատկեր 2***. *ՀՀ երիտասարդների մասնակցությունը, %, N=625*




***Գծապատկեր 3***. *Վերջին վեց ամիսների ընթացքում որքան հաճախ եք մասնակցել, %, N=625*

Ներկայացնելով երիտասարդների մասնակցությունն ըստ բնակության վայրի՝ նշենք, որ, ըստ 18-35 տարեկան երիտասարդների շրջանում իրականացված հետազոտության արդյունքների, երիտասարդների մասնակցությունը բարեգործական դրամահավաքներին, կամավորական աշխատանքներին, քաղաքացիական շարժումներին փոքր տարբերությամբ ավելի ակտիվ է քաղաքաբնակ, քան գյուղաբնակ երիտասարդների դեպքում: Հետաքրքրական է, որ ավելի փոքր տարիքի երիտասարդների շրջանում իրականացված հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ 15-19 տարեկան երիտասարդների մասնակցությունն էական տարբերություն չի դրսևորում՝ ըստ բնակության վայրի:

Երիտասարդների մասնակցության ամբողջական նկարագիրը բացահայտելու համար կարևոր է նաև հասկանալ, թե ինչպես են եղել մասնակցության պրակտիկաները 2020 թվականի պատերազմի ընթացքում: Հետազոտության մասնակից երիտասարդների շուրջ 17%-ը նշել է, որ մասնակցել է պատերազմին՝ որպես կամավոր թիկունքում, շուրջ 10%-ը մասնակցել է պատերազմին՝ որպես զինծառայող, 7.8%-ը ֆինանսական աջակցություն է ցույց տվել, 7.4%-ը կամավոր է եղել ռազմական որևէ միավորումում, 6.2%-ը այլ նյութական աջակություն է ցույց տվել (գույք, սնունդ, հագուստ, դեղորայք):

Հետազոտության մասնակից երիտասարդները նաև նշել են, որ իրենց համայնքի մակարդակով ևս կցանկանային, բայց չեն կարող ազդեցություն ունենալ որոշումների կայացման վրա: Առհասարակ, համայնքային մակարդակում որոշումների կայացման գործընթացում երիտասարդների մասնակցության դրական փորձառությունը շատ կարևոր և որոշիչ նշանակություն

ունի ազգային մակարդակում որոշումների կայացման գործընթացներում երիտասարդների մասնակցության վրա[39]:

15-19 տարեկան երիտասարդների շրջանում իրականացված հետազոտության համաձայն՝ հետազոտության մասնակից երեք խմբերի (աշակերտներ, դասղեկներ և տնօրեններ) կողմից որպես երիտասարդների մասնակցության օրինակներ ամենահազվադեպ նշված մասնակցության ձևը «մարզպետարաններին և համայնքապետարաններին կից երիտասարդական խորհուրդի նիստերին երիտասարդների մասնակցությունն է», իսկ ամենահաճախը նշվել է համայնքում աղբահանությունը: Հետազոտության մասնակից երիտասարդները նշել են, որ հայաստանյան հասարակությունում որոշումների կայացման գործընթացում երիտասարդները պասիվ դերակատարություն ունեն: Պետք է հաշվի առնել նաև, որ հարցմանը մասնակցել են 15-19 տարեկան երիտասարդներ, իսկ ավելի մեծ տարիքի երիտասարդները սովորաբար ավելի մեծ դերակատարում են վերագրում երիտասարդներին: Հարցմանը մասնակցած աշակերտների միայն 21.2%-ն է նշել, որ երիտասարդները հանդես են գալիս նախաձեռնողի դերում և մեծահասակների հետ համատեղ ընդունում են որոշումներ: Հետաքրքրական է, որ ծնողների կարծիքը համընկնում է աշակերտների կարծիքի հետ. ծնողների միայն 29.5%-ն է նշել, որ երիտասարդները մեծահասակների հետ համատեղ որոշումներ են ընդունում:

### Քաղաքացիական հասարակությունը և սոցիալական կապիտալը

Փորձենք նաև ներկայացնել, թե Հայաստանում երիտասարդների մասնակցության գործընթացների վրա ինչպիսին է քաղաքացիական հասարակության և հանրային վստահության

[39] Ապագա ունենալու իրավունքը. Հայաստանը վերափոխող երիտասարդությունը, ՄԱԿ-ի զարգացման ծրագիր, Հայաստան (2019)

ազդեցությունը: Քաղաքացիական հասարակությունը և հանրային վստահությունը հետպատերազմյան իրականությունում ճգնաժամային իրավիճակում են: Երիտասարդների մի մասն ունի լավատեսական, իսկ մյուս մասը՝ վատատեսական կանխատեսումներ Հայաստանի ապագայի նկատմամբ. հայաստանյան երիտասարդների վատատեսական տրամադրություններն ապագայի նկատմամբ պայմանավորված են 2020 թվականի Ղարաբաղյան պատերազմի հետևանքներով, հայաստանյան հասարակության անկայունությամբ, ուկրաինական պատերազմի հնարավոր ընդլայնմամբ և ազդեցությամբ մեր տարածաշրջանի վրա[40]: Ոլորտային հետազոտությունները վկայում են, որ քաղաքացիական հասարակության կառույցները, հասարակական կազմակերպությունները կարիք ունեն արժեքային դիրքորոշումներ ձևակերպելու և հանրայնացնելու[41]: Նման դիրքորոշումների հստակ ձևակերպումը և հանրայնացումը հնարավորություն կտա երիտասարդներին հաղորդակից լինել տարբեր արժեքային և գաղափարախոսական դիրքորոշումների և ձևավորել սեփական դիրքորոշումների համակարգ, ինչն էական ազդեցություն կարող է ունենալ երիտասարդների նշանակալի մասնակցության վրա: Սակայն երիտասարդների միայն 5%-ն է անդամակցում որևէ հասարակական կազմակերպության: Երիտասարդության շրջանում բավականին ցածր է հանրային վստահությունը: 18-35 տարեկան երիտասարդների շուրջ 60%-ը նշել է, որ պատերազմից հետո կորցրել է վստահությունը

[40] Arthur Atanesyan and Arthur Mkrtichyan, “Youth Perceptions of the War in Ukraine and its Possible Consequences (On the Case of Armenian Youth in Yerevan)”. *Journal of Sociology: Bulletin of Yerevan University*, 14, (2023): 37, 7–28.

[41] *Քաղաքացիական հասարակության ներկա վիճակը և փոփոխվող դերը հանրային քաղաքականության գործընթացներում*, հետազոտության զեկույց, Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն, (Երևան, 2022), https://e-research.am/storage/books/CSO%20Research_Current_Challenges_Margaryan_Hovakimyan_Galstyan_CERC.pdf, մուտք՝ 17.07.2023:

կառավարության նկատմամբ, իսկ 56%-ը կորցրել է վստահությունը վաղվա օրվա նկատմամբ։

**Նոր տեխնոլոգիաները և ԶԼՄ-ները**

Ընտրություններին մասնակցության վրա տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցության մասին դեռևս համալիր հետազոտություն չի արվել Հայաստանում։ Սակայն պետք է նշել, որ 2018 թվականի քաղաքական գործընթացներում երիտասարդների մասնակցության վրա էական էր սոցիալական մեդիայի ազդեցությունը[42]։ Ոլորտային հետազոտությունները փաստում են, որ նկատելի է մասնակցության թվերի նվազում երիտասարդների շրջանում։ Օրինակ՝ աշակերտները դպրոցում որոշումների կայացմանը աշակերտների մասնակցությունն առցանց հարթակների միջոցով քիչ արդյունավետ են համարում։ Հետաքրքրական է, որ մասնակցության խոչընդոտների շարքում նշվում է նաև առցանց մասնակցության հարթակների բացակայությունը։ Տեղեկատվական տեխնոլոգիաների և երիտասարդների մասնակցության փոխառնչության հարցերը բովանդակային բավականին նոր շերտեր և ուղղություններ են բացում, որոնց թվում՝ տվյալների հետ աշխատանքի հմտություններ, թվային հասանելիություն, թվային գիտելիքներ, պաշտպանվածություն ռիսկերից և այլն։

Հետազոտության մասնակից երիտասարդների փոքր մասն է, որ վստահելի և օգտակար է համարում ԶԼՄ-ները, ընդ որում՝ սոցիալական մեդիան ավելի վստահելի և օգտակար աղբյուր է համարվում երիտասարդների կողմից՝ համեմատած հեռուստատեսության, ռադիոյի և օնլայն լրատվական ալիքների հետ։

---

[42] Артур Атанесян, Влияние социальных сетей на протестное поведение (на примере Армении), *Социологические исследования*, Номер 3, (2018): 73-84, http://ras.jes.su/socis/s013216250004280-1-1 (дата обращения: 01.08.2023).




***Գծապատկեր 4.*** *Տեղեկատվության ստացման վստահելի և օգտակար աղբյուրները, %, N=625*

## Քաղաքական և քաղաքացիական կրթությունը

Հայաստանում քաղաքացիական կրթություն երիտասարդները հնարավորություն ունեն ստանալու ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության միջոցով[43]։ Սակայն, միևնույն ժամանակ, հետազոտությունները ցույց են տալիս, որ քաղաքացիական մասնակցության համար երիտասարդները դեռևս կարիք ունեն գիտելիքների և հմտությունների։ 15-19 տարեկան աշակերտների շրջանում իրականացված առցանց հարցման արդյունքները ցույց են տալիս, որ տարբեր մակարդակներում որոշումների կայացման մեջ երիտասարդներին հիմնականում խոչընդոտում են «համապատասխան ոլորտային գիտելիքի պակասը», «մոտիվացիայի բացակայությունը», «իրազեկվածության պակասը» և «փափուկ հմտությունների ոչ բավարար մակարդակը»։

[43] *Contribution of Non-Programme Countries To The Eu Youth Wiki Chapter V: Armenia Participation, Youth Partnership,* https://pjp-eu.coe.int/documents/42128013/58896112/Armenia-Youth-Wiki-Chapter-5.pdf/356ca22b-b3fe-aff1-360f-a3ee87d8779b?t=1680622827464 , մուտք՝ 21.07.2023

Աշակերտների 71.6%-ի կարծիքով՝ երիտասարդները մասնակցում են որոշումների կայացմանը նախ և առաջ գիտելիքներ, հմտություններ և սոցիալական կապեր ձեռք բերելու համար: Այս հանգամանքը կարող է պայմանավորված լինել նախ և առաջ հարցմանը մասնակցած երիտասարդների տարիքով, քանի որ ավելի մեծ տարիքի երիտասարդների շարժառիթները՝ մասնակցելու որոշումների կայացմանը, հետևյալն են՝

- նյութական բավարարվածություն,
- սոցիալական բավարարվածություն,
- քաղաքացիական բավարարվածություն և
- հանրային քաղաքականության վրա ազդելու ցանկություն[44]:




***Գծապատկեր 5.*** *Ինչո՞ւ են Հայաստանում երիտասարդները մասնակցում որոշումների կայացմանը: 15-19 տարեկան աշակերտներ, N=1557, %*

[44] Parissa Ballard, What Motivates Youth Civic Involvement? *Journal of Adolescent Research,* (2014), *29(4): 439–463.*

Կարող ենք եզրակացնել, որ ժամանակի ընթացքում արագ են փոխվում երիտասարդների քաղաքական մասնակցության ձևերը, նպատակադրումները, ինտենսիվությունը և մյուս բնութագրիչները:

Քաղաքական մասնակցության ձևերի մեջ գնալով դոմինանտ են դառնում ոչ ավանդական մասնակցության ձևերը: Այս միտումը նկատվում է նաև երիտասարդների քաղաքական մասնակցության ձևերի մեջ. բողոքի ցույցերը, սոցիալական շարժումները առավել հաճախ են հանդիպում:

Երիտասարդական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երիտասարդների համար մասնակցությունը սկսվում է համայնքային մակարդակից: Տեղական կամ համայնքային մակարդակում մասնակցության միջոցով երիտասարդները հնարավորություն են ստանում տեսնելու իրենց ներգրավվածության անմիջական ազդեցությունը, ինչը դրական նախադրյալ է ստեղծում մասնակցության փորձառությունների համար մյուս մակարդակներում՝ ազգային, միջազգային:

ՀՀ երիտասարդների մասնակցության պրակտիկաներում կարևոր գործոն է շարժառիթը. եթե դեռահասների համար մասնակցությունը գիտելիք ստանալու, սոցիալական կապիտալ ձեռք բերելու միջոց է դիտարկվում, ապա ավելի մեծ տարիքի երիտասարդները կարևորում են որոշումների կայացման վրա ազդեցություն ունենալը, պատերազմի հետևանքները հաղթահարելը:

Բնակության վայրը ազդեցություն ունի մասնակցության պրակտիկաների վրա, սակայն այն ավելի շատ բացասաբար է ազդում գյուղաբնակ երիտասարդների մասնակցության վրա 18-35 տարեկան երիտասարդների դեպքում, իսկ 15-19 տարեկան երիտասարդների դեպքում բնակության վայրը ուղղակիորեն չի ազդում մասնակցության վրա:

ՀՀ երիտասարդների մասնակցության պրակտիկաները կրում են տեղեկատվական տեխնոլոգիաների, քաղաքացիական կրթության, հանրային վստահության մակարդակի ազդեցությունը։ Ընդ որում՝ այս գործոններն ունեն էական փոխառնչություններ։ Երիտասարդների մասնակցության վրա անմիջականորեն ազդում է վստահության ճգնաժամը, որը կարելի է հաղթահարել քաղաքացիական կրթության միջոցով։

**Գրականության ցանկ**

*“Deepening democracy in a fragmented world”.* World Development Report, UNDP, http://hdr.undp.org/en/reports/global/hdr2002/, 2002

“Revisiting youth political participation. Challenges for research and democratic practice in Europe’’, ed. by Joerg Forbrig, 19, Council of Europe Publishing, 2005

Analytical paper on *“Youth Participation, Young people political participation in Europe: What do we mean by participation?”*

Atanesyan, Arthur and Mkrtichyan, Arthur, “Youth Perceptions of the War in Ukraine and its Possible Consequences (On the Case of Armenian Youth in Yerevan)”. *Journal of Sociology: Bulletin of Yerevan University*, 14, (2023): 37, 7–28

Ballard, Parissa, What Motivates Youth Civic Involvement? *Journal of Adolescent Research,* 2014, *29(4): 439–463*

*Contribution of Non-Programme Countries To The Eu Youth Wiki Chapter V: Armenia Participation, Youth Partnership,* https://pjp-eu.coe.int/documents/42128013/58896112/Armenia-Youth-Wiki-Chapter-5.pdf/356ca22b-b3fe-aff1-360f-a3ee87d8779b?t=1680622827464

Crowley, Ann and Moxon, Dan*, New and innovative forms of youth participation in decision-making processes,* https://rm.coe.int/new-and-innovative-forms-of-youth-participation-in-decision-making-pro/1680759e6a, 2017

Deželan, Tomaž, *Young People and Democratic Life in Europe: What Next After the 2014 European Elections?*, (European Youth Forum, 2015), www.youthup.eu/app/uploads/2015/11/YFJ_YoungPeopleAndDemocraticLifeInEurope_B1_web-9e4bd8be22.pdf

Farthing, Rys, *Why Youth Participation? Some Justifications and Critiques of Youth Participation Using New Labour's Youth Policies as a Case Study*, (YOUTH & POLICY, 2012)

Foucault, Michel, *The Archaeology of Knowledge and the Discourse on Language,* New York: Pantheon Books, 1972

Furlong, Andy, *Handbook of Youth and Young Adulthood: New perspectives and Agendas*. London: Routledge, 2009

Hart, Roger, *Children's participation, from tokenism to citinzenship*, UNICEF International Child Development Centre Spedale degli lnnocenti, Florence, Italy, 1992. https://www.unicef-irc.org/publications/pdf/childrens_participation.pdf

Harvard research suggests that an entire global generation has lost faith in democracy. Quartz. by Gwynn Guilford Published November 30, 2016, https://qz.com/848031/harvard-research-suggests-that-an-entire-global-generation-has-lost-faith-in-democracy/, https://doi.org/10.18356/a4137e60-en.

Handayani M., *Samuel Philips Huntington on political participation and democracy*, Department of Political Science Kulliyyah of Islamic Revealed Knowledge and Human Science International University Malaysia, Semester 3, 2008-2009

Keer, David, R*e-examining Citizenship Education in England*. In Torney-Purta, J., Schwille, J. and Amadeo, J. Civic Education across countries: Twenty-four national case studies from the IEA Civic Education project, Amsterdam, IEA., 1999

Luhmann, Niklas,*The reality of Mass media*, First published January 1, 1996

Nam, Taewoo, *Dual effects of the internet on political activism: Reinforcing and mobilizing*, Government Information Quarterly. (2012). № 29, 90–97

Niemi, Richard and Junn, Jane, *Civic education: What makes students learn?* New Haven & London, CT: Yale University Press, 1998

Siurala, Lasse, *Changing forms of youth participation. New forms of youth participation,* Biel: Switzerland, 2000

Tai, K.-T., Porumbescu, G., & Shon, J. *Can e-participation stimulate offline citizen participation: an empirical test with practical implications*, (Public Management Review, 2019), 1-19

UN-DESA, *World Youth Report 2016: Youth Civic Engagement*, (UN, 2016),

Атанесян, Артур, "Влияние социальных сетей на протестное поведение (на примере Армении)", *Социологические исследования*, Номер 3, (2018): 73-84, http://ras.jes.su/socis/s013216250004280-1-1

Галстян, Марина "The participation schemes in armenian educational system", *Вестник Российско-Армянского (Славянского) университета: гуманитарные и общественные науки*. – (Ереван, 2020). – №. 1: 127-144

Самюэль Хантингтон., *Третья волна: Демократизация в конце XX века*, (РОССПЭН, М., 2003)

Сорокин, Питирим, *Главные тенденции нашего времени*, Москва., 1997, 199.

*Կանանց ընտրական վարքի առանձնահատկությունները 2021թ.-ի ազգային ժողովի և ՏԻՄ ընտրություններում,* https://oxygen.org.am/wp-content /uploads/2022/05/REPORT_Women-Electoral-Behaviour_2022_ARM.pdf

Մարգարյան, Հռիփսիմե, «Հայաստանի երիտասարդության կառույցների դասակարգումը և քաղաքական մասնակցության հիմնախնդիրները», *Вестник Российско-Армянского (Славянского) университета: гуманитарные и общественные науки*, №. 1, (2016): 76-85

Մարդկային զարգացման ազգային զեկույց, 2018/2019, *Ապագա ունենալու իրավունքը. Հայաստանը վերափոխող երիտասարդությունը*, ՄԱԿ-ի զարգացման ծրագիր, Հայաստան, 2019 https://www.undp.org/sites/g/files/ zskgke326/files/migration/am/NHDR-ARM_sans-foreword.pdf

Սարգսյան, Առնակ, *Քաղաքական մասնակցության հիմնախնդիրները ժողովրդավարական համախմբման փուլում*, Երևան, ԵՊՀ, 2022

Վիճակագրական տվյալներ. կանանց և տղամարդկանց մասնակցությունը 2018 թվականի ընտրական գործընթացներին, https://res.elections.am/images/doc/Statistics2018.pdf

Վիճակագրություն. Կանանց և տղամարդկանց մասնակցությունը 2021 թ. հունիսի 20-ին, https://res.elections.am/images/doc/Statistics2021.pdf

*Քաղաքացիական հասարակության ներկա վիճակը և փոփոխվող դերը հանրային քաղաքականության գործընթացներում*, հետազոտության զեկույց, Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն, Երևան, 2022, https://e-research.am/storage/books/CSO%20Research_ Current_Challenges_Margaryan_Hovakimyan_Galstyan_CERC.pdf

# CIVIC AND POLITICAL PARTICIPATION OF ARMENIAN YOUTH IN THE POST-WAR REALITY: PERCEPTIONS AND PRACTICES

*Marina Galstyan*
*Faculty of Sociology, YSU*

The primary objective of this article is to conduct an in-depth analysis and presentation of the current understanding of the engagement of young individuals in civic and political processes. It seeks to elucidate the principal forms of youth participation and the main problems and challenges that influence their engagement. Furthermore, the article endeavors to shed light on the predominant issues and challenges encountered in the realm of youth political participation, with a specific focus on Armenian youth. In the contemporary context, comprehending how the domains of youth studies, policy formulation, and practical implementations address the intricate matter of youth participation has gained heightened significance. The article presents the issues of youth participation practices and elucidates the interaction between education, information technology, and civil society.

The findings of the research underscore a prevailing trend of non-traditional participation methods taking precedence in Armenia today. Among Armenian youth, there exists a lack of trust in governmental institutions, official information channels, and even in the prospects of the future at large. This prevailing sentiment significantly impacts their civic and political participation endeavors. What becomes apparent is the pressing need for platforms that facilitate youth participation and the dissemination of knowledge. Engaging at the local or community level provides young individuals with a unique opportunity to witness immediate and tangible outcomes of their involvement. This not only establishes a positive precedent for their participation on broader scales, whether at the national or international level, but also cultivates a sense of empowerment and efficacy. In the context of the Republic of Armenia, motivation emerges as a pivotal driving force shaping the participation practices of its youth. While teenagers perceive participation as a means to accrue knowledge and social capital, their slightly older counterparts place significant emphasis on using

participation as a conduit to influence decision-making processes and navigate the far-reaching aftermath of the 2020 Nagorno-Karabakh conflict.

The place of residence influences participation practices, with a more adverse impact observed among rural youth aged 18-35. Conversely, for those aged 15-19, the connection between place of residence and participation appears less pronounced. The youth participation dynamics in the Republic of Armenia are intertwined with access to information technology, the quality of civic education, and public trust levels. These factors exhibit substantial interconnections that shape the participation landscape. A critical determinant is the crisis of confidence, which directly affects youth participation. However, it's worth noting that this crisis can be effectively overcome through comprehensive civic education initiatives.

DOI 10.56673/18294502-23.16-112

# ԿԱՏԱՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ (1995-2021)

*Թագուհի Գրիգորյան*[1]
*Արևելագիտության ֆակուլտետ, ԵՊՀ*

**ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ**

1990-ականներին միջազգային գործընթացներն ու տարածաշրջանային զարգացումները նոր հնարավորություններ ստեղծեցին Կատարի համար՝ ինտեգրվելու գլոբալ աշխարհում և հաղթահարելու տարածքային ու ժողովրդագրական ռեսուրսներով պայմանավորված սահմանափակումները:

Վերջին տարիներին ածխաջրածնային ռեսուրսների և որդեգրած ճկուն քաղաքականության շնորհիվ Կատարը հայտնվել է տարածաշրջանային փոփոխությունների կիզակետում: Հոդվածի նպատակն է քննարկել Կատարի ժամանակակից արտաքին քաղաքականության ձևավորման նախադրյալները, նպատակներն ու սկզբունքները, ինչպես նաև՝ հիմնական մեթոդներն ու գործիքները, որոնց միջոցով երկիրը դարձել է տարածաշրջանի առանցքային դերակատարներից մեկը և վերածվել կարևոր առևտրատնտեսական հանգույց:

**ՀՈԴՎԱԾԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ**
Ներկայացվել է՝ 20 օգոստոս 2023
Ընդունվել է՝ 29 սեպտեմբեր 2023

**ԲԱՆԱԼԻ ԲԱՌԵՐ**
Կատար, արտաքին քաղաքականություն, անվտանգային համակարգ, ածխաջրածնային ռեսուրսներ, փափուկ ուժ, ճգնաժամ

**DOI:** **10.56673/18294502-23.16-112**

1995 թվականի հունիսի 27-ին, օգտվելով հոր՝ Խալիֆա բին Համադ ալ-Թանիի (1972-1995) բացակայությունից (նա այդ պահին Ժնևում էր), Կատարի թագաժառանգ շեյխ Համադը պալատական հեղաշրջում իրականացրեց և եկավ իշխանության: Մինչ այդ, զբաղեցնելով մի շարք պատասխանատու պաշտոններ, նրան

[1] ԵՊՀ էլ. հասցե՝ taguhi.grigoryan@edu.ysu.am

հաջողվել էր իր ձեռքում կենտրոնացնել երկրի ողջ կառավարումը, իսկ 1992 թվականին՝ նաև վերադասավորել նախարարների կաբինետը՝ փոխարինելով նրա անդամներին իր մտերիմ և վստահելի դաշնակիցներով։ Առանցքային նշանակություն ունեցավ արտաքին գործերի նախարար Համադ բին Ջասիմ բին Ջաբիր ալ-Թանիի նշանակումը, որը դարձավ Կատարի ժամանակակից քաղաքականության ճարտարապետներից մեկը[2]։

Ստեղծված իրավիճակը լեգիտիմացնելու խնդիր առաջացավ ինչպես երկրի ներսում, այնպես էլ՝ տարածաշրջանային մակարդում։ Նախկին էմիր Խալիֆա ալ-Թանին իշխանության վերադառնալու քայլեր էր ձեռնարկում՝ ապավինելով Ծոցի միապետությունների աջակցությանը։ Սակայն Կատարի հատուկ ծառայություններին հաջողվեց բացահայտել և կանխել 1995 թվականի վերջին ծրագրված հակահեղաշրջման փորձը։ 1996 թվականի փետրվարին ձախողվեց նաև «Աբու Ալի» օպերացիան, որին մասնակցում էին Բահրեյնը, Սաուդյան Արաբիան, ԱՄԷ-ն և Եգիպտոսը, իսկ Կատարում նրանց աջակցում էր Էկոնոմիկայի նախկին նախարար և ոստիկանապետ Համադ բին Ջասիմ բին Համադ ալ-Թանին, որը օպերացիայի այլ մասնակիցների հետ դատապարտվեց ցմահ ազատազրկման[3]։ Հետագա խնդիրներից խուսափելու համար Համադ բին Խալիֆան իր և իր ժառանգների իշխանության իրավահաջորդությունն ամրագրեց 2003 թվականի հանրաքվեով ընդունված մշտական սահմանադրությամբ։

Կատարի արտաքին քաղաքականության՝ սահմանադրությամբ ամրագրված սկզբունքներն են միջազգային կոնֆլիկտների խաղաղ կարգավորման ճանապարհով միջազգային

[2] Андрей Дербенев, “Катар в конце XX — начале XXI в.: динамика политических процессов,” *Вестник Московского университета. Серия* 13. *Востоковедение*, no. 1 (2019): 46.

[3] “Mā ẖafī ʾaʿẓam, Qaṭar 96… al-ğuz’ al- ṯānī,” AlJazeera Arabic, March 12, 2018, video, 48:38, https://www.youtube.com/watch?v=3bS2VRkPHcs.

խաղաղության և անվտանգության ամրապնդումը, ժողովուրդների ինքնորոշման իրավունքի սատարումը, պետությունների ներքին գործերին չմիջամտելը, խաղաղասեր ժողովուրդների հետ համագործակցությունը[4]: Գործնականում վերոնշյալ սկզբունքները հաճախ վերափոխվել են կամ անտեսվել:

Արտաքին քաղաքականության մեջ զարգացման տեսանկյունից կարելի է առանձնացնել հետևյալ փուլերը՝

1. 1995-2011 թվականներ (քաղաքական հայեցակարգի մշակում, հիմնական ուղենիշների սահմանում);
2. 2011-2013 թվականներ (ազդեցության ընդլայնում);
3. 2013-2021 թվականներ (տարածաշրջանային իրողություններին ադապտացում, ճգնաժամերի հաղթահարում):

Առաջին և երկրորդ փուլերը համընկնում են նախկին էմիր Համադ բին Խալիֆա ալ-Թանիի (1995-2013) կառավարման ընթացքին, երբ Կատարը դարձավ միջազգային և տարածաշրջանային ակտիվ խաղացող՝ հրաժարվելով սաուդական քաղաքական կախվածությունից:

## Համադ բին Խալիֆա ալ-Թանիի՝ արտաքին քաղաքականության հայեցակարգը

Համադ բին Խալիֆայի կառավարման առաջին տարիներն աչքի ընկան ներքին և արտաքին քաղաքականության կտրուկ փոփոխություններով, որոնք պայմանավորեցին քաղաքական հայեցակարգի բնույթն ու առաջնահերթությունները: Քաղաքական որոշումների կայացման ավանդական ցեղային համակարգը փոխարինվեց ճկուն մեխանիզմով, որը թույլ կտար արագ արձագանքել զարգացումներին: Իշխանությունը կենտրոնացավ

[4] Al-dustūr al-dāi'm li-dawlat Qaṭar, al-māda 7, https://www.gco.gov.qa/wp-content/uploads/2016/09/Arabic-Constitution-1.pdf .

իշխող ընտանիքի անդամներից բաղկացած փոքրաթիվ էլիտայի ձեռքում, իսկ պետական կառույցների ղեկավարումը ստանձնեցին հիմնականում բարեկամական կապերի շնորհիվ ստեղծված ցանցերը, որտեղ բացի էմիրից և արտաքին գործերի նախարար, վարչապետ Համադ բին Ջասիմ ալ-Թանիից ներգրավված էին նաև Արդյունաբերության և էներգետիկայի նախարար Աբդուլլահ բին Համադ ալ-Ատտիյան և էմիրի երկրորդ կինը՝ Մոզա բինթ Նասեր ալ-Միսնադը։

Մյուս կարևոր հանգամանքը պետություն-կրոն հարաբերությունների հարմարեցումն էր ինքնուրույն արտաքին քաղաքականության, ինչպես նաև՝ ներքին կայունության պահպանման պահանջներին։ Կատարում (ինչպես նաև Սաուդյան Արաբիայում) գերակայում է վահաբական իսլամի ավանդույթը, իսկ իշխող ընտանիքը ծագում է նույն արաբական ցեղային խմբից (Բանու Թամիմ), ինչ վահաբիզմի հիմնադիր Մուհամմադ իբն Աբդ ալ-Վահաբը[5]։

Հաշվի առնելով, որ վահաբականությունը դարձել է Սաուդյան Արաբիայի ազդեցության տարածման միջոց, իսկ ազդեցիկ կրոնագետ-իրավագետների դասը կարող է ներքին խնդիրներ առաջացնել[6]՝ Կատարը փորձեց վահաբականության իր տարբերակն առաջարկել։ Ի տարբերություն Սաուդյան Արաբիայի՝ Կատարում կրոնական դասը, ըստ էության, ներգրավված չէ քաղաքական որոշումների կայացման գործընթացում, և պետական համակարգում չկան կրոնական ինստիտուտներ՝ ինչպես, օրինակ, կրոնական ոստիկանություն։

---

[5] David Roberts, “Qatar and the Muslim Brotherhood: Pragmatism or Preference?,” *Middle East Policy* 21, no. 3 (Fall 2014): 87.

[6] Birol Baskan, Steven Wright, “Seeds of Change: Comparing State-Religion Relations in Qatar and Saudi Arabia,” *Arab Studies Quarterly* 33, no. 2 (Spring 2011): 106.

Էմիր Համադը վերացրեց զանգվածային լրատվամիջոցների գրաքննությունը, լուծարեց տեղեկատվության նախարարությունը: 1999 թվականին առաջին անգամ տեղի ունեցավ Դոհայի քաղաքային խորհրդի ընտրություն, 2002 թվականին ձևավորվեց Կրթության բարձրագույն խորհուրդը՝ որպես կրթական քաղաքականության մշակման, կրթության զարգացման ծրագրերի և դրանց վերահսկողության համար պատասխանատու բարձրագույն մարմին: Կատարը սկսեց երկրի հանրային կրթությունը զարգացնելու բարեփոխումները՝ «Կրթություն նոր դարաշրջանի համար» կարգախոսով:

2008 թվականի հուլիսին Կատարի Զարգացման պլանավորման գլխավոր քարտուղարությունը հրապարակեց «Կատարի ազգային տեսլական 2030» (Qatar National Vision 2030) փաստաթուղթը[7], որի նպատակն է տնտեսության դիվերսիֆիկացման և ածխաջրածնային պաշարների երկարաժամկետ արդյունավետ կառավարման միջոցով Կատարը վերածել առաջադեմ երկրի, ապահովել ժողովրդի և գալիք սերունդների կայուն զարգացումն ու կենսամակարդակը: Այլ կերպ ասած՝ ածխաջրածնային եկամուտները փոխակերպել ժամանակի պահանջներին համապատասխան ազդեցության լծակների: «Տեսլականը» սահմանում է հիմնական թիրախային արդյունքները, որոնց իրականացման ծրագրերն արտացոլված են Ազգային զարգացման 2011-2016, 2018-2022 թվականների ռազմավարությունների տեսքով[8]:

Արդիականացվեց նավթագազային արդյունաբերությունը՝ բազմապատկելով արտահանման ներուժը: Կատարը դարձավ աշխարհում հիմնական գազ արտահանողներից մեկը և ամենամեծ

[7] Ru’yat Qaṭar al-waṭanīa 2030, https://www.psa.gov.qa/ar/qnv1/Documents/QNV2030_Arabic_v2.pdf.
[8] ʾIstrātīǧīat al-tanmīat al-waṭanīa, https://www.psa.gov.qa/ar/nds1/pages/default.aspx.

տարածաշրջանային տրանսպորտային հանգույցը[9]: Այսինքն՝ սոցիալ-տնտեսական բարենպաստ պայմանները և երկրի ներքաղաքական կայունությունը հող նախապատրաստեցին նաև Կատարի արտաքին հաջողությունների համար։ Արտաքին քաղաքականության համար անկյունաքարային նշանակություն ունեցան հետևյալ հայեցակարգային հիմքերը։

***Անվտանգային-պաշտպանական համակարգի վերանայում.***

Հաշվի առնելով սահմանափակ ռազմական կարողությունները, ինչպես նաև՝ տարածաշրջանի ռազմաքաղաքական իրողությունները՝ Կատարի համար առաջնահերթություն էր անվտանգության ապահովումը։ Դեռևս 1980-90-ականներից տարածաշրջանում փոխվում էին ուժային կենտրոնները, և նոր հավասարակշռություն էր ձևավորվում։ Բացի դրանից, Իրաքի ներխուժումը Քուվեյթ (1990-1991) ցույց տվեց Ծոցի արաբական երկրների համագործակցության խորհրդի (ԾԱԵՀԽ) անվտանգային համակարգի թերություններն ու փոքր երկրների խոցելիությունը։ Այս պայմաններում, ձգտելով անկախ դերակատարում ստանձնել տարածաշրջանային գործընթացներում, էմիրը քայլեր ձեռնարկեց դուրս գալու համար ավանդական «սաուդական» քաղաքական ուղեգծից, ինչը հանգեցրեց Սաուդյան Արաբիայի հետ հարաբերությունների սրմանը։ Կային նաև տարածքային խնդիրներ։ 1992 թվականին Սաուդյան Արաբիան գրավել էր Ալ-Խաֆուս սահմանային կետը, և միայն 1999 թվականին ստորագրվեց սահմանազատման համաձայնագիր, որը, սակայն չթուլացրեց լարվածությունը։ 2004 թվականին Սաուդյան Արաբիայի հետ ունեցած կապերի և

[9] Игорь Петрович Сенченко, *Государство Катар: Отражения во времени* (Санкт-Петербург: Алетейя, 2020), 252.

համագործակցության պատճառով քաղաքացիությունից զրկվեցին Ալ-Մուրրա ցեղի 5000 անդամներ[10]:

Վերոնշյալ հանգամանքներից ելնելով՝ Կատարը դիմեց ԱՄՆ-ի աջակցությանը, որի ռազմական ներկայությունը դարձավ անվտանգային հիմնական երաշխիքը: 1996 թվականից Կատարում գործում է Մերձավոր Արևելքում ամերիկյան ամենախոշոր՝ Ալ-Ուդեյդ օդային ռազմաբազան, որի հարևանությամբ տեղակայված են ԱՄՆ օդային ուժերի կենտրոնական հրամանատարության, ԱՄՆ Հատուկ գործողությունների և ԱՄՆ Կենտրոնական հրամանատարության կենտրոնակայանները[11]: Այսպիսով, անվտանգային համակարգի վերանայումը բարենպաստ պայմաններ էր ստեղծում արտաքին քաղաքական նոր օրակարգի սահմանման և անկաշկանդ իրականացման համար:

***Փոխլրացնող (կոմպլեմենտար) արտաքին քաղաքականություն.***

Կատարի հակասական և հավակնոտ արտաքին քաղաքականությունը չէր կարող ընկալվել բացառապես անվտանգության և անկախության պահպանման տեսանկյունից: Անվտանգության գաղափարից անմիջականորեն բխում է տարածաշրջանում գերտերությունների մրցակցության և շահերի բախման պայմաններում դերակատարների հետ հարաբերությունները հավասարակշռելու անհրաժեշտությունը:

Ամերիկյան ներկայությունը, բնականաբար, արժանացավ տարածաշրջանի երկրների քննադատությանը, իսկ Իրանը նախազգուշացրեց, որ Կատարն առաջին թիրախը կդառնա

---

[10] Allen James Fromherz, *Qatar: A modern history* (Washington, DC: Georgetown University Press, 2012), 93.

[11] Matthew Wallin, *U.S. Military Bases and Facilities in the Middle East (*American Security Project, 2018), 7, http://www.jstor.org/stable/resrep19811.

պատերազմի դեպքում[12]: Սակայն ԱՄՆ-ի հետ ռազմավարական և դաշնակցային հարաբերությունները չխոչընդոտեցին բազմաբևեռ արտաքին քաղաքականությանը: Հարևան Իրանի հետ Կատարը բարեկամական հարաբերություններ ունի, որոնք, ըստ էության, պրագմատիկ քաղաքականության արդյունք են: Նրանք կիսում են աշխարհի գազի ամենամեծ հանքավայրերից մեկը՝ Հյուսիսային գմբեթը (Հարավային Պարս): Մյուս կողմից՝ երկկողմ հարաբերությունները կենսական նշանակություն ունեն տարածաշրջանում ուժերի հավասարակշռությունը պահպանելու տեսանկյունից: Որպես Անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամ՝ 2006 թվականին Կատարը դեմ է քվեարկել միջուկային ծրագրի զարգացման համար Իրանի դեմ պատժամիջոցների սահմանմանը: 2008 թվականին Կատարը միացել է Իրանին և Ռուսաստանին՝ հիմնելու «Գազ արտահանող երկրների ֆորումը», որի կենտրոնակայանը գտնվում է Դոհայում[13]: Միևնույն ժամանակ, կատարաիրանական ջերմ հարաբերությունները չեն խանգարել Կատարին տնտեսական կապեր հաստատել Իսրայելի հետ և 1996 թվականին իսրայելական առևտրային գրասենյակ բացել Դոհայում, որը դադարեց գործել 2009 թվականին Գազայում ռազմական գործողությունների պատճառով: Այսպիսով, առաջնորդվելով սեփական շահերով՝ Կատարը չմիացավ տարածաշրջանում ազդեցության ձգտող հակադիր բևեռներից որևէ մեկին, իսկ պրագմատիկ արտաքին քաղաքականությունը հնարավորություն տվեց Կատարին հավասարակշռել ԱՄՆ-Իրան, Իրան-Սաուդյան Արաբիա հակասությունները և այդ մրցակցային շրջանակից դուրս դառնալ ինքնուրույն գործոն:

[12] Michael Quentin Morton, *Masters of the Pearl: A History of Qatar* (London: Reaktion Books, 2020), 184.

[13] Mehran Kamrava, “Iran-Qatar Relations,” in *Security and Bilateral Issues between Iran and its Arab Neighbours,* ed. Anoushiravan Ehteshami, Neil Quilliam, Gawdat Bahgat (Cham: Palgrave Macmillan, 2017), 175.

*Միջնորդական առաքելություն.*

2007 թվականին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեային ուղղված իր ելույթում էմիր Համադ բին Խալիֆան հայտարարեց, որ «աշխարհի խոշոր հակամարտությունները չափազանց մեծ են դարձել, որպեսզի մեկ ուժ կարողանա միայնակ կարգավորել դրանք»[14]:

Սովորաբար միջնորդի դեր ստանձնող խոշոր պետությունները՝ Սաուդյան Արաբիան և Եգիպտոսը, ժամանակի ընթացքում կորցրել էին կողմերի վստահությունը՝ հաճախ սեփական շահերով առաջնորդվելու պատճառով: Մյուս կողմից՝ Կատարն ամրապնդում էր իր դիրքերը միջազգային կազմակերպություններում և հավակնում դառնալ կենսունակ այլընտրանք վերոնշյալ երկրների համար՝ դիրքավորվելով որպես անաչառ միջնորդ: Գտնվելով լարված տարածաշրջանում, որը բնութագրվում է քաղաքական, ռազմական և էթնիկ հակամարտություններով՝ Կատարը, ըստ էության, փորձել է միջնորդությունն օգտագործել՝ չեզոքացնելու իր թշնամիներին:

Միջնորդական ջանքերը կարևոր դեր են ունեցել Լիբանանում (2008), Եմենում (2008-2010), Դարֆուրում (2008-2010), Սուդանում (2009), Ջիբութի-Էրիթրեայի (2010) և պաղեստինյան (2012) հակամարտություններում: Միջնորդական դերի ստանձնումը հնարավորություն է տվել բարձրացնել Կատարի հաղորդակցական նշանակությունը, ապահովել ճանաչում և վստահություն ինչպես տարածաշրջանային, այնպես էլ՝ միջազգային մակարդակներում՝ ընդգծելով նրա անկախ արտաքին քաղաքականությունը: Դոհայի այս ռազմավարությունը միտված էր կապեր պահպանելու ինչպես համախոհ երկրների, այնպես էլ՝ հակառակորդների հետ[15]:

---

[14] "Ḫiṭāb sumūih fī al-dawra al-62 li-lǧamai'at al-'āma li-l'umam al-muttaḥida," Amiri Diwan, August 24, 2017, video, 9:42, https://www.youtube.com/watch?app=desktop&v=PPOa8mQiUbs.

[15] Babak Mohammadzadeh, "Status and Foreign Policy Change in Small States: Qatar's Emergence in Perspective," *The International Spectator* 52, no. 2 (2017): 34.

Այսպիսով, էմիր Համադի կառավարման առաջին շրջանում ձևավորված արտաքին քաղաքական նոր հայեցակարգի նպատակն էր ներգրավել երկիրն աշխարհաքաղաքական գործընթացներում և նպաստել Կատարի միջազգային հեղինակության բարձրացմանը:

## Չեզոք միջնորդից՝ ակտիվ խաղացող

Կատարի արտաքին քաղաքականությունն էական տրանսֆորմացիայի ենթարկվեց 2011-2013 թվականներին՝ «արաբական գարնան» իրադարձությունների և Մերձավոր Արևելքում ուժերի վերադասավորումների համատեքստում: Հատկանշական է, որ Ծոցի երկրներում պահպանվեց քաղաքական ռեժիմների կայունությունը, իսկ Կատարը նոր աշխարհաքաղաքական իրողություններն օգտագործեց արտաքին քաղաքականության վերանայման և տարածաշրջանային ազդեցիկ դիրքեր գրավելու ծրագրերի իրականացման համար: Այս փուլում Կատարի խնդիրն էր փոխել տարածաշրջանի ստատուս քվոն և հաստատվել որպես նոր համակարգի «ճարտարապետ»՝ ակտիվորեն աջակցելով Թունիսում, Եգիպտոսում, Սիրիայում և Լիբիայում հակաիշխանական ցույցերին, ինչն աննախադեպ էր նման փոքր պետության համար[16]: Կատարն այլ դիրքորոշում ուներ Բահրեյնում, որտեղ փոքրամասնություն կազմող սուննի իշխանության տապալումը կնշանակեր շիայական գործոնի և իրանական ազդեցության ակտիվացում: Անվտանգային շահերից ելնելով՝ Կատարը Ծոցի համագործակցության խորհրդի շրջանակներում ֆինանսական և ռազմական օգնություն տրամադրեց Բահրեյնում կայունության վերականգնման համար:

[16] Marwan Kabalan, "Actors, Structures and Qatari Foreign Policy,"*AlMuntaqa* 2, no. 2 (October/November 2019): 63.

Անկայուն ռազմաքաղաքական իրավիճակում գործելով բավականին ճկուն և արագ՝ Կատարն արտաքին քաղաքական ռազմավարության գործիքակազմը համալրեց տարածաշրջանային կրոնաքաղաքական կառույցների՝ առաջին հերթին «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության և նրան հարող իսլամիստական խմբավորումների սերտ համագործակցությամբ: Բացի այդ, Կատարը 2011-2012 թվականներին նախագահում էր Արաբական պետությունների լիգան (ԱՊԼ), որի հարթակն օգտագործեց Լիբիայում միջազգային ռազմական միջամտության, իսկ Սիրիայում՝ Բաշար ալ-Ասադի ռեժիմի դիվանագիտական մեկուսացման համար:

Կատարը որոշիչ դեր ունեցավ Մուամար Կադաֆիի ռեժիմի տապալման գործում՝ կիրառելով իր ռազմական, դիվանագիտական և քարոզչական ռեսուրսները: Այն առաջին արաբական երկիրն էր, որը 2011 թվականի մարտին ճանաչեց Լիբիայի Ազգային անցումային խորհուրդը և 6 «Միրաժ» կործանիչներ ուղարկեց՝ միանալով ՆԱՏՕ-ի գլխավորած ռազմական գործողություններին, ինչպես նաև օգնեց լիբիացի ապստամբներին ստեղծել արբանյակային հեռուստաընկերություն՝ «Լիբիա ալ-Ահրարը» (Libya al-Ahrar), որը հեռարձակվում էր Դոհայից[17]: Վարչապետ և արտգործնախարար Համադ բին Ջասիմի նախաձեռնությամբ դադարեցվեց Լիբիայի անդամակցությունը Արաբական պետությունների լիգային, ինչին հետևեց նաև Լիբիայի օդային տարածքը ոչ թռիչքային գոտի սահմանելը[18]: Արդյունքում լիբիական իրադարձությունները սկիզբ դրեցին արտաքին քաղաքականության սկզբունքների վերանայմանը: Կատարը

[17] Lina Khatib, “Qatar’s foreign policy: The limits of pragmatism,” *International Affairs* 89, no. 2 (2013): 421.
[18] Kristian Coates Ulrichsen, *Qatar and the Arab Spring* (New York: Oxford University Press, 2014), 124.

զրկվեց մինչ այդ ձեռք բերած միջնորդական հեղինակությունից, իսկ չեզոք միջնորդությունը փոխարինվեց հակամարտություններին գործուն միջամտությամբ:

Զարգացումները Սիրիայում այլ ընթացք ստացան և շուտով հանգեցրին երկարաժամկետ ճգնաժամի, որում, սակայն, Կատարը չկարողացավ այնպիսի ազդեցություն ունենալ, ինչպիսին Լիբիայում: Իրեն ներկայացնելով որպես ժողովրդավարության և ազատության պաշտպան՝ Կատարն աջակցում էր հակակառավարական ուժերին՝ միաժամանակ հանդես գալով խնդիրներն արաբական վերահսկողության ներքո պահելու կոչերով: Այնուամենայնիվ, Սիրիայի նկատմամբ քաղաքական և տնտեսական պատժամիջոցների սահմանումը, ԱՊԼ դիտորդական առաքելության գործուղումը Սիրիա որևէ արդյունք չտվեցին: Էմիր Համադ բին Խալիֆան առաջին արաբ առաջնորդն էր, որը հրապարակայնորեն աջակցեց Սիրիայում օտարերկրյա զորքերի տեղակայմանը՝ հայտարարելով, որ «որոշ զորքեր պետք է գնան սպանությունները դադարեցնելու համար»[19]:

Կատարի արտաքին քաղաքականության կարևոր բաղադրիչը դարձավ Թուրքիայի հետ հարաբերությունների ընդլայնումն ու խորացումը: Սա առաջին հերթին պայմանավորված էր աշխարհաքաղաքական և տարածաշրջանային զարգացումներով, որոնցում երկու երկրների կենսական շահերն ու առաջնահերթությունները ընդհանուր առմամբ համընկնում էին: Դաշնակցային հարաբերություններ ու ռազմավարական գործընկերություն էր ձևավորվել դեռևս այն ժամանակ, երբ իշխանության եկավ Ռեջեփ Թայիփ Էրդողանի գլխավորած

[19] "Qatar's emir suggests sending troops to Syria," AlJazeera, January 14, 2012, https://www.aljazeera.com/news/2012/1/14/qatars-emir-suggests-sending-troops-to-syria.

«Արդարություն և զարգացում կուսակցություն»-ը (ԱԶԿ)[20], որի հիմնադիրները սերտ կապեր ունեն «Մուսուլման եղբայրներ» կրոնաքաղաքական շարժման հետ։

Օգտագործելով «Մուսուլման եղբայրներ»-ի գաղափարախոսությունը՝ Կատարը և Թուրքիան ակտիվորեն միջամտում էին Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում տեղի ունեցող իրադարձություններին, օժանդակում հակակառավարական ուժերին։ Եգիպտոսում «Մուսուլման եղբայրների» իշխանության գալը թույլ տվեց Կատար-Թուրքիա դաշինքին ձևավորել Կատար-Թուրքիա-«Մուսուլման եղբայրներ» քաղաքական առանցքը, որը տարածաշրջանում գերիշխանության հաստատման հայտ ներկայացրեց։

2011-2012 թվականների ընթացքում Կատարը Եգիպտոսի կառավարությանը դրամաշնորհների տեսքով տրամադրեց 500 մլն դոլար, իսկ 2012 թվականի ամռանը՝ նախագահական ընտրություններում «Մուսուլման եղբայրների» թեկնածու Մուհամմադ Մուրսիի հաղթանակից հետո, ևս 5 մլրդ դոլար տրամադրեց՝ խոստանալով հինգ տարվա ընթացքում 18 մլրդ դոլար լրացուցիչ ներդրումներ կատարել[21]։ Չնայած 2011-2013 թվականներին արձանագրված որոշակի հաջողություններին՝ թուրք-կատարական դաշինքը ի վերջո ձախողվեց։ Փորձելով արտաքին քաղաքականությունը հարմարեցնել ստեղծված իրողություններին՝ Կատարը փաստացի խախտեց իր կողմից որդեգրված հավասարակշռման քաղաքականությունը։ Թուրքիայի

---

[20] Тимур Радикович Хайруллин, Андрей Витальевич Коротаев, “Турецко-катарский альянс в борьбе за региональное лидерство,” в *Системный мониторинг глобальных и региональных рисков,* ред. Леонид Ефимович Гринин, Андрей Витальевич Коротаев, Кира Владимировна Мещерина, (Волгоград: Учитель, 2018), 383.

[21] Kristian Coates Ulrichsen, *Qatar and the Arab Spring: Policy Drivers and Regional Implications* (Carnegie Endowment for International Peace, 2014), 15. http://www.jstor.org/stable/resrep12982.

և իսլամիստական խմբավորումների հետ բացահայտ համագործակցության պատճառով լարվեցին Կատարի և հարևան երկրների՝ Սաուդյան Արաբիայի, ԱՄԷ-ի միջև հարաբերությունները: Թուրքիայի հետ համատեղ հաջողությունները՝ մասնավորապես սերտ ռազմական և դիվանագիտական համագործակցությունը, անդրադարձան Եգիպտոս-Կատար հարաբերությունների վրա, որոնք սրվեցին, երբ 2013 թվականի հուլիսին տապալվեց նախագահ Մուհամմադ Մուրսիի վարչակարգը, ինչը կարևոր ազդակ էր՝ վերանայելու քաղաքական վարքագիծը:

**Թամիմ բին Համադ ալ-Թանի. քաղաքական նոր օրակարգ և մարտահրավերներ**

Կատարի դիրքերն աստիճանաբար թուլացան և նրան սկսեցին մեղադրել ծայրահեղականներին ֆինանսավորելու, իրավիճակը դիտավորյալ ապակայունացնելու մեջ: Ստեղծված պայմաններում 2013 թվականի հունիսին էմիր Համադ բին Խալիֆան հայտարարեց իշխանությունը որդուն՝ Թամիմ բին Համադ ալ-Թանիին փոխանցելու մասին: Սա աննախադեպ իրադարձություն էր Ծոցի միապետություններում, որն իրականում մեծապես պայմանավորված էր «արաբական գարնան» ընթացքում Կատարի քաղաքականության փաստացի ձախողմամբ և հեղինակության կտրուկ նվազմամբ:

1971 թվականին երկրի անկախությունից ի վեր Թամիմ բին Համադը միակ էմիրն է, որն իշխանության չի եկել բռնի ուժով[22]. այդուհանդերձ, նա ևս ստիպված էր դիմակայել արտաքին մարտահրավերներին: Օրակարգային խնդիրներ էին պետության

[22] Adam Hanieh, *Money, Markets, and Monarchies :The Gulf Cooperation Council and the Political Economy of the Contemporary Middle East* (New York: Cambridge University Press, 2018), 32.

միջազգային հեղինակության վերականգնումն ու հարևանների հետ հարաբերությունների կարգավորումը: Գալով իշխանության՝ Թամիմ բին Համադը նոր կառավարություն ձևավորեց՝ առաջին հերթին զրկելով Համադ բին Ջասիմին իր լայն լիազորություններից: Արտաքին գործերի նախարարի պաշտոնում առաջին անգամ նշանակվեց իշխող ընտանիքին չպատկանող Խալեդ ալ-Ատտիյան[23]: Փոխելով իշխանության առաջին դեմքերին՝ Դոհան հույս ուներ մեղմել իր դեմ դժգոհությունների ալիքը: Այնուամենայնիվ, որոշումների կայացման շրջանակը, հաղորդակցության ոչ պաշտոնական ուղիները պահպանվեցին: Նույնը մնացին արտաքին քաղաքականության հայեցակարգային սկզբունքները և քաղաքական հավակնությունները. պարզապես վերանայվեցին դիվանագիտության ոճը, ծրագրերի իրականացման մեթոդներն ու գործիքակազմը՝ ըստ տարածաշրջանային իրողությունների և փոփոխվող առաջնահերթությունների: Հատկանշական է, որ ժողովրդին ուղղված իր խոսքում նորանշանակ էմիրը, անդրադառնալով հիմնականում ներպետական հարցերին, միաժամանակ ընդգծեց. «…էմիրի անձի փոփոխությունը չի նշանակում, որ պետության մարտահրավերներն ու խնդիրները փոխվել են»[24]:

Կատարը բաց դռների քաղաքականություն էր վարում բոլոր կողմերի, այդ թվում՝ իսլամիստական շարժումների հետ հնարավոր երկխոսության համար: Օրինակ՝ 2014 թվականին Կատարի միջնորդությամբ Միացյալ Նահանգները և Թալիբանը կարողացան կազմակերպել Աֆղանստանում գերի մնացած Բ.

---

[23] Kristian Coates Ulrichsen, *Qatar and the Arab Spring* (New York: Oxford University Press, 2014), 175.

[24] "Ḫiṭāb sumūih bi-munāsabat tawalīh maqālīd al-ḥukm," Amiri Diwan, June 26, 2013, https://www.diwan.gov.qa/briefing-room/speeches-and-remarks/2013/june/26/the-inaugural-speech-of-hh-the-amir?sc_lang=ar-QA.

Բերգդալի ազատ արձակումը շարժման հինգ նախկին պաշտոնյաներին Գուանտանամոյից Դոհա տեղափոխելու դիմաց[25]:

Չնայած փոխվստահություն ձևավորելու ջանքերին՝ նոր էմիրը ստիպված էր դիմակայել Սաուդյան Արաբիայի և ԱՄԷ-ի աճող ճնշմանը: 2014 թվականի մարտի 5-ին Բահրեյնը, Սաուդյան Արաբիան և ԱՄԷ-ն հայտարարեցին, որ հետ են կանչում իրենց դեսպաններին Դոհայից՝ որպես հիմնավորում նշելով իրենց «անվտանգությունն ու կայունությունը պաշտպանելու» անհրաժեշտությունը[26]: Սա փորձ էր ստիպելու Կատարին հրաժարվել տարածաշրջանային հավակնոտ քաղաքականությունից, որն ի վերջո ավարտվեց հաշտության համաձայնագրով և հարաբերությունների վերահաստատմամբ: Կատարը սահմանափակվեց «Մուսուլման եղբայրների» մի քանի անդամների վտարելով (սա ևս Կատարին ներկայացված պահանջներից էր) և դադարեցրեց Եգիպտոսում «Ալ-Ջազիրա Մուբաշիր» հեռուստաալիքի հեռարձակումը, սակայն խորքային խնդիրները դեռևս լուծված չէին:

Կատարը շարունակում էր բազմաչափ համագործակցությունը Թուրքիայի հետ՝ դիտարկելով նրան որպես այլընտրանք և հակակշիռ Սաուդյան Արաբիա-Իրան մրցակցության համատեքստում: Թուրքական կողմի համար Կատարը ոչ միայն ազդեցության ընդլայնման հենակետ է, այլև՝ ներդրումների պահանջված աղբյուր, որն էական նշանակություն ունի տնտեսական խնդիրների լուծման տեսանկյունից: Երկկողմ հարաբերություններն ինստիտուցիոնալ հիմքերի վրա դրվեցին 2014 թվականի դեկտեմբերին Բարձրագույն ռազմավարական կոմիտեի (Higher Strategic Committee) ստեղծմամբ, որի նպատակը

[25] James Dobbins, Carter Malkasian, “Time to Negotiate in Afghanistan: How to Talk to the Taliban,” *Foreign Affairs* 94, no. 4 (2015): 57.

[26] Kristian Coates Ulrichsen, *Qatar and the Gulf crisis* (New York, Oxford University Press, 2020), 43.

տնտեսության, ներդրումների, արդյունաբերության, պաշտպանության և անվտանգության ոլորտներում համագործակցության ընդլայնումն ու զարգացումն է: 2015 թվականին Թուրքիան և Կատարը կնքեցին ռազմական կրթության, արդյունաբերության և Կատարում ռազմաբազա տեղակայելու մասին համաձայնագիր: Երկու երկրների զինված ուժերը պարբերաբար նաև համատեղ զորավարժություններ են անցկացնում:

2017 թվականի հունիսի 5-ին Սաուդյան Արաբիան, Եգիպտոսը, ԱՄԷ-ն և Բահրեյնը խզեցին դիվանագիտական հարաբերությունները Կատարի հետ և վերջինիս էմբարգո հայտարարեցին՝ մեղադրելով ահաբեկչական խմբավորումներին աջակցելու և իրենց երկրների ներքին իրավիճակն ապակայունացնելու մեջ: Կատարի և Սաուդյան Արաբիայի, ինչպես նաև՝ վերջինիս դաշնակիցների միջև առկա հակասությունները նախորդած իրադարձությունների տրամաբանական շարունակությունն էին, որոնք այս անգամ ավելի խորքային պատճառներ ունեին և երկարաժամկետ էին: Հատկանշական է, որ սրան նախորդել էր ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի այցը Էր Ռիադ, ԾԱԵՀԽ-ի և ԱՄՆ-ի համատեղ գագաթնաժողովը, որի ամփոփիչ հայտարարությունը դատապարտում էր Իրանի՝ տարածաշրջանն ապակայունացնելն ու Ծոցի երկրների ներքին գործերին միջամտելը[27]: Գագաթնաժողովից երկու օր անց Կատարի լրատվական գործակալության (Qatar News Agency) կայքում հայտնվեցին նյութեր, ըստ որոնց՝ էմիր Թամիմ բին Համադ ալ-Թանին քննադատել է Իրանի նկատմամբ ԱՄՆ-ի «թշնամական վերաբերմունքը», ընդգծել «լավ» հարաբերություններն Իսրայելի

[27] “US, GCC Summit communique condemns Iran’s regional interferences”, AlArabiya, May 22, 2017, https://english.alarabiya.net/News/gulf/2017/05/22/US-GCC-Summit-communique-condemns-Iran-s-regional-interferences.

հետ, իսկ «ՀԱՄԱՍ» խմբավորումը անվանել «Պաղեստինի ժողովրդի օրինական ներկայացուցիչ»[28]: Չնայած պաշտոնական հավաստիացումներին, որ կայքը հարձակման է ենթարկվել, և հայտարարությունները կեղծ են՝ Սաուդյան Արաբիան և նրա դաշնակիցները շտապեցին օգտագործել հարմար առիթը՝ նվազեցնելու Դոհայի քաղաքական կշիռը:

Կատարին ներկայացվեց 13 կետից բաղկացած վերջնագիր[29], որով պահանջվում էր խզել Իրանի հետ դիվանագիտական հարաբերությունները, փակել կառուցվող թուրքական ռազմաբազան, դադարեցնել ահաբեկչական, աղանդավորական և գաղափարականացված կազմակերպությունների ֆինանսավո-րումն ու նրանց հետ համագործակցությունը (մասնավորապես՝ «Մուսուլման եղբայրների», «Իսլամական պետության», «Ալ-Կաիդայի», «Ֆաթհ ալ-Շամի» («Ջաբհաթ ալ-Նուսրա») և լիբանանյան «Հիզբալլահի» հետ), դադարեցնել «Ալ-Ջազիրայի» և նրա մասնաճյուղերի, ինչպես նաև՝ պետական ֆինանսավորում ունեցող մի շարք լրատվականների գործունեությունը և այլն: Պաշտոնական Դոհան այս պահանջներն ամբողջությամբ մերժեց՝ անհիմն որակելով առաջ քաշված փաստարկները և դրանք համարելով Կատարի ինքնիշխանության բացահայտ ոտնահարում:

Սպասելիքները չարդարացան, իսկ շրջափակումը չունեցավ այն արդյունավետությունը, որն ակնկալվում էր: Դրան ուղղակիորեն նպաստեցին մի շարք գործոններ: Առաջինը Կատարի հարաբերություններն էին Իրանի և Թուրքիայի հետ, որոնք ստեղծված իրավիճակում տարածաշրջանային ազդեցությունն

[28] “Qatar says state news agency hacked after report cites emir criticising US”, BBC, May 24, 2017, https://www.bbc.com/news/world-middle-east-40026822.
[29] “Arab states issue 13 demands to end Qatar-Gulf crisis,” AlJazeera, July 12, 2017, https://www.aljazeera.com/news/2017/7/12/arab-states-issue-13-demands-to-end-qatar-gulf-crisis.

ընդլայնելու հնարավորություն էին տեսնում: Իրանն առաջին երկրներից էր, որ հումանիտար օգնություն ուղարկեց Դոհա և բաց պահեց օդային սահմանները կատարական ավիաընկերությունների համար: Իրանի աջակցությունը Կատարին պայմանավորված էր անվտանգային և տնտեսական շահերով, որոնք ստիպեցին վերանայել զգուշավոր դիրքորոշումը: 2017 թվականի նոյեմբերին Իրանը, Կատարը և Թուրքիան ստորագրեցին համաձայնագիր, որով լուծվում էր առաջին հերթին պարենային անվտանգության խնդիրը, ինչպես նաև նախատեսվում էր ընդլայնել առևտրային հարաբերությունները[30]:

Իրանի հետ հարաբերությունները ցույց տվեցին Սաուդյան Արաբիայի պարտությունը կրոնագաղափարական համատեքստում, խախտվեց սուննիական ճակատի ամբողջականությունը: Միաժամանակ շրջափակումից երկու օր անց Թուրքիայի խորհրդարանը արտահերթ նիստում պաշտոնապես վավերացրեց ռազմական համագործակցության երկու՝ ավելի վաղ ձեռք բերված համաձայնագրերը, որից հետո զորք և զինտեխնիկա ուղարկվեց Կատարի թուրքական ռազմաբազա: 2019 թվականի դեկտեմբերին բացվեց նաև թուրք-կատարական ռազմական շտաբ-կայանը, որը, ըստ Էրդողանի, «ծառայում է ոչ միայն Կատարի, այլև Ծոցի տարածաշրջանի կայունությանն ու խաղաղությանը»[31]: Հարկ է նշել, որ Թուրքիայի և ԱՄՆ-ի ռազմական ներկայությունը դարձավ ճգնաժամի խաղաղ կարգավորման երաշխավորը և էապես նվազեցրեց էսկալացիայի հավանականությունը:

[30] “Turkey, Iran and Qatar sign new trade-transport agreement,” Middle East Monitor, November 27, 2017, https://www.middleeastmonitor.com/20171127-turkey-iran-and-qatar-sign-new-trade-transport-agreement/.

[31] “Erdogan: Turkey-Qatar military base serves regional ‘stability’,” ALJazeera, November 25, 2019, https://www.aljazeera.com/news/2019/11/25/erdogan-turkey-qatar-military-base-serves-regional-stability.

Ճգնաժամային մարտահրավերները հաղթահարելու և իր քաղաքական արժեքը բարձրացնելու նպատակով Կատարն ընդլայնեց էներգետիկ ոլորտում համագործակցությունը թե՛ եվրոպական երկրների, թե՛ Հնդկաստանի և Չինաստանի հետ, նախաձեռնեց ենթակառուցվածքների զարգացման, սեփական արտադրանքը խրախուսելու ծրագրեր:

Մյուս կարևոր հանգամանքն այն էր, որ առաջ քաշված մեղադրանքներն ու պահանջները գործնականում միջազգային աջակցություն չստացան: Միասնական դիրքորոշում չկար նույնիսկ տարածաշրջանային մակարդակում: Օմանը պաշտոնապես չեզոքություն պահպանեց, բայց նաև օգնեց Դոհային շրջանցել շրջափակումը՝ միաժամանակ ֆինանսական օգուտներ քաղելով ամրապնդվող գործարար կապերից[32]: Քուվեյթը հանդես եկավ որպես հակամարտության կարգավորման միջնորդ: Շրջափակման առաջին օրերին էմիր Սաբահ ալ-Ահմադ ալ-Ջաբեր ալ-Սաբահի դիվանագիտական ջանքերն օգնեցին կանխել իրավիճակի սրումը[33]: Ճգնաժամը ցույց տվեց, որ ԾԱԵՀԽ-ը փաստացի սպառել է իրեն որպես միասնության երաշխավոր, իսկ անդամ պետություններից յուրաքանչյուրը տարածաշրջանային նոր վերադասավորումների գործընթացում առաջնորդվում է սեփական օրակարգով:

ԱՄՆ-ի և Քուվեյթի միջնորդական ջանքերն առաջընթաց գրանցեցին, և 2020 թվականի դեկտեմբերին Քուվեյթի Արտաքին գործերի նախարար Ահմեդ Նասեր ալ-Մուհամմադ ալ-Սաբահը հայտարարեց, որ բոլոր կողմերը պատրաստ են համաձայնության գալ հանուն միասնության ու կայունության[34]: Բացի դրանից,

---

[32] Megan O'Toole, "What is Oman's stance on the Qatar-Gulf crisis?," AlJazeera, December 1, 2017, https://www.aljazeera.com/news/2017/12/1/what-is-omans-stance-on-the-qatar-gulf-crisis
[33] Ulrichsen, *Qatar and the Gulf crisis*, 96.
[34] "Kuwait, US hold 'fruitful talks' on resolving Gulf crisis," Arab News, December 4, 2020, https://arab.news/baqch.

«COVID 19» համավարակի հետևանքով առաջացած համաշխարհային ճգնաժամը ստիպեց կողմերին վերանայել առաջնահերթությունները:

Ի վերջո, 2021 թվականի հունվարի 5-ին Սաուդյան Արաբիայի Ալ-Ուլա քաղաքում ԾԱԵՀԽ գագաթնաժողովում Սաուդյան Արաբիան, Եգիպտոսը, ԱՄԷ-ն ու Բահրեյնը «համերաշխության և կայունության» հռչակագիր ստորագրեցին Կատարի հետ, որով վերականգնվում էին դիվանագիտական և տնտեսական հարաբերությունները, բացվում սահմանները: Պետք է նշել սակայն, որ երկրների միջև առանցքային խնդիրները շարունակում են չլուծված մնալ, ինչն աշխարհաքաղաքական նպաստավոր իրողությունների պայմաններում կարող է հետագայում նս ճգնաժամային իրավիճակ ստեղծել: Համագործակցային հարաբերությունները կշարունակվեն, քանի դեռ «սառեցված» է Ծոցի ճգնաժամը, խնդիրները կառավարելի են և չեն հակասում տնտեսական և տարածաշրջանային շահերին: Միաժամանակ շարունակում են զարգանալ նաև Կատարի հարաբերությունները Թուրքիայի և Իրանի հետ, ինչն ակնհայտորեն հակասում է Սաուդյան Արաբիայի՝ տարածաշրջանային առաջնորդության ծրագրերին: Բացի դրանից, Կատարը և Սաուդյան Արաբիան մրցակցում են նաև ԱՄՆ աջակցության համար:

## Կատարի արտաքին քաղաքականության գործիքակազմը

Փորձելով հասնել իր արտաքին քաղաքական նպատակներին՝ Կատարը մեծապես հիմնվում է հարուստ էներգետիկ ռեսուրսների և տնտեսական հնարավորությունների վրա: Համադրելով «փափուկ ուժի» գործիքակազմն ու տնտեսական ռեսուրսները՝ Կատարն իր ածխաջրածնային եկամուտները կարողացել է վերածել քաղաքական լծակների միջազգային ու տարածաշրջանային մակարդակներում:

Կատարի՝ «փափուկ ուժի» գործիքակազմը ընդհանուր առմամբ ներառում է հետևյալը.

*<u>«Ալ-Ջազիրա» (Al Jazeera)</u>*

Կատարի վերաբերյալ դրական պատկերացում ապահովելու, միջազգային կարծիք ձևավորելու ու դրա վրա ազդելու համար 1996 թվականին էմիրի նախաձեռնությամբ ստեղծվեց «Ալ-Ջազիրա» հեռուստաընկերությունը: 2001 թվականին՝ Աֆղանստանի պատերազմի ժամանակ, «Ալ-Ջազիրան» միակ արբանյակային հեռուստաընկերությունն էր, որն ուղիղ հեռարձակմամբ ցուցադրում էր տիրող իրական վիճակը: Այն ամենաքննադատ ձայներից մեկն էր տարածաշրջանում նաև 2003 թվականին ԱՄՆ-ի՝ Իրաք ներխուժումից հետո: Պատահական չէ, որ ռազմական գործողությունների ժամանակ թիրախ դարձան նաև «Ալ-Ջազիրայի»՝ Քաբուլի և Բաղդադի գրասենյակները: Սա հանգեցրեց ԱՄՆ կառավարության և «Ալ-Ջազիրայի» միջև հարաբերությունների սրմանը, իսկ ըստ որոշ տեղեկությունների՝ Ջորջ Բուշ Կրտսերի վարչակազմը պլանավորում էր նույնիսկ ռմբակոծել Դոհայի կենտրոնակայանը[35]:

2006 թվականից գործում է նաև «Ալ-Ջազիրայի» անգլալեզու ալիքը, որը միտված է արևմտյան լսարանում հեռուստաընկերության հեղինակության աճին, մինչդեռ արաբերեն տարբերակն օգտագործվում է Կատարի շահերը տարածաշրջանում առաջ մղելու համար: Չնայած «Ալ-Ջազիրայի» անկախության վերաբերյալ կառավարության հավաստիացումներին՝ ակնհայտ է, որ ցանցն արժեքավոր դերակատարություն ունի Կատարի արտաքին քաղաքական ծրագրերում: «Ալ-Ջազիրան» «արաբական գարնան» ընթացքում

[35] Fromherz, *Qatar: A modern history*, 109.

զգալիորեն նպաստեց Կատարի ճանաչելիության բարձրացմանը և կարողացավ այն վերածել քաղաքական ազդեցության լուրջ գործոնի և պետության արտաքին քաղաքականության ոչ նյութական առանցքային ռեսուրսի:

Թեև այն հանդես է գալիս որպես «ռազմավարական հաղորդակցության» աղբյուր, այնուամենայնիվ, նաև որոշակի խնդիրներ է ստեղծում պետության համար: Պատահական չէ, որ վերջին երկու ճգնաժամերի ժամանակ (2014 և 2017) գլխավոր պահանջներից էր հեռուստաընկերության գործունեության դադարեցումը:

*«Կատարի կրթության, գիտության և համայնքային զարգացման հիմնադրամ» (Qatar Foundation)*

Գիտակրթական ոլորտը պետության կողմից դիտարկվում է որպես արտաքին քաղաքականության կարևոր գործիք: Այս առումով կարևոր նշանակություն ունի 1995 թվականից գործող «Կատարի հիմնադրամը», որն ավելի քան երկու տասնամյակի ընթացքում ամրապնդել է իր դերը՝ աջակցելու նորարար և բաց հասարակությանը, ինչպես նաև զարգացնելու կարողությունները, սոցիալական և տնտեսական բարգավաճումը գիտելիքահեն տնտեսության համար: 1997 թվականին հիմնադրամի կողմից հիմնադրվել է *Կրթության քաղաքը (Education City)*, որտեղ գործում են արևմտյան հայտնի համալսարանների մասնաճյուղեր, ինչպես նաև՝ Կատարի ազգային գրադարանը և Կատարի ակադեմիան: Կատարի հիմնադրամի նախաձեռնություններից մեկը Կրթության համաշխարհային ինովացիոն գագաթնաժողովն է, որն անցկացվում է 2009 թվականից՝ Մոզա բինթ Նասերի հովանավորությամբ: Նախաձեռնությունը միջազգային հարթակ է, որի նպատակն է վերափոխել կրթությունը նորարարության

միջոցով, խրախուսել կրթական խնդիրների հաղթահարման նոր մոտեցումները:

*Սպորտային միջոցառումներ*

Տնտեսական հնարավորությունների և ներդրումների զարգացման շնորհիվ Կատարը հավակնում է դառնալ սպորտային կենտրոն, որը պատրաստ է խոշոր միջազգային մրցումների անցկացմանը: Վերջին 15 տարվա ընթացքում Դոհան հյուրընկալել է ավելի քան 500 միջազգային սպորտային իրադարձություն՝ տարբեր մարզաձևերում և տարիքային խմբերում[36]: Կառավարությանը պատկանող «Կատարի սպորտային ներդրումային ընկերությունը» (Qatar Sports Investment Company), որը 2005 թվականին հիմնադրել է էմիր Թամիմ բին Համադ ալ-Թանին, առանցքային նշանակություն ունի: Վերջինս գնել է ֆրանսիական «Paris Saint Germain» ակումբի 70%-ը, իսկ իշխող ընտանիքի անդամ Աբդուլլահ ալ-Թանին՝ իսպանական «Málaga CF» ֆուտբոլային ակումբը[37]:

2010 թվականին Կատարը շահեց 2022 թվականին ֆուտբոլի աշխարհի առաջնությունն անցկացնելու իրավունքը՝ դառնալով հյուրընկալող առաջին արաբական և իսլամական երկիրը: Սա միջազգային վարկանիշը բարձրացնելու և զբոսաշրջային գրավիչ ուղղություն դառնալու բացառիկ հնարավորություն էր: Սակայն միջազգային հանրությունը սկսեց քննադատել Կատարին մարզադաշտերի կառուցման ժամանակ ներգաղթյալների համար ստեղծված աշխատանքային պայմանների և ընդհանրապես

[36] “Al-riyāḍa fī dawlat Qaṭar,” Government Communications Office, https://www.gco.gov.qa/ar/focus/sport/.

[37] Nawaf Al-Tamimi, Azzam Amin, Nourollah Zarrinabadi, *Qatar’s Nation Branding and Soft Power: Exploring the Effects on National Identity and International Stance* (Cham: Springer, 2023), 77.

մարդու իրավունքների ոտնահարման համար, իսկ որոշ քաղաքներ հրաժարվեցին ցուցադրել խաղերը[38]:

*«Կատարի ներդրումային հիմնադրամ» (Qatar Investment Authority)*

Արտաքին քաղաքականության ռեսուրսներից է նաև պետական ներդրումային մարմինը, որի նպատակն է վերաբաշխել պետական եկամուտները՝ նվազեցնելով տնտեսության կախվածությունն էներգետիկ ռեսուրսներից: Հիմնադրամը ներդրումներ է կատարում Եվրոպայում, ԱՄՆ-ում, Ասիայի և Խաղաղօվկիանոսյան երկրներում: Առաջնահերթ ուղղություններն են խոշոր ընկերությունների կապիտալում բաժնետոմսերի գնումը, վարկավորումը, արժեթղթերի, թանկարժեք մետաղների, արժույթների, անշարժ գույքի ձեռքբերումը և այլն:

*«Կատարի բարեգործական ընկերություն» (Qatar Charity)*

Կատարի՝ «փափուկ ուժի» ռազմավարության շրջանակներում բազմաթիվ նախագծեր են իրականացվում՝ ներառելով նաև իսլամական տարրը: Նախորդ հինգ տարվա ընթացքում բարեգործական ընկերության իրականացրած մարդասիրական և զարգացման ծրագրերի ընդհանուր արժեքը կազմել է 1,2 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ շահառուների թիվը՝ հասել 29 մլն-ի[39]: Լինելով ոչ պետական կազմակերպություն՝ այն մեծապես ֆինանսավորվում է կառավարության կողմից: Կազմակերպությանը հաճախ մեղադրում են բարեգործական նախագծերի քողի տակ հակամարտության գոտիներում (օր.՝ Պաղեստին, Սիրիա, Իրաք) իսլամիստական խմբավորումներին

[38] David MacDougall, “FIFA and Qatar 'rattled' as European football World Cup boycott gathers pace,” Euronews, November 10, 2022, https://www.euronews.com/2022/11/10/fifa-and-qatar-rattled-as-european-world-cup-boycott-gathers-pace.

[39] Qatar Charity, https://www.qcharity.org/en/qa/about.

աջակցելու և Կատարի իսլամիստական օրակարգը սպասարկելու մեջ[40]:

Ամփոփելով կարող ենք նշել, որ Կատարի արտաքին քաղաքականության փոխակերպումները պայմանավորված են տարածաշրջանի անվտանգային միջավայրի կայունությամբ և շահերի դասավորությամբ: Օտարերկրյա ռազմաբազաների տեղակայումը, ինչպես նաև հավասարակշռված հարաբերությունները տարածաշրջանային և արտատարածաշրջանային գրեթե բոլոր ուժային կենտրոնների հետ հնարավորություն են տվել Կատարին ազդեցության կենտրոն դառնալու ռազմավարություն մշակել: Այս համատեքստում առանցքային նշանակություն ունեն հարուստ էներգետիկ ռեսուրսները, որոնց շնորհիվ Կատարը կարողացել է հաղթահարել ճգնաժամային մարտահրավերները և դրանք վերածել քաղաքական ու տնտեսական կախվածությունը հարևան երկրներից նվազեցնելու հնարավորության:

[40] Kyle Shideler, Sarah Froehlke, and Susan Fischer, "Qatar Charity," *The Role of Select Non-Governmental Organizations in Doha's Support for Terrorism* (Center for Security Policy, 2017), 12. http://www.jstor.org/stable/resrep05081.6.

**Գրականության ցանկ**


Дербенев, Андрей Сергеевич. “Катар в конце XX - начале XXI в.: динамика политических процессов.” Вестник Московского университета. Серия 13. Востоковедение, no. 1 (2019): 39-53.

Сенченко, Игорь Петрович. *Государство Катар: Отражения во времени.* Санкт-Петербург: Алетейя, 2020.

Хайруллин, Тимур Радикович, Коротаев, Андрей Витальевич. “Турецко-катарский альянс в борьбе за региональное лидерство.” в *Системный мониторинг глобальных и региональных рисков.,* ред. Леонид Ефимович Гринин, Андрей Витальевич Коротаев, Кира Владимировна Мещерина, 370-428. Волгоград: Учитель, 2018.

Al-dustūr al-dāi’m li-dawlat Qaṭar, al-māda 7. https://www.gco.gov.qa/wp-content/uploads/2016/09/Arabic-Constitution-1.pdf .

“Al-riyāḍa fī dawlat Qaṭar,” Government Communications Office. https://www.gco.gov.qa/ar/focus/sport/

Al-Tamimi, Nawaf, Amin, Azzam, and Zarrinabadi, Nourollah. *Qatar’s Nation Branding and Soft Power: Exploring the Effects on National Identity and International Stance.* Cham: Springer, 2023.

“Arab states issue 13 demands to end Qatar-Gulf crisis.” AlJazeera, July 12, 2017. https://www.aljazeera.com/news/2017/7/12/arab-states-issue-13-demands-to-end-qatar-gulf-crisis.

Baskan, Birol, and Wright, Steven. “Seeds of Change: Comparing State-Religion Relations in Qatar and Saudi Arabia.” *Arab Studies Quarterly* 33, no. 2 (Spring 2011): 96–111

Dobbins, James, and Malkasian, Carter. “Time to Negotiate in Afghanistan: How to Talk to the Taliban.” *Foreign Affairs* 94, no. 4 (2015):53–64.

“Erdogan: Turkey-Qatar military base serves regional ‘stability’.” ALJazeera, November 25, 2019. https://www.aljazeera.com/news/2019/11/25/erdogan-turkey-qatar-military-base-serves-regional-stability.

Fromherz, Allen James. *Qatar: A modern history.* Washington, DC: Georgetown University Press, 2012.

Hanieh, Adam. *Money, Markets, and Monarchies :The Gulf Cooperation Council and the Political Economy of the Contemporary Middle East.* New York: Cambridge University Press, 2018.

“Ḫiṭāb sumūih bi-munāsabat tawalīh maqālīd al-ḥukm,” Amiri Diwan, June 26, 2013. https://www.diwan.gov.qa/briefing-room/speeches-and-remarks/2013/june/26/the-inaugural-speech-of-hh-the-amir?sc_lang=ar-QA.

“Ḫiṭāb sumūih fī al-dawra al-62 li-lǧamai‘at al-‘āma li-l’umam al-muttaḥida,” Amiri Diwan, August 24, 2017, video, 9:42. https://www.youtube.com/watch?app=desktop&v=PPOa8mQiUbs.

ʾIstrātīǧīat al-tanmīat al-waṭanīa. https://www.psa.gov.qa/ar/nds1/pages/default.aspx.

Kabalan, Marwan. “Actors, Structures and Qatari Foreign Policy.” *AlMuntaqa* 2, no. 2 (October/November 2019): 61–82.

Kamrava, Mehran. “Iran-Qatar Relations.” in *Security and Bilateral Issues between Iran and its Arab Neighbours,* edited by Anoushiravan Ehteshami, Neil Quilliam, and Gawdat Bahgat, 167-178. Cham: Palgrave Macmillan, 2017.

Khatib, Lina. “Qatar’s foreign policy: The limits of pragmatism.” *International Affairs* 89, no. 2 (2013): 417-431.

“Kuwait, US hold ‘fruitful talks’ on resolving Gulf crisis.” Arab News, December 4, 2020. https://arab.news/baqch.

MacDougall, David. “FIFA and Qatar 'rattled' as European football World Cup boycott gathers pace.” Euronews, November 10, 2022. https://www.euronews.com/2022/11/10/fifa-and-qatar-rattled-as-european-world-cup-boycott-gathers-pace.

Matthew Wallin, *U.S. Military Bases and Facilities in the Middle East.* American Security Project, 2018. http://www.jstor.org/stable/resrep19811.

Megan O'Toole, “What is Oman’s stance on the Qatar-Gulf crisis?”, AlJazeera, December 1, 2017. https://www.aljazeera.com/news/2017/12/1/what-is-omans-stance-on-the-qatar-gulf-crisis.

“Mā ḫafī ʾa‘ẓam, Qaṭar 96… al-ǧuz’ al- ṯānī .”AlJazeera Arabic, March 12, 2018, video, 48:38. https://www.youtube.com/watch?v=3bS2VRkPHcs.

Mohammadzadeh, Babak ."Status and Foreign Policy Change in Small States: Qatar's Emergence in Perspective." *The International Spectator* 52, no. 2 (2017):19-36.

Morton, Michael Quentin. *Masters of the Pearl: A History of Qatar*. London: Reaktion Books, 2020.

Qatar Charity, https://www.qcharity.org/en/qa/about.

"Qatar says state news agency hacked after report cites emir criticising US." BBC, May 24, 2017. https://www.bbc.com/news/world-middle-east-40026822.

"Qatar's emir suggests sending troops to Syria." AlJazeera, January 14, 2012. https://www.aljazeera.com/news/2012/1/14/qatars-emir-suggests-sending-troops-to-syria.

Roberts, David ."Qatar and the Muslim Brotherhood: Pragmatism or Preference?". *Middle East Policy* 21, no. 3 (Fall 2014): 84-94.

Ru'yat Qaṭar al-waṭanīa 2030. https://www.psa.gov.qa/ar/qnv1/Documents/QNV2030_Arabic_v2.pdf.

Shideler, Kyle, Sarah Froehlke, and Susan Fischer. "Qatar Charity." *The Role of Select Non-Governmental Organizations in Doha's Support for Terrorism*. Center for Security Policy, 2017. http://www.jstor.org/stable/resrep05081.6.

"Turkey, Iran and Qatar sign new trade-transport agreement." Middle East Monitor, November 27, 2017. https://www.middleeastmonitor.com/20171127-turkey-iran-and-qatar-sign-new-trade-transport-agreement/

Ulrichsen, Kristian Coates. *Qatar and the Arab Spring*. New York: Oxford University Press, 2014.

Ulrichsen, Kristian Coates. *Qatar and the Arab Spring: Policy Drivers and Regional Implications*. Carnegie Endowment for International Peace, 2014. http://www.jstor.org/stable/resrep12982.

Ulrichsen, Kristian Coates. *Qatar and the Gulf crisis.* New York, Oxford University Press, 2020.

"US, GCC Summit communique condemns Iran's regional interferences." AlArabiya, May 22, 2017.https://english.alarabiya.net/News/gulf/2017/05/22/US-GCC-Summit-communique-condemns-Iran-s-regional-interferences.

# TRANSFORMATION OF QATAR'S FOREIGN POLICY (1995-2021)

*Taguhi Grigoryan*
*Faculty of Oriental Studies, YSU*

Qatar's foreign policy has been occasionally adjusted in response to changes in international and regional situations. Since 1995, Qatar has gradually been moving toward a more active and ambitious direction in its foreign policy. The article aims to discuss the prerequisites, goals, and principles of Qatar's modern foreign policy, as well as the main methods and tools through which the country has become one of the key players in the region and an important trade and economic hub.

Amir Hamad's new foreign policy concept aimed to involve the country in geopolitical processes and promote Qatar's international reputation. The "Arab Spring" was a turning point for Qatar's plan to take over influential regional positions. Still, the expectations didn't come true and forced to conduct a more cautious and pragmatic policy to correct the consequences of supporting Islamist movements. Due to constructive foreign policy and rich energy resources, Qatar overcame the crisis in 2017 and turned it into an opportunity to reduce political and economic dependence on neighbouring countries.

DOI 10.56673/18294502-23.16-142

## ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

*Սահակյան, Նաիրա. Խաղաղության հայկական զինը. 1917-ի հեղափոխություններն ու Հայաստանի ապագան հայ մտավորականների ընկալմամբ, Newmag, Երևան, 2023.- 304 էջ. - («Մինասյան» մատենաշար)*

*DOI 10.56673/18294502-23.16-142*
*Ներկայացվել է՝ 22 Մայիս 2023*
*Ընդունվել է՝ 16 Օգոստոս 2023*

«Խաղաղության հայկական զինը. 1917-ի հեղափոխություններն ու Հայաստանի ապագան հայ մտավորականների ընկալմամբ» մենագրությունը պատմաքաղաքագիտական և պատմասոցիոլոգիական հետազոտության եզակի օրինակ է: Կիրառելով միջգիտակարգային մոտեցում հեղինակն հաջողել է ամբողջական պատկերացում տալ 1917 թվականին Կովկասում ընթացող գործընթացների և ժամանակաշրջանի համար գերակայող գաղափարների մասին:

Հենց սկզբից գրքի շապիկի՝ սիմվոլիզմով, կերպարներով և ընթացող գործընթացներով հագեցած կոմպոզիցիան արդեն իսկ որոշակի տեղեկություն է տրամադրում նշված ժամանակաշրջանի վերաբերյալ: Բուն գիրքը բաղկացած է ներածությունից, 4 գլխից և եզրակացությունից: Ամեն մի գլուխը ինքնին առանձին հետազոտություն է: Միաժամակ գլուխների հաջորդականությունն ու թեմաները գտնվում են միմյանց հետ տրամանաբանական և ժամանակագրական կապի մեջ:

Առաջին գլխում, որը վերնագրված է «Ռուսական Կայսրության կործանումն ու Կովկասը», հեղինակը ոչ միայն բավականին

մանրամասն ներկայացնում է հայտնի իրադարձությունները, այլև տալիս է քաղաքական հասկացությունների և եզրույթների սահմանումներ, պարզաբանում է դրանց նշանակությունն ու իմաստը տվյալ ժամանակաշրջանի համար՝ օգտագործելով պատմական սոցիոլոգիայի, հերմենևտիկայի, կոնցեպտուալ պատմության մեթոդներ, երևույթ, որը գրեթե բացակայում է հայրենի պատմագրության մեջ. սրանով հեղինակը կոտրում է հաստատված ավանդույթն առ այն, որ պատմական գիտությունը չի զբաղվում հասկացությունների սահմանմամբ:

Փետրվարյան հեղափոխությունը, որը տեղի ունեցավ մի կողմից ներքին հակասությունների սրման, մյուս կողմից՝ Առաջին աշխարհամարտի ռազմաճակատում անհաջողությունների ֆոնին, վերջ դրեց Ռոմանովների 300-ամյա կառավարմանը և միապետությունը վերածեց հանրապետության: Դարակազմիկ այս իրադարձությունն իր արձագանքը գտավ կայսրության ազգային փոքրամասնությունների և հատկապես այն ծայրամասերի համար, որոնք միաժամանակ նաև հանդիսանում էին ռազմաճակատ:

Ի թիվս կայսրության մյուս փոքրամասնությունների՝ հայերը ևս ողջունեցին միապետության կործանումն ու նոր Ռուսաստանի ստեղծումը: Հեղինակը փաստարկված ձևով ցույց է տալիս, որ հեղափոխությունը հայ գործիչների կողմից հիմնականում ընկալվում է որպես Ռուսաստանում ապրող ժողովուրդների իրավահավասարության, այլ ոչ թե պետականության վերականգնման հնարավորություն (էջ 58): Միաժամանակ հեղափոխությունն արթնացրեց պատերազմի հաղթանակի հույսը, որն անմիջականորեն կապված էր Օսմանյան և Ռուսական կայսրությունների միջև բաժանված Հայաստանի վերամիավորման ու հայության ճակատագրի հետ, ինչը նույնպես չէր ենթադրում պետականության վերականգնում, իսկ ազգային ազատագրական պայքարն ընկալվում էր որպես Արևմտյան Հայաստանի

ազատագրում: Ալեքսանդր Խատիսյանի բնորոշմամբ՝ մոտ էր «հայոց ազգային ազատագրական փայլուն արշալույսը» (էջ 57): Այս մեջբերումը բարձրացնում է մի շարք հարցեր. Ինչի՞ արդյունքում էին ձևավորվել նման համոզմունքները, ի՞նչ շահերից ելնելով կայսրությունը պետք է մեկ այլ կայսրության հետ պատերազմական նվաճումների արդյունքում ենթակա ժողովրդի համար ստեղծեր միացյալ կենսունակ տարածք: Ռուսական պաշտոնական փաստաթղթերում, բարձրաստիճան պաշտոնյաների նամակագրություններում ու հուշերում նման ծրագրերի և ռազմավարության մասին որևէ հիշատակում գոյություն չունի, ի տարբերություն հրապարակախոսական, գեղարվեստական, գրականագիտական խոսույթի, որտեղ Խաչատուր Աբովյանից մինչև Զորի Բալայան նման ծրագիրը սահմանափակվում է երազանքներով ու բարի ցանկություններով:

1917թ. Փետրվարին տիրող համընդհանուր ոգևորությունը կարճ ժամանակում վեր հանեց միջկուսակցական, միջխմբային, ինչպես նաև՝ ազգամիջյան լուրջ հակասություններ, որտեղ, Կարո Սասունիի բնորոշմամբ, «վրացին, թուրք-թաթարն ու հայը իրենց տեղն ու դերն էին որոշում» (էջ 70):

Աշխատանքի այս բացող գլխում պարզաբանվում է Հայ ազգային խորհրդի ժողովում տիրող իրավիճակը, երբ ամեն մի խումբ իր շահերն է առաջ տանում՝ ունենալով թյուր պատկերացում համաշխարհային պատերազմի ֆոնին ընթացող սրընթաց փոփոխությունների մասին, որն իր անիվների տակ ի զորու էր ճզմել ոչ միայն փոքրաթիվ ժողովուրդներին, այլև՝ հսկայական կայսրություններ: Եզակի գործիչներ, ինչպիսիք էին Ռոստոմը և Համբարձում Առաքելյանը, կանխատեսում էին ահագնացող վտանգը, սակայն նրանց ձայնը համընդհանուր էյֆորիայի պայմաններում լսելի և ընդունելի չեղավ մեծամասնության համար: Այս համատեքստում խորհրդանշական է զորավար Անդրանիկի

քննադական ելույթը, որտեղ նա ասում է.«Ժողովը չի զբաղվում հայ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող հարցերով, այլ կուսակցական հաշիվներով ու կրքերով է առաջնորդվում: Մեր առջև ցցված է հայ ժողովրդի ֆիզիկական կացությունը պահպանելու մեծ հարցը. դուք այս մասին կարծես չեք մտահոգվում և տարված եք միմիայն սոցիալիստական գաղափարներով» (էջ 74): Այս դրվագը լավագույնս ցույց է տալիս խնդիրների գնահատման տեսանկյունից պայմանական հայ էլիտայի և ժողովրդի միջև գոյություն ունեցող անջրպետը, երևույթ, որին ականատես ենք լինում նաև այսօր:

Երկրորդ գլխում հեղինակը հստակորեն ցույց է տալիս, թե ինչ պայմաններում, ինչ կրթական հաստատություններում ու միջավայրում էին ձևավորվել հայ մտավորականության պատկերացումներն ու համոզմունքները սոցիալիզմի տարբեր դրսևորումների, ընթացող գործընթացների և ապագայի տեսլականի վերաբերյալ: Շատերի համար գերակայող է դառնում կարծիքն առ այն, որ սոցիալիզմի հաղթանակը կլուծի հայկական հարցը (էջ 86): Ավելին, հեղինակը բավականին մանրամասն վերլուծում է սոցիալիզմի գաղափարի հիմնական տեսաբանների (Մարքս, Լենին, Պլեխանով և այլք) մոտեցումները, սոցիալիզմի տարբեր հոսանքների ու ուղղությունների (ուտոպիստական սոցիալիզմ, մարքսիզմ, լենինիզմ, սոցիալ անարխիզմ և այլն) ձևավորման հիմքերը, դրանց միջև առկա լուրջ հակասությունները: Սկսած 19-րդ դարի կեսերից՝ հայ մտավորականությունը անմասն չէր սոցիալիստական գաղափարախոսության վերաբերյալ քննարկումներից: Ավելին՝ Եվրոպայում ձևավորվող սոցիալիստական կուսակցություններին զուգընթաց հայկական միջավայրում նույնպես ձևավորվում են նմանատիպ կուսակցություններ: Հեղինակի բնորոշմամբ հայ կուսակցությունների առաջացումը պետք է դիտարկել

սոցիալիստական կուսակցությունների աճի համատեքստում (էջ 88-89): Մենք իմանում ենք, որ հայ մտավորականության շրջանում ուսյալ ու գրագետ գործիչների ու գաղափարների կրողների պակաս չի եղել, սակայն միաժամանակ անկախությանն ու պետականության գաղափարի նկատմամբ թերահավատությունը առկա է մեծամասնության մոտ: Նույնիսկ իրենց ազգային համարող կուսակցությունները ավելի հակված էին տեսնել երկիրը հզոր պետության կազմում: Հետաքրքրական է այն, որ, անկախ սոցիալիզմի ուղղությունից, սոցիալիզմի բոլոր տեսաբանների համար կենտրոնական են համարվում կապիտալի, դրա բաշխման, արտադրական ուժերի, բանվոր դասակարգի, դասակարգային պայքարի հարցերը, երևույթներ, որոնք հայ բնակչության համար (հատկապես Կովկասյան Հայաստանի տարածքում) օբյեկտիվ կերպով ոչ միայն չէին հասունացել, այլ որոշ առումով նույնիսկ բացակայում էին: Հայ մտավորականների շրջանում ընթացող ազգ թե՞ դասակարգ բանավեճը բավականին դիպուկ բնորոշում է հայ գործիչների՝ ժամանակի միտումներին ու տենդենցներին տուրք տալու, դրանցից անմասն չմնալու և առաջադեմ լինելու ցանկությունը:

Ավելի քան արդիական է երկրորդ գլխում ներկայացված ՀՅԴ գործունեության լուսաբանումը խորհրդահայ և ամիրկահայ պատմագրության կողմից, ինչը ցույց է տալիս պատմական գիտության և պրոպագանդայի տարբերությունը:

Երրորդ գլուխը, որը կոչվում է «Լենինն ու Արևմտյան Հայաստանի խնդիրը», հեղինակը ցույց է տալիս լենինյան հայացքների զարգացումն ու կերպափոխումը պատերազմի, խաղաղության, ազգային հարցի, դասակարգային պայքարի վերաբերյալ: Լենինը համոզված էր, որ պատերազմն ինքնին կայսերապաշտական բնույթ է կրում, և, հետևաբար, պետք է պատերազմել ընդդեմ բուրժուաների: Վերը նշված հարցերի շուրջ

բավականին դրամատիկ ձևով ներկայացված է դեռ 1914 թ. Լոզանում Լենինի և Պլեխանովի միջև տեղի ունեցած բանավեճը, որտեղ Պլեխանովը, չդավաճանելով բանվոր դասակարգի շահերը, միաժամանակ հանդես էր գալիս պատերազմում պաշտպանվող կողմերի (Ռուսաստան, Ֆրանսիա) հաղթանակի դիրքերից: Իսկ Լենինը պնդում էր, որ պատերազմը ծառայում է բուժուազիայի զարգացման համար, և սոցիալիստի իրական քայլը պետք է լինի կեղծ ազգային պատերազմի դեմ պայքարը, որը կարող է վերածվել բանվոր և իշխող դասերի վճռական բախման (էջ 136): Լենինյան նման մոտեցումն իր վերջնական ձևավորումը ստացավ «հաշտություն առանց բռնակցումների և փոխհատուցումների» հայեցակարգում, որը ձևավորվել էր ազգերի ինքնորոշման սկզբունքի հիման վրա:

Հայ մտավորականության շրջանում լենինյան և պլեխանովյան մոտեցումները քննարկվել են, և բնականաբար մեծամասնության համար պլեխանովյան մոտեցումը եղել է ավելի ընդունելի: Խնդիրը մեծ հաշվով առնչվում էր Արևմտյան Հայաստանի տարածքում ռուսական զորքերի ներկայության կամ դուրս բերելու հարցին (էջ 137): Նման դիտարկումը շատ դիպուկ բնորոշում է իր ժամանակաշրջանին հատուկ և հետագայում հայ քաղաքական մտքի տրամաբանության մեջ արմատացած այն միտումը, որը թե՛ լոկալ, թե՛ գլոբալ գործընթացները բացառապես գնահատում է հայամետ կամ հակահայ մոդելով՝ միաժամանակ հրաժարվելով տեսնել ավելի լայն պատկերը: Կարևոր է Միլյուկովի և Լենինի հեռակա բանավեճը տվյալ հայեցակարգի կիրառման վերաբերյալ, որտեղ երկու կողմն էլ շահարկում են Արևմտյան Հայաստանի հարցը, սակայն միաժամանակ դեմ են արտահայտվում Արևմտյան Հայաստանի՝ Կովկասյան Հայաստանին միանալուն (էջ 143):

Դատելով գլխում բերվող բազմաթիվ գրավոր աղբյուրներից՝ հայ մտավորականության շրջանում բավականին լավ էին

պատկերացնում լենինյան հայեցակարգի աղետալի հետևանքները Արևմտյան Հայաստանի ճակատագրի համար: Նույնիսկ հայ բոլշևիկների մոտեցումը լենինյան հայեցակագի վերաբերյալ միանշանակ չէր. վերջիններիս ջանքերն ուղղված էին արդարացնելու իրենց առաջնորդի մոտեցումը՝ պնդելով, որ ռուսական զորքերի դուրսբերումը կոչված է թուրքահայերին փրկել ռուս բուժուազիայի չարաշահումներից (էջ 164):

Հատկանշական է Վահան Տերյանի և Լենինի զրույցը տվյալ խնդրի մասին: Տերյանի խոսքերով՝ Լենինն իր հայեցակագում ամենևին նկատի չունի Արևմտյան Հայաստանից զորքը հանել առանց հայերի ցանկության: Բնութագրելով Լենինին և Տրոցկուն՝ Տերյանը առաջինին ներկայացնում է որպես լավ և բարի, իսկ երկրորդին՝ չար և կծու, ինչը ցույց է տալիս հայ մեծ պոետի քաղաքական միամտությունը (էջ 163): Սա կարևոր է հասկանալու համար, որ հայ գործիչները և մտավորականները հստակ պատկերացնում էին ընթացող գործընթացների աղետալի հետևանքները, սակայն լենինյան մոտեցման հաղթանակի դեպքում չունեին իրատեսական սեփական օրակարգ այս հարցերի վերաբերյալ:

Չորրորդ գլխում, որը վերնագրված է «Ինքնավարության որոնումներում. ազգ, լեզու, տարածք», հեղինակը, վկայակոչելով ոլորտի մասնագետներին, սահմանում է ինքնավարություն, ազգ, լեզու հասկացությունները, տալիս է դրանց դասակարգումն ու տիպաբանությունը: Գլխում շատ կարևոր կերպով ներկայացված են կոմունիստական կուսակցության՝ հատկապես Ստալինի մոտեցումները ազգային հարցի վերաբերյալ, որը ազգային պայքարը դիտարկում էր որպես բուժուազիայի պայքար սեփական շահերի համար՝ քողարկված ազգայինով, ինչը մարդկանց շեղում էր իրական դասակարգային պայքարից (էջ 172): Ստալինյան մոտեցումը ազգային հարցի լուծումը դիտարկում է տարածքային

ինքնավարության ներդրման շրջանակներում: Այս մոտեցումը, ձևակերպված լինելով տեսականորեն և հետագայում կիրառվելով գործնականում, ստեղծեց լուրջ խնդիրներ, որոնց հետևանքները մինչ օրս որոշիչ դեր են խաղում տարածաշրջանային գործընթացներում:

Մանրամասն ներկայացված են հայ գործիչների և գիտնականների՝ Մանանդյանի, Չիլինգարյանի, Նժդեհի, Շահումյանի մոտեցումները: Դրանք իրավամբ կարելի է համարել 20-րդ դարի հայ քաղաքական մտքի կարևոր գոհարներ, որոնք նյութի խորությամբ և հիմնավորվածությամբ հետ չեն մնում իրենց եվրոպացի գործընկերների գաղափարներից: Այս գլխում վերլուծվում է իրենց արդիականությունը չկորցրած զույգ հասկացությունների՝ պատրիոտիզմ-նացիոնալիզմի և ինտերնացիոնալիզմ-կոսմոպոլիտիզմի իրարամերժ բնույթը, պարզաբանվում են հայ տարբեր քաղաքական կուսակցությունների և հոսանքների պատկերացումները ինքնավարության տարբեր դրսևորումների վերաբերյալ:

1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո, որը հռչակեց ազգերի ինքնորոշման իրավունքը, ավելի կարևորվեցին ազգային, տարածքային, լեզվական խնդիրները, քանի որ տվյալ իրավունքը կյանքի կոչելը ենթադրում էր ունենալ մի շարք հարցերի պատասխաններ, իսկ իրավունքի իրականացումը անխուսափելիորեն հանգեցնելու էր տարածաշրջանի ժողովուրդների միջև բախումների, ներքին հակասությունների ու արտաքին միջամտության:

Գլխում փայլուն կերպով ներկայացված են լեզվի կարևորության՝ որպես ինքնության պահպանման գործիքի, մյուս կողմից՝ կայսերական լեզվական քաղաքականության հարցերը, ժամանակի հայ գիտնականների՝ պատմաբան Մանանդյանի և լեզվաբան Մալխասյանցի կարևոր դիտարկումները: Թե՛

կայսերական, թե՛ խոհրդային շրջանում և թե՛ մեր օրերում լեզվական քաղաքականությունը կայսրությունների համար մնում է արդիական ինտեգրացիայի, ասիմիլյացիայի, լեզվակիրների իրավունքների պաշտպանության, առաջխաղացման և զարգացման առումներով:

Առավել քան արդիական են գլխում ներկայացված տարածքի՝ որպես հայրենիք ընկալումը և Կովկասյան Հայաստանը ճակատ,- Արևմտյան Հայաստանը՝ թիկունքմոդելի դիտարկումը՝ ակամա համեմատական անցկացնելով այսօրվա պատումների հետ, երբ որպես թիկունք ընկալվում է Հայաստանի Հանրապետությունը, իսկ ճակատը Արցախն է: 20-րդ դարի հայ քաղաքական մտքին հատուկ աշխարհաքաղաքական տերմինաբանությունը, լինի դա թիկունք-ճակատ, ֆորպոստ թե բաստիոն, սեպ թե ողնաշար, ակամայից երկրի տարածքը դիտարկում է որպես ռազմավարական նշանակություն ունեցող կռվան, բնականոն կյանքի համար բարձր ռիսկային գոտի, արտաքին ուժերի հակամարտության թատերաբեմ: Նման մոտեցումը պետության նկատմամբ, որի կարևորագույն տարրերից է տարածքը, վերջինիս զրկում է ինքնուրույն սուբյետայնությունից՝ երկրի տարածքը վերածելով օբյեկտի:Գլխում ներկայացված Չիլինգարյանի մոտեցումը, ինչպես նաև՝ Քաջազնունու ելույթը այսպես կոչված «ռեալ պոլիտիկի» հստակ դրսևորումներ են, ինչը, ավաղ, շատ ուշ է տեղի ունեցել մեր քաղաքական էլիտայի շրջանում:

Եզրակացության մեջ հեղինակը բարձրացնում է ուսումնասիրության թերևս կարևորագույն հարցը, այն է՝ որտե՞ղ սխալվեցինք:

Ի թիվս նշված կարևոր արդյունքների՝ նաև պետք է բարձր գնահատել բազմալեզու հարյուրավոր աղբյուրների, արխիվային նյութերի կիրառությունը, հեղինակի գիտական մոտեցումը՝ երևույթները բացատրել գիտական տեսությունների

շրջանակներում: Նաև պետք է փաստել, որ գրքում ներկայացված են մոռացության մատնված մի շարք հայկական կուսակցություններ, խմբեր, կառույցներ և գործիչներ. հատկապես կարևոր է Հայ Ժողովրդական կուսակցության, Սպեցիֆիկների, Հայ սոցիալ-դեմոկրատ բանվորական կուսակցության հիշատակումը, ինչը անհրաժեշտ է ժամանակի ամբողջական պատկերը հասկանալու համար:

Որոշ դիտարկումներ, որոնք հեղինակը կարող է հաշվի առնել աշխատանքի երկրորդ հրատարակության դեպքում: Նախ՝ հետաքրքիր կլիներ իմանալ, թե հայ մտավորականների շրջանում բացի սոցիալիզմներից ու ռուսական կողմնորոշումից արդյոք առկա էին այլ կարծիքներ երկրի ապագայի, զարգացման մոդելների, անվտանգության վերաբերյալ: Ցանկալի կլիներ տվյալ ուսումնասիրության շրջանակներում անդրադառնալ վերը նշվածի վերաբերյալ ժամանակի հակասական գործիչներից Ռուբեն Տեր-Մինասյանի մոտեցումներին, որը չէր բացառում Թուրքիայի հետ համագործակցությունը: Նման մոտեցումը, իհարկե, թե՛ հուզական, թե՛ օբյեկտիվ առումներով դժվարընդունելի է, սակայն մյուս կողմից քաղաքականությունը հնարավորի արվեստն է, և հատատված թեորեմ ը, որ քաղաքականության մեջ չկան հավերժ թշնամիներ և բարեկամներ, այլ կան շահեր, թույլ կտար խուսափել «չարյաց փոքրագույնն» «ընտրելուց», որն իրականում ընտրության հնարավորության բացակայության արդյունք էր:

Ի թիվս մտավորականության շրջանում ընթացող գաղափարական քննարկումների՝ կարևոր կլիներ իմանալ հայ եկեղեցու և հոգևորականության շրջանում գերակայող կարծիքն ընթացող գործընթացների վերաբերյալ:

Եվ վերջապես, աշխատանքը կհարստանա, եթե ուսումնասիրվի և համեմատական կերպով ներկայացվի նաև

կայսրության այլ ժողովուրդների պայքարը, կիրառած մարտավարությունը, հաջողության և պարտության պատճառները:

Տվյալ դիտարկումները որևէ կերպ չեն նսեմացնում աշխատանքի գիտական արժեքը: Աշխատանքը կարևոր է թե՛ ժամանակաշրջանն ուսումնասիրող պատմաբանների, թե՛ քաղաքական գաղափարախոսություններով ու գործընթացներով հետաքրքրվող քաղաքագետների և սոցիոլոգների համար:

Որպես վերջաբան՝ ցանկանում եմ նշել հետևյալը. որևէ գաղափարախոսություն, որևէ հայեցակարգ և տեսլական, որևէ կողմնորոշում ու ռազմաքաղաքական դաշինք, որևէ պայմանագիր և միջազգային որևէ կազմակերպության անդամակցություն դեռ չեն ենթադրում ինքնըստինքյան լուծումներ պետության ինքնիշխանության և անվտանգության ապահովման համար: Դրանք կարող են լինել սոսկ գործիքներ, բայց ոչ երբեք՝ նպատակ: Հստակ ձևակերպված նպատակին, այն է՝ պետության անկախության, ինքնիշխանության և անվտանգության ապահովումը, տարածքի զարգացումն ու բնակչության կենսունակության բարձր աստիճանի ապահովումը, կարելի է հասնել ինստիտուտների և գործուն մեխանիզմների ստեղծմամբ: Նման ուսումնասիրությունը գեներացնում է այն կիրառական գիտելիքը, որը կոչված է ծառայելու գերնպատակին:

*Սևակ Քարամյան*

*Հետազոտող*

*Երևանի Պետական Համալսարան*

*sevakkaramyan@gmail.com*

2023

Analytical Bulletin
of
Center for Culture and Civilization Studies Foundation

Tel: (37460) 710594
E-mail: analyticalbulletin@cccs.am.
www.cccs.am
https://analytical-bulletin.cccs.am/index.php/ab/about